

## ՄՈՎՍԵՍ ԱՊԵՐԸ

Մարկոս Մարգարյանի հարկի տակ այդ երեկո այնպիսի մի թեժ մենամարտ էր սկսվել, որ, ինչպես ժողովուրդն է ասում՝ կարգին մարդն իր թշնամուն անգամ չէր ցանկանա:

Մասնակցում էին ինքը՝ Մարկոս Մարգարյանը, միջահասակ, գիրանալու հակված, խոր ընկած պողպատագույն աչքերով և բացարձակապես ճաղատ գլխով մի մարդ, որն այդ ճաղատությունն ասես թե առավել ընդգծելու համար չորս հատ մագ ձախ քունքից աճեցրել, բարձրացրել ու էժանագին կիթառի լարերի նման ճակատով մեկ ձգելով խնամքով տարել, փաթաթել էր ձախ քունքի մազերին:

Եվ նրա կինը՝ տիկին Սիրարփին, որը գիշերային ծաղկանախշ խալաթը հագին՝ արագ-արագ ետ ու առաջ էր քայլում այն բազկաթոռի առջևով, որի խորքում խրվել-մնացել էր Մարկոս Մարգարյանը, յուրաքանչյուր շրջադարձին ատելությամբ լի մի հայացք էր նետում ամուսնուն և տալիս ճիշտ միևնույն հարցը.

- Դե, ասա, հիմա ի՞նչ պետք է անենք, դե, ասա ...

Մարկոս Մարգարյանը չէր պատասխանում: Քսանհինգ տարվա իր ամուսնական մարաթոնի ընթացքում նա սովորել էր, թե երբ կարելի է պատասխանել տիկին Սիրարփին և երբ՝ ոչ: Դրանից բացի, վիթխարի համբերություն ուներ այդ մարդը, որը ձեռք էր բերել իրավաբանական սանդուղքի աստիճանների վրա: Նա իր հասցեին ուղղված այնպիսի հարցեր ու բացականչություններ էր լսել դատական վերին և ստորին ստյանների նիստերի ժամանակ և առանձնապես մեղադրյալների վերջին խոսքերում, որ նրանց համեմատությամբ տիկին Սիրարփինի բռնկումները իրիկնային մեղմ զեփյուռ էին հիշեցնում:

Նա հանգիստ ու անվրդով սպասեց, մինչև լիովին դատարկվի տիկնոջ զայրույթի մարտկոցը, և երբ «Դե, ասա, հիմա ի՞նչ պիտի անենք» հարցի մեջ արցունք հայտնվեց, կամացուկ ասաց.

- Կապրենք:

Կինն ուզեց բարկանալ, բայց այլևս չկարողացավ և ուժասպառ ընկավ բազկաթոռին:

- Ինչպե՞ս կապրենք, մարդ,- շշնջաց նա:

- Ինչպես ուրիշները,- ասաց Մարկոս Մարգարյանը:- Սիրարփի, սիրելիս, ես ինչպե՞ս կարող էի մերժել հորս: Ինքդ էլ գիտես, որ մայրիկի մահից հետո նա գյուղում լրիվ միայնակ է մնացել:

- Ինչո՞ւ է միայնակ,- հևաց տիկին Սիրարփին,- քույր անի, զարմիկներ ունի, բարեկամներ ունի...

- Եվ ունի հարազատ որդի,- ձայնը բարձրացրեց Մարկոս Մարգարյանը:- Իսկ այդ հարազատ որդին էլ որոշ չափով խիղճ ունի, ամոթ ունի և վախ ունի: Եվ երբ մեր գյուղացիները հոգեհացի ժամանակ մխիթարում էին հորս, գիտե՞ս ինչ էին ասում: Ասում էին՝ մխիթարվիր, Մովսես ապեր, Մարկոսի նման որդի ունես, մարդը տասնհինգ տարի իր գոքանչին էր պահում, հարազատ հորը չի՞ պահի, ինչ է...

- Ջոքանչի՞ն, այսինքն՝ իմ մո՞րը:

- Հա:

- Եվ այդ դո՞ւ էիր պահում իմ մորը:

- Իհարկե:Բա ո՞վ:

- Իմ մայրն էր քեզ պահում, Մարկոս տղա,- գայրույթի մարտկոցները արագորեն լցնելով, կրկին վեր թռավ տիկին Սիրարփին:- Իմ խեղճ մայրն էր պահում քեզ էլ, ինձ էլ, երեխաներին էլ: Իմ խեղճ մայրը ստրուկ էր այս տանը, սպասուհի էր և լվացարար, աղբ թափող էր և խոհարար, էլեկտրիկ էր և փականագործ և, ի վերջո, տան կողպեք էր իմ մայրը, Մարկոս տղա:Համա թե համեմատելու բան գտար:

- Իսկ իմ հայրը կողպեք չի՞ կարող լինել, ինչ է,- վիրավորված հարցրեց ամուսինը:

- Եվ, ուրեմն, կարելի է համեմատել իմ մոր հե՞տ,- հարցրեց կինը:

- Չէ, իհարկե,- խեղճացավ ամուսինը:

Իր կեսդարյա կյանքի ընթացքում Մարկոս Մարգարյանը սովորել էր մի քանի անհերքելի ճշմարտություններ, որոնցից ամենաանառարկելին այն էր, որ եթե ցանկանում ես խաղաղություն լինի տանդ, պետք է ընդունես, կամ պետք է վարպետորեն ձևացնես, թե ընդունում ես, որ կնոջդ ազգականները քննադատությունից վեր են: Որ նրանք բոլորովին ուրիշ են: Շատ լավն են: Չափազանց լավն են: Որ կնոջդ ծնողները աստվածներ են, եղբայրները հրեշտակներ, քույրերը աղավնիներ, քեռիներն ու հորեղբայրները բարերարներ, մորաքույրերն ու հորաքույրները սրբեր և նույնիսկ, ասենք, կնոջդ հին հարևաններին չի կարելի համեմատել քո ծնողների հարևանների հետ, որովհետև նրանք բոլորովին ուրիշ են:

- Մի՞ թե ես դա չեմ ընդունում,- բազկաթոռից բարձրացավ Մարկոս Մարգարյանը:- Եթե ոչ, ինչու է մեր պատից քո մոր նկարը կախված և ոչ թե իմ մոր: Եվ մի՞ թե ես չեմ ամենամեծ քարը դրել քո մոր գերեզմանին: Ասա, ասա, ամբողջ գերեզմանատանը այդքան մեծ քար կա՞ :

Տիկին Սիրարփին մեղմացավ:

- Ինչ ճիշտ է, ճիշտ է,- ասաց նա:- Բայց ինչո՞ւ ես ասում քո մոր,

մի՞ թե իմ մայրը քո մայրը չի եղել:

- Եղել է,- ասաց Մարկոս Մարգարյանը,- շատ է եղել, այսինքն՝ ավելին է եղել: Թող այդ ծանր քարը թեթև լինի մեր մայրիկի գերեզմանի վրա:

- Հա,- զգացվեց տիկին Սիրարփին,- և իզուր ես կարծում, թե ես քո մայրիկի մասին չեմ մտածել: Բայց նախ քո մայրիկը անձնագրի նկարից մեծ նկար չունեիր, հետո՞ ինքդ ասա, մեր պատերի վրա տեղ կա՞, որ նրա նկարը կախենք:

Մարկոս Մարգարյանը նայեց պատերին: Ամենուրեք գորգեր էին, ճապոնական կլոր և քառակուսի մատուցարաններ, դարերի համար դրվագված պղնձե և մեքիորե հարթաքանդակներ, աշխատող և չաշխատող ժամացույցներ, Մյունխենում տպագրված Հնդկաչինի քարտեզը, ճապոնական հին գունավոր օրացույցներ... Իրոք, որ մայրիկի նկարի համար տեղ չկար պատերին:

- Չկա,- ասաց Մարկոս Մարգարյանը:- Դու իրավացի ես,

Սիրարփի... Բայց եթե մայրիկի նկարի համար պատերի վրա տեղ չկա, գոնե պատերի մեջ մի տեղ պիտի գտնենք հայրիկի համար: Հոգեհացի ժամանակ մեր գյուղացիները գիտե՞ս ինչ էին ասում, ասում էին՝ դու ինչի ես մտածում, Մովսես ապեր, հարսդ մեծահոգի, ազնվական կին է...

- Այո, - համաձայնեց տիկին Սիրարփին,- գազան չեմ: Ինձ էլ է մայր բերել և ես էլ եմ հայր ունեցել: Բայց հիմա դու ասա, որտե՞ղ պետք է ապրի քո հայրը, տեղը ցույց տուր, Մարկոս: Ճաշասենյակում հարմա՞ր է:

- Ոչ, ի՞նչ ես ասում:

- Մեր ննջարանի մասի՞ն ինչ կասես:

- Ոչինչ:

- Արշակի սենյակն՞ում:

- Բացառված է:

- Մարինեի սենյակում հնարավո՞ր է:

- Չէ, իհարկե:

- Ուրեմն էլ որտե՞ղ պետք է ապրի, Մարկ, ասա, ես չեմ, դու ես, ասա ...

- Պատշգամբում :

- Որտե՞ղ:

- Պատշգամբում: Փակ, տաք տեղ է: Թախտը դրված: Ինքն էլ թախտի սովոր: Թող ապրի հայրիկը, ի՞նչ կլինի:

Տիկին Սիրարփին ամուսնուն նայեց ապշած.

- Բա Տուզի՞կը,- հարցրեց նա:

- Ներողություն, Սիրարփի, բայց եթե ես ինձ թույլ տայի քո պատվական հորը շան հետ համեմատել, կասկած չունեմ, որ դու իրավացիորեն կվիրավորվեիր:

Կինը ձեռքերը իրար խփեց շփոթված:

- Շո՞ւն, ի՞նչ շուն, Տուզիկը մեր ընտանիքի անդամն է:

- Նահլաթ քեզ, չար սատանա, - հանկարծ իր հովիվ պապերի լեզվով բղավեց իրավաբանը:– Տուզիկը մեր ընտանիքի անդամն է: Իսկ իմ հայրը...

- Քո հայրը... Ինչ անեմ, վզից բռնեմ դո՞ւրս շարտեմ...

- Ում,- իրեն կորցրած գոռաց Մարկոս Մարգարյանը:

- Տուզիկին, ո՞ւմ,- ճշտեց տիկին Սիրարփին,- գիտե՞ս թե դրա՛ համար մեզ ինչ կանեն: Նախ, ես չեմ կարող ապրել առանց Տուզիկի: Երկրորդը՝ Մարինեն կթողնի դպրոցը: Իսկ ամենակարևորը՝ Տուզիկը ազնվական ծագում ունի, նրա պապն ու տատը գեղեցկության չեմպիոններ են եղել, նրա անունը գրանցված է շների պաշտպանության հանրապետական ընկերության ոսկե գրքում...

Մարկոս Մարգարյանը տնքաց.

- Շների պաշտպանության ընկերություն... Իսկ ծնողների պաշտպանության ընկերություն չկա :

- Եթե կարիք լիներ, կստեղծեին, - ասաց տիկին Սիրարփին - Ուրեմն, չկա: Եվ, վերջապես, դու ինչպե՞ս կարող ես դեն նետել Տուզիկին, եթե փաստորեն նրա հայրն ես: Մի՞ թե հայրը կարող է լքել իր զավակին:

- Ես այդ... շան հայ՞րն եմ,- գունատվեց իրավաբանը:– Խելքդ թոցրի՞ր, այ կին:

Սիրարփին չպատասխանեց: Բացելով հունգարական պահարանի դարակներից մեկը, նա այնտեղից փայլուն ստվարաթղթի մի կտոր հանեց ու մեկնեց ամուսնուն:

- «Տուզիկ Մարկոսի Մարգարյան», - հեգելով ու աչքերին չհավատալով՝ կարդաց դժբախտ հայրը:– Եվ ո՞վ է այս խուլիզանության հեղինակը:

- Շների պաշտպանության ընկերությունը,- ծիծաղեց Սիրարփին,- նրանք շներին չեն գրանցում և թույլ չեն տալիս օգտվելու զանազան արտոնություններից, եթե այդ շան խնամակալը հայտնի չէ: Դրա համար էլ ստիպված եղանք քո անունը գրել:

- Շատ շնորհակալություն մեծ պատվի համար,- մրմնջաց Մարկոս Մարգարյանը,- իսկ ես ապրում էի ինձ համար, իմ կարծիքով միանգամայն մարդավարի, մտքովս էլ չանցկացնելով, որ ազգակցական այդպիսի սերտ կապ ունեմ շների հետ: Շատ շնորհակալություն: Պատկերացնում եմ, թե որքան կուրախանան իմ կուլեզաները, երբ նրանց հայտնի դառնա, որ ես շան խորթ հայր եմ:

- Դու խորթ չես,- ասաց տիկին Սիրարփին,- դու հարազատ հայր ես: Եվ քո կուլեզաները բոլորովին չեն զարմանա, որովհետև նրանցից շատերը ևս շների հայրեր են: Ես նրանց հաճախ եմ հանդիպում շնաբույժի մոտ և մրցումներում: Ըստ որում, չէր խանգարի, որ առիթն

օգտագործելով ավելի մոտենալիք ձեր նախագահի տեղակալ Սիրունյանի հետ, որովհետև նրա Բեքին և մեր Տուզիկը կարող են հիանալի գույգ կազմել և ապագա չեմպիոնների ծնողներ դառնալ:

Երկար ժամանակ լուռ էին՝ ամեն մեկը խորասուզված իր մտքերի մեջ: Ի վերջո տիկին Սիրարփին ցնցեց գլուխը...

- Ոչ, ոչ,- ասաց, նա,- երևի պատասխանելով իրեն ամենից շատ տանջող հարցին:- Մարինեն կխելագարվի:

- Գիտե՞ս ինչ,- առիթից օգտվեց Մարկոսը,- որպեսզի չխելագարվի, թող Տուզիկին հենց իր սենյակում պահի Մարինեն: Ի՞նչ կլինի:Գոնե ժամանակավոր: Ես համոզված եմ, որ հայրիկն այստեղ չի դիմանա: Առանց այդ էլ հազիվ համոզեցի, որ գա... Ա... այսինքն, ինքն ուզում էր, բայց... աշխատելով սխալն ուղղել, շարունակեց նա,- բայց...

Բայց որ կինը չի կառչի ամուսնու սխալից:

- Ուրեմն, դու ես համոզել, հա՞: Ես այդպես էլ գիտեի: Ես այդպես էլ համոզված էի: Երկու բաժակ խմել ես ու տղամարդ դառել, չէ՞, լավ է, որ հորաքույրներիդ էլ չես կանչել: Ես միայն իմ մեռնելու օրը չգիտեմ, Մարկոս տղա, ես միայն իմ մեռնելու օրը չգիտեմ:

Մարկոս Մարգարյանի համբերության թասը լցվեց:Նա նույնիսկ պարզորոշ տեսավ, թե ինչպես է ջուրը հոսում Քուռկիկ Ջալալու սմբակի տակ թեքված համբերության թասից:

- Եթե մի բան էլ արտասանես, տիկին Սիրարփի, ես քեզ ստույգ կհայտնեմ քո մեռնելու օրը: Պատշգամքը մաքրիր անմիջապես և շան հոտը կտրի: Հասկացա ր:

Տիկին Սիրարփին նայեց ամուսնուն:Նրան էին նայում ասես կյանքում առաջին անգամ դատական նիստը ղեկավարող դատավորի անկաշառ ու անողորմ աչքերը: Տիկին Սիրարփին նայեց այդ պողպատագույն աչքերին ու հասկացավ, որ վճիռը բեկման ենթակա չէ:

- Դե, մի բան պետք է անենք, բա ի՞նչ: Մարդ ենք, հո գազան չենք,- ասաց նա ժպտալով ու միաժամանակ տենդորեն մտածելով, թե ինչպես պետք է որևէ այլ հարցում հանի վրեժը կամ ինչ փոխհատուցում պետք է պահանջի իր զիջողության համար:- Դու էլ գիտես, որ ես շատ եմ սիրում հայրիկին:Հո դրսում չենք թողնելու: Մարդ ենք, չէ՞ :

- Մարդ ենք, բա ի՞նչ ենք,- համաձայնվեց Մարկոս Մարգարյանը, միաժամանակ խորհելով, թե որքան դժվար է առանց ահաբեկելու և սպառնալիքի մարդուն իր մարդ լինելը հիշեցնելը:

\*

\* \*

Մովսես ապորը աղմկալի ընդունելություն ցույց տրվեց:Որդին «Բարով ես եկել, ապե՞ր» բացականչելով հենց մուտքի մոտ գրկեց հորը և ձեռքից խլեց ճամպրուկն ու մեծ քթոցը: Հարսը քթոցին նայելով՝ բացականչեց «ինչ նեղություն», հետո տեսավ, որ ամուսինը իրեն է

նայում և ինքն էլ փորձեց գրկել սկեսրայրին: Սակայն Մովսես ապերը գրկախառնության պատրաստ չէր և ընդամենը հարսին էր մեկնել ձեռքը, ու ականա ստացվեց այնպես, որ հարսն ուզում է գրկել, իսկ սկեսրայրը ձեռքով պահում է նրան, Շփոթված հարսը ետ քաշվեց ու ինքն էլ պարզեց ձեռքը, բայց հենց այն ժամանակ, երբ սկեսրայրը ամաչելով ետ էր տարել ձեռքը և ուզում էր գրկել հարսին: Ու ականա ստացվեց այնպես, որ սկեսրայրն ուզում է գրկել, իսկ հարսը ձեռքով պահում է նրան:

Դրությունը փրկեց Տուզիկը, որը հաչելով ու կլանչելով, գլխապատառ ներս ընկավ միջանցք և շնական նուրբ բնագողով կռահելով, որ հենց այս մարդու պատճառով են իրեն պատշգամբից վտարել, անմիջապես նետվեց Մովսես ապոր վրա, խառնվեց ոտքերի արանքում, աղեկտուր վնգստալով կծեց, պատռեց անկոչ հյուրի գուլպան, ուզեց ոտքն էլ կծել, բայց չկարողացավ, ետ ընկավ, կլանչեց, գլուխկոնձի տվեց ու այս անգամ էլ հարձակվեց մյուս ոտքի վրա:

Մովսես ապերը նայեց իր ոտքերի տակ թավալվող արարածին, որը նրան սկզբից սպիտակ բրդի կծիկ թվաց, ու հարցրեց ապշած.

- Էս ի՞նչ է, ձեզ մատաղ:

- Շուն է, շուն, մի վախեցի,- հանգստացրեց որդին:

- Շո՞ւն,- ապշեց Մովսես ապերը, վեր-վեր ցատկելով ու աշխատելով փրկել ձախ գուլպան:- Բա էս նոր ծնված թուլի մեջ որտեղից էսքան կատաղություն: Կորի, ա յ լակոտ... վա յ, էս ի՞նչ է անում... Ձեր ցավը տանեմ, դրան մի բան հասկացրեք:

Բայց Տուզիկն ասես խելագարված լիներ: Նա ետ էր ցատկում, գնում, դիպչում պատին, թավալ տալիս, կաղկանձելով ու հաչելով, մանրիկ ատամները սպառնալիորեն ցցած հարձակվում, նորից թռչում էր, կախվում էր ծնկից, գլորվում, ու ասես ապշած, որ չի կարողանում ուտել- պրծնել այդ նողկալի թշնամուն, հաչելով վրա էր պրծնում նորից:

- Տուզիկ, նա մեստո,— ճչաց տիկին Սիրարփին:

Եվ կատարվեց հրաշք: Տիրուհու ձայնը լսելուն պես բրդի կծիկը միանգամից ցած գլորվեց Մովսես ապոր թիկունքից ու նետի նման սլացավ, անհետացավ ճաշասենյակի դռան ետևում:

Հարսն ու որդին Տուզիկի փոխարեն ներողություն խնդրելով ու բացատրելով, որ դա ոչ թե նորածին թուլա է, այլ վեց տարեկան, առնական, հասուն և նույնիսկ մեղալակիր մի շուն՝ զգգգված գուլպաներով Մովսես ապորը հրավիրեցին տուն մտնել:

Եվ անմիջապես էլ ծագեց հաջորդ բարդությունը: Միջանցքի փայլեցրած պարկետի տեսքից սարսափած ձերունին ետ քաշվեց ու վախեցած ասաց.

- Վեր կընկնեմ...

- Կոշիկներդ հանիր,- առաջարկեց տիկին Սիրարփին ուրախացած, որ իրեն-իրեն լուծվում է նաև այդ կարևոր պրոբլեմը...

Մովսես ապերը տնքալով հանեց կոշիկներն ու գուլպայավոր ոտքերով, ասես չմուշկներով, սկսեց զգուշորեն սահել սառույցի նման հարթ ու վտանգավոր մանրատախտակի վրայով: Ուզեց թեքվել, ճաշասենյակ մտնել, բայց ոտքերն իրենց-իրենց սահելով՝ նրան տարան հասցրեցին միջանցքի ծայրը: Նա պատերից բռնելով մի կերպ ետ եկավ և որդու օգնությամբ սենյակ մտնելով, նստեց թափանցիկ մոմլաթով ծածկված բազմոցի վրա:

-Վայ, էս կյոնկան ինչի՞ էք տակս գցել: Ես հո երեխա չեմ,- ուզեց հարցնել նա, բայց ամաչեց:

Եվ փոխարենը ուրիշ հարց տվեց դեռ վախեցած նայելով փայլփլուն հատակին:

- Բա ո՞նց էք էս սատանի երեսի վրա ման գալիս, այ ձեր ցավը տանեմ: Էս ձեր ուզելով էք էսպես պլպլացնո՞ւմ, թե ստիպում են:

- Չէ, կարգն է այդպես, հայրիկ,- ասաց Մարկոս Մարգարյանը, տեղավորվելով հոր կողքին:- Դու էլ կսովորես, դատարկ բան է: Մի երկու անգամ կընկնես, կսովորես, դատարկ բան է,- ծիծաղեց նա:

Մովսես ապերը զգուշությամբ ետ ընկավ բազմոցին, որովհետև մոմլաթը տհաճորեն ու անհարմար ճոճում էր նրա յուրաքանչյուր շարժումի հետ, և նայեց շուրջը: Նայեց նույն տիպի մոմլաթով ծածկված հսկայական աթոռներին, դիմացի պատով մեկ մինչև առաստաղը ձգված պահարաններին, պատերին փակցված գորգերին ու հարթաքանդակներին, Հնդկաչինի քարտեզին ու խնամու մեծադիր լուսանկարին, որտեղից տիկին Վարդանուշը կկոցած աչքերով, փոքր-ինչ հեզնական հայացքով նայում էր Մովսես ապորն ու ասես հարցնում իր ողորմածիկ ոնգային ձայնով.

- Էս տարի մեղր կա՞, խնամի...

Մովսես ապերը երկար-երկար նայեց շուրջը ու հարցրեց.

- Գործի մեջ շա՞տ ես առաջ գնացել, տղա ջան...

- Չէ, հայրիկ ջան, - ժպտաց որդին: - Իսկի միտք էլ չունեմ: Էլի նույնն եմ:

- Բա ո՞նց է, որ հիմա ոնց որ թե ուրիշ տեսակ էք ապրում. Մերելով ու խալիներով լցրել էք տունը, գետինը նախշել ու պլպլացրել էք, մենակ ձեր հաշտը ոնց որ Վորոնցովի պալատն ըլնի, ամեն կողմից տեսնում ես քեզ... Բա էդքան հայելի կփչացնեն...

Մարկոսը ժպտաց.

- Դու Վորոնցովի պալատը ո՞րտեղ ես տեսել, այ հեր...

- Թիֆլիսում, ո՞րտեղ, այ բալա, առաջավոր փորձի համար էինք գնացել, տարան ցույց տվին: Քո էս դահլիճից մի քիչ մեծ կլիներ, էլի... Էս ոնց էք մեծացրել:

Մովսեսը փոքր-ինչ սրտնեղած բացատրեց, որ կողքի երկու սենյականոց բնակարանի տիրոջ համար ինքը երեք սենյականոց բնակարան է հաջողացրել և նրա երկու սենյակը միացրել է իրենց երեք սենյակին: Եվ հիմա, փառք աստծո, նեղության մեջ չեն, նույնիսկ երկու խոհանոց

ունեն և երկու զուգարան: Իսկ զուգարանի հարցը հիմա առանձնապես կարևոր է, որովհետև անպիտան Արշակը գիրքն առնում էր ու մտնում միակ զուգարանը և մինչև գիրքը չվերջացներ, դուրս չէր գալիս:

- Ուրեմն հիմա հինգ սենյակ ունե՞ք,- հարցրեց Մովսես ապերը:

- Չէ, փաստորեն չորսը, որովհետև երկու սենյակները միացրել ենք, որպեսզի ճաշասենյակը ընդարձակվի,- բացատրեց Մարկոսն ու գորովանքով խփեց հոր թիկունքին:- Հը, դուր չի գալի՞ս...

- Չէ, ինչի՞ - ասաց հայրը:

- Կյանքն առաջ է գնում յոթ մղոնանոց քայլերով, հայրիկ,- աշխուժացավ Մարկոս Մարգարյանը:- Երեկվա պայմանները այլևս չեն բավարարում մարդկանց: Մենք խեղճությամբ չենք հպարտանում, ինչպես մի ժամանակ, և աղքատությունն էլ այլևս առավելություն և առաքինություն չենք համարում: Հիմա ամեն ինչ արվում է, որպեսզի մենք ապրենք շատ ավելի բարեկեցիկ և հարուստ:

- Մենակ իրավաբաննե՞րը, թե ընդհանրապես,- հազաց ու միամիտ-միամիտ հարցրեց Մովսես ապերը:

- Ինչ էս ասում, հայրիկ,- վրդովվեց Մարկոս Մարգարյանը:- Ընդհանրապես, բոլորը, ընդհանուր ժողովուրդը, իսկ հետագայում նաև ամբողջ մարդկությունը:

Մովսես ապերը թեքվեց ու լուռ նայեց որդու աչքերին:

- Այ տղա, հո հարամություն չե՞ս անում,- հարցրեց նա: Մարկոս Մարգարյանը ցնցվեց ու զգաց, թե ինչպես է վաղուց անցած-գնացած, վաղուց մոռացված մի զարմանալի զգացում պատում իրեն, բարձրանում, ողողում դեմքը և կուտակվում, վառվում հատկապես ձախ այտին: Մարկոս Մարգարյանը ուղղակի ֆիզիկապես ցավագնորեն հիշեց հոր ապտակը: Ապտակը հիշեց, բայց թե ինչի՞ համար էր, չկարողացավ մտաբերել: Ինչի՞ համար էր: Ինքն ինչ-որ բան էր արել, մանկական մի հիմարություն, թե չարաճճիություն: Հա, ընդամենը մի թղթադրամ էր թոցրել հարևան գյուղից իրենց տուն եկած մի ազգականի գրպանից: Հա, իհարկե: Հայրն ու ազգականը թեյ էին խմում սեղանի մոտ, ու ազգականը հորն ասաց, թե ահագին փող է բերել, ուզում է մի երկու հարյուր լիտր հոնի մաքուր արաղ գնել այս տեղերից: Ազգականի պիջակը մյուս սենյակում էր, աթոռին գցած: Ինքը թաքուն այդ սենյակը մտավ, ձեռքը քրտնահոտ պիջակի ձախ ծոցագրպանը տարավ, շխշխկան դրամի կապոցի միջից մի թղթադրամ վերցրեց ու ծկեց գյուղի խանութը: Թվա՞ց, թե, իրոք, հայրը ձայն տվեց իրեն: Ետ չդարձավ: Մտավ խանութ: Ոսկրից սարքած պոչով մի փոքրիկ դանակ առավ, որն իր վաղուց փափագած երազն էր ու մի կիլո կարմիր ու դեղին մոմպաս, այսինքն, սառնաշաքար, ինչպես հիմա են ասում: Հետո իջավ Քաջքի ձորը, մի թաքուն անկյուն գտավ Հոնուտի խիտ թփերի մեջ, պառկեց խոտին ու հո չէ՞ր ուտում մոմպասը, բռերով, բռերով, հո չէր ուտում: Այդ ի՞նչ համ էր, այդ ինչ հոտ էր... Ուտում էր ու մտածում, որ աշխարհի ամենահարուստ, ամենաերջանիկ մարդը խանութի գործակատար Թևան դային է, որը երբ ուզի, ինչքան ուզի, մոմպաս կուտի...



Իսկ երեկոյան, երբ տուն մտավ, հայրը մոտ կանչեց նրան ու ապտակեց միանգամից, ամբողջ թափով, ձախ այտին, ասես մուրճով էր խփում:

- Հարկավոր չի, երեխա է, էլի, Մովսես,- ծուլորեն ձայն տվեց ազգականը, բայց ձայնի մեջ խորին բավականություն կար: Եվ հայրը հարվածեց երկրորդ անգամ, նույն տեղին:

Հետո ինքը մարագի հատակին թափված ծղոտի վրա երկար ժամանակ ընկած լաց էր լինում ամոթից ու խայտառակությունից և ամենաշատը նրա համար, որ հիմարաբար բռնվել է: Չի զգացել, որ հայրը դիմացի պահարանի հայելու մեջ տեսնում է իր գողությունը: Եվ ամենաշատը նրա համար, որ հայրը երկու անգամ նույն տեղին խփեց, թող գոնե ուրիշ տեղ խփեր, չգիտե՞ր ոնց է ցավում, երբ նույն տեղին երկու անգամ խփում են: Իրեն կյանքում չէ՞ն խփել: Եվ ինչի՞ համար.. Հո խեղճ գաղթական Իսկուհի տատի հավի ձուն չէր գողացել: Վերցրել էր հարյուրից մեկը, հազարից մեկը, այդ ազգականի գրպանը փողերով լիքն էր: Ի՞նչն էր պակասելու: Որ մի բաժակ օղի քիչ խմեր՝ կսատկե՞ր: Դանակն էլ արտաքնոցը զցեց: Բա դա անելու բան էր, այ հեր...

- Բա եղա՞վ, հայրիկ,- ձեռքն ակամա ձախ այտին տանելով, վիրավորվեց Մարկոս Մարգարյանը:- Հիմա գիտե՞ս ինչ խիստ է մեզ մոտ: Դեմքին ու դիրքին չեն նայում: Նույնիսկ անցյալի ծառայությունները հաշվի չեն առնում: Ով ուզում էս եղիր, նստեցնում են և վերջ: Հիմա շատ ուժեղ պայքար է ծավալվել կաշառակերության կամ ինչպես դու ես ասում հարամության դեմ: Շատ ուժեղ պայքար, հայրիկ ...

- Դե, որ հարամության դեմ կռիվը մեծացել է, ուրեմն, հարամությունն էլ է մեծացել, էլի, այ բալա: Ծոտի դեմ հո թնդանոթ չեն կրակի, -ասաց Մովսես ապերը:

- Այսինքն... այդ իմաստով... թերևս,- համաձայնեց իրավաբանը:

- Ու գիտե՞ս մեջս ինչի կասկած ընկավ, տղա ջան, կներես, որ երեսիդ ասում եմ: Միրոս ցավում է, դրա համար եմ ասում: Կասկած ընկավ, որովհետև նախ և առաջ տունդ աշխատող մարդու տան նման չի, ոնց որ քո տունը չլինի, հասկանում ես, ոնց որ ուրիշի տուն լինի: Հետո շատ սիրուն ես խոսում, շա՛տ սիրուն, է... Հիմի, ախր, ցավդ տանեմ, ով գողանում է, բուրբից շատ է գոռում ազնվության մասին, որ գլխի չընկնեն: Բայց, մեկ է, գլխի են ընկնում: Մեր գյուղում էլ մեկը կար: Դու գիտես: Ասում էր՝ մենք ամբողջ մարդկության ապագայի մասին ենք մտածում ու թալանում էր գյուղը... ճառեց-ճառեց, մինչև որ նստեցրին, հանգստացավ: Եվ երրորդը... որ էդ ջան տնագին պահում ես տանդ մեջ: Մեր խեղճ աշխատող շները կոծոծի մեջ կորած կովում են գելերի դեմ, վազում են ամառ ու ձմեռ, լեզուները դուրս զցած ու սատկում են սովից: Իսկ դուք էդ խաղալիքներին տան մեջ, ձեր ծոցում եք պահում: Բա դա խղճի՞ բան է: Վախեցե՞ք աստծուց, Մարկոս տղա, պատերազմ կլինի... Ու կուզես հավատա, կուզես՝ ոչ, ինչ որ ես ասացի, չէ՞, «Եփրեմվերդում» գրված է: Վախեցե՞ք:

Մարկոս Մարգարյանը, որպեսզի չլռի, ուզեց ինչ-որ բան ասել, բացատրել, հասկացնել ծերունուն, բայց դուռը բացվեց ու ներս մտավ տիկին Սիրարփին:

- Մուրճ բերե՞մ, հայրիկ,- հարցրեց նա:

- Մո՞ւրճ: Ինչ՞ի, հաց-մաց չկա՞, սոված եմ, հարս ջան:

Տիկին Սիրարփին շփոթվեց.

- Մենք ժամը վեցին ենք ճաշում, հայրիկ, կներեք:

Մովսես ապերը զարմացած նայեց հարսին.

- Լավ եք անում: Բայց ես ի՞նչ համար եմ ասում: Ե՞ս եմ սոված,- ամաչելով ասաց նա:

Տիկին Սիրարփին դառնություն զգաց:

- Ախր, ճաշը դեռ պատրաստ չէ: Ես ձեզ ի՞նչ տամ:

- Բան չեմ ասում,- ասաց Մովսես ապերը:

Մարկոս Մարգարյանը բարձրացավ տեղից:

- Ի՞նչ է, տանը ուտելու բան չկա՞,- դողդողացող ձայնով հարցրեց նա:

- Ճաշը պատրաստ չէ, թե չէ ի՞նչ է եղել,- իրար խառնվեց տիկին Սիրարփին:- Ուզո՞ւմ ես՝ հաց, պանիր, երշիկ, բաստուրմա, խոզապուխտ, բերեմ, հայրիկ, կամ շտապ մի ձվածեղ պատրաստեմ... Մի քիչ կեր, մինչև...

- Գլուխս պտտվեց, հարս ջան, բեր, ցավդ տանեմ... Ու էդքանից հետո ասում եք, թե ուտելու բան չկա, հա՞... Չէ՛, պատերազմ է լինելու. - տնքաց Մովսես ապերը:

\*

\*\*

Նա արթնացավ միանգամից: Ասես հրել էին: «Երևի Սաքոն արդեն բացել է դարբնոցի դուռը, վառել է կրակն ու ինձ է սպասում: Էս ո՞նց եմ քնով անցել», - անհանգստացավ նա՝ նստելով թախտին: Մի քանի վայրկյան մնաց այդպես՝ բոքիկ ոտքերը կախ ու աչքերը փակած: Հետո հանկարծ որոշակիորեն ինչ-որ հեծեծանք լսեց, սարսափահար բացեց աչքերը, նայեց ու անմիջապես էլ ետ ընկավ, արագորեն ծածկվելով վերմակով: Ուղիղ այն պատշգամբի դիմաց, որտեղ քնած էր նա, մի երեք-չորս մետր հեռավորության վրա հարևան շենքի պատշգամբներն էին:

Ամենուրեք մարմիններ էին՝ տարբեր դիրքերով ու ձևերով ընկած, սավանների տակից դուրս ցցված տղամարդու, կանացի ու երեխայի մերկ ոտքեր և ձեռքեր, ճաղատ ու մազախոփվ գլուխներ: Ինչ-որ տեղ, շատ մոտիկ, հիմնովին ցնցելով շենքերն ու զնգզնգացնելով պատուհանների ապակիները, անցնում էին մետրոյի ու տրամվայի առաջին վագոնները...

Գյուղական անդորրի սովոր, աքաղաղի կանչից զայրույթով կողքի վրա շրջվող Մովսես ապերը վերմակը գլխին քաշեց, հառաչեց՝ մի վայրկյանում կարոտելով աքաղաղի կանչին, հետո ձեռքը մեկնեց, աթոռի վրայից վերցրեց անդրավարտիքը ու հագնվեց հենց վերմակի տակ, նորից մեկնեց ձեռքը՝ բլուզը վերցրեց, հագավ ու ամաչելով նայելով պատշգամբներում փոված մերկ մարմիններին, տուն մտավ:

Տունը քնած էր:

Մովսես ապերը ոտնաթաթերի վրա խոհանոց մտավ, անաղմուկ լվացվեց՝ դժվարությամբ գտնելով անհրաժեշտ ծորակը, թեյ դրեց գազօջախին ու մտածեց, թե լավ կլինե՞ր, եթե ուտելու մի բան գտնե՞ր: Ի՞նչ անի, այդպես է սովոր, հիսուն տարի առավոտ շուտ է վեր կացել, որ գործի գնա, բայց ինչքան էլ շուտ է վեր կացել, ողորմածիկ Վարսենիկը իրենից շուտ է արթնացած եղել, որպեսզի հաց տա ամուսնուն: Բա, իհարկե, աշխատող մարդը տնից քաղցած դուրս չպետք է գա:

Հիմա ոչ Վարսենիկ կա, ոչ դարբնոց, բայց վաղ ուտելու սովոր ստամոքսը նվում է, ի՞նչ անի:

Մովսես ապերը գողունի բարձրացրեց կաթասների կափարիչները, բայց ոչինչ չգտավ: Պատուհանի գոգին, անկյունում, մի փոքրիկ կաթաս էլ կար. առանց որևէ հույսի բարձրացրեց նաև դրա կափարիչը և ուրախացավ՝ մտով ճաշ էր մեջը: Մանրիկ կտրտած մսի կտորներով, կարտոֆիլով, բիրարով ու բաղրիջանով, զանազան համեմունքներով:

«Ցավը տանեմ իմ հարսի,- խանդաղատանքով լցվեց Մովսես ապերը,- սովորությունս գիտի, ախր: Դրսից մի քիչ չոր է երևում, բայց շատ փափուկ հոգի ունի իմ հարսը»:

Նա ճաշը տաքացրեց, հացի մի ահագին կտոր բրթեց մեջը, կերավ մեծ ախորժակով ու վրայից էլ երկու բաժակ թեյ խմեց: Հետո, որպեսզի հարսին նեղություն չտա, խնամքով լվաց, չորացրեց իր օգտագործած կաթասն, ափսեններն ու գդալ-պատառաքաղը: Հետո մտածեց, որ նման հոգատար հարսը ավելի մեծ ուշադրության է արժանի և լվաց, սրբեց՝ չորացրեց նաև երեկվա ընթրիքից հետո լվացարանի մեջ կուտակված բոլոր ափսենները, բաժակներն ու դանակ-պատառաքաղները:

Ականջ դրեց: Հանդարտ քնած էին բոլորը: Ոչ մի ձայն ու ծպտուն, եթե հաշվի չառնենք ին-որ տեղ մոտերքում վնգստալով սլացող գնացքները, որոնց շարժումից ճահճատենողով բռնված հիվանդի պես անընդհատ ցնցվում ու դողդողում էին շենքի հատակն ու պատերը:

Պարապությունից չիմանալով ինչ անել և վախենալով արթնացնել տնեցիներին, Մովսես ապերը լարախաղացի ճարպկությամբ հավասարակշռությունը պահպանելով մի կերպ սահեց-անցավ միջանցքը, բացեց մուտքի դուռն ու դուրս եկավ: Մանդուղքների վրա ևս լռություն էր: «Համա թե քնում են էս քաղաքացիները,- մտքում փնթփնթաց Մովսես ապերը, աստիճաններով ցած իջնելով,- սրանք կյանքն էսպես էլ քնով կանցկացնեն»: Բայց կարծես թե նրա միտքը հատկապես հերքելու համար, հանկարծ կամացուկ ծլնգաց ներքնի հարկի աջ կողմի դռան սողնակը և աստիճանավանդակի վրա հայտնվեց ճիշտ կակաչի նման կարմիր ու սև հագնված, սիրունիկ, ջահել մի կին: Կինն արագ մի հայացք նետեց շուրջը, աջից ձախ փոխադրեց փոքրիկ, կարմիր պայուսակը, սովոր շարժումով ձեռքով հարդարեց մազերն ու մանրիկ-մանրիկ քայլերով սկսեց իջնել աստիճաններով:

Մովսես ապերը մի անգամ էլ նայեց այն դռանը, որի վրա փակցված ոսկեգօծ սալիկին խորը փորագրված էր «Մ. Տ. Իշխանյան - ինժեներ» և համոզվելով, որ իսկապես հանդիպել է ինժեներ Ստեփանի կնոջը ու անհարմար է գոնե սովորական «բարի լույս» չասելը, հազաց: Մանկամարդ կինը, ասես օձից խայթված, ցնցվեց ու կանգ առավ:

- Բարի լույս, աղջիկ ջան, շատ ես փոխվել, չճանաչեցի,- մեղավոր ժպտաց Մովսես ապերը:
  - Բարի լույս ձեզ,- ասաց կինն առանց աչքերը բարձրացնելու:
  - Դու էլ ինձ չճանաչեցիր, չէ՞,- ծիծաղեց Մովսես ապերը,- Մարկոսի հերն եմ: Երեկ եմ եկել գյուղից:Դե, հինգ տարի առաջ եմ քեզ տեսել: Անունդ Արփիկ էր, չէ՞, աղջիկ ջան:
  - Ոչ, ո՞չ, դուք շփոթում եք, հորեղբայր, ես Արփիկը չեմ, նրա քույրն եմ,- արագ-արագ խոսեց կինը՝ փորձելով հեռանալ:
  - Վա՛յ, - զարմացավ Մովսես ապերը, որը սկզբից ուրախացել էր գրուցակից գտնելու համար, իսկ հիմա զգաց, որ ցանկալի գրուցակիցը փախչում է ձեռքից:- Բա առավոտ շուտ էդ ո՞ւր ես գնում, աղջիկ ջան:
  - Շուկա,- ասաց կինը, սաստիկ կարմրելով:
  - Ապրես,- հավանություն տվեց Մովսես ապերը,- ամենախելոք մարդիկ առավոտ շուտ են շուկա գնում: Բա ի՞նչ: Համ ապրանքի լավն է լինում, համ էլ ծախողները չեն ուզում «սֆթեն» փախցնել և ուզածը գնով տալիս են ապրանքը: Ապրե՛ս: Իսկ Ստեփանը ոնց է, լա՛վ է...
  - Լավ է: Ցտեսություն, հորեղբայր...
  - Հա, աղջիկ ջան, մեծ մարդ եմ, ինձ հարցնելն ամոթ չի, երեխա ունեցա՞ն... Շատ էին ուզում խեղճերը:
  - Չէ,- ասաց Արփիկի քույրը ու միանգամից ցած վազեց աստիճաններով...
  - Ափսո՞ւ,- նրա ետևից նետեց Մովսես ապերը,- առանց երեխայի դժվար է:
- Նա փողոց դուրս եկավ: Քաղաքը նոր-նոր էր արթնանում ծուլ քնից: Հատուկենտ մարդիկ էին երևում և հատուկենտ մեքենաներ: Նայեց աջ, նայեց ձախ և շատ ուրախացավ, որ հացի խանութը բաց է: Հացի ավտոմեքենան թափքի մասով եկել, համարյա կպել էր խանութի դռանը և երկար, սև բեղերով, սև խալաթ հագած մի մարդ, լայն տարածած ձեռքերով ահագին արկղերը գրկած, հացը դատարկում էր ավտոմեքենայից:
- Ծառի տակ պყգած պարթևահասակ ջահել մի տղա, աջ ձեռքի մատներով խաղացնելով ավտոմեքենայի բանալիները, մեկ-մեկ բղավում էր սև խալաթավոր տարեց մարդու վրա:
- Շուտ արա, Հասո՞ւ, շուտ արա, ես պարապ չեմ:
  - Է՞, ես պարա՞պ եմ,- ամեն անգամ զայրանում էր տարեցը:
  - Դե, լավ, լավ, թո՛ի, շատ մի խոսի, թո՛ի, պրծի,- շտապեցնում էր տղան:
- Մովսես ապերը մոտեցավ, մոտեցավ ու կանգնեց երիտասարդ վարորդի գլխավերևում:

- Բա դու խիղճ չունե՞ս,- ասաց նա:- Ձեռքդ կթուլանա՞ , որ օգնես մարդուն, հացը շուտ դատարկե՞ք:

Վարորդը ապշած նայեց անծանոթ ծերունուն:

- Բա դա մեզ վերաբերվում ա՞,- ատամների արանքից մոլտաց նա:

- Այսինքն՝ ինչի՞ չի վերաբերվում,- տղայի անպատկառությունից վրդովվեց Մովսես ապերը:- Ինչի՞ չի վերաբերվում: Դու մարդ չե՞ս:

- Տո դու ո՞վ ես, է՞,- գլուխը բարձրացրեց վարորդը,- Դո՞ւ ով ես: Միրտդ ցավում է, գնա դու օգնիր: Էս թոշակառուները կյանքներս կերան, տո ...

- Բա կարծում ես չեմ օգնի՞ , - գոռոռաց Մովսես ապերը, արագ մոտեցավ թափքին, տարածեց ձեռքերը, մի արկղ գրկեց ու տարավ դրեց վաճառասեղանին: Ետ եկավ շտապով ու քրթմնջալով և մի արկղ էլ տարավ դրեց վաճառասեղանին...

- Ախպեր ջան, հարկավոր չի,- հուզվեց Հասուն, բռնելով նրա ձեռքը:- Հարկավոր չի, ախպեր ջան, մեծ մարդ ես, համ էլ կթոգոտվեն շորերդ:

- Հացից շորին բան չի լինի,- ծառի տակ նստած վարորդին չարությամբ նայելով, ասաց Մովսես ապերը ու մի նոր արկղ գրկեց:- Հացից շոր չի կեղտոտվի: Համա, այ, էդ տեսակ լակոտների շնչից կթունավորվի հացը: Սրան ո՞վ է հացի վրա նշանակել: Բա ամեն մարդ իրավունք ունի՞ հացին կպչելու...

Վարորդը ցատկեց տեղից ջինսի ծնկների փոշին թափ տալով:

- Տո դո՞ւ կպչելու իրավունք չունես, դու,- գոռաց նա,- սանիտարական ինսպեկցիան որ տեսավ՝ իմ հերը կանիծի:

- Որ քեզ նման տղա ունի, քո հերն արդեն անիծվել է,- փնջալով նետեց Մովսես ապերը՝ մի նոր արկղ տեղափոխելով:

- Տո դու ո՞վ ես, է , - իր հիմնական թեմային անցավ վարորդը: Հայտնի չէ, թե դրան ինչ կպատասխաներ Մովսես ապերը, եթե այդ վայրկյանին աղմուկի վրա չհայտնվեր միլիցիայի լեյտենանտի ուսադիրներով թաղային տեսուչը:

- Ի՞նչ է պատահել, սա՞ ինչ աղմուկ է,- խստորեն հարցրեց նա:

Վարորդն անմիջապես դեպի տեսուչը նետվեց:

- Գետինը մտնեմ, թե բան եմ հասկանում, Վազգեն ջան, էս բիձեն առավոտ գիշերով կպել է ու պոկ չի գալիս: Էլ լակոտ է ասում, էլ մուռտառ, էլ հորս հիշեց...

- Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել,- Մովսես ապերը դարձավ տեսուչը, կկոցեց աչքերն ու հարցրեց զարմացած:- Դուք մեր թաղամասում չե՞ք ապրում:

Մովսես ասպերը խռոված լռում էր:

- Ես ձեզ եմ հարցնում, դուք մեր թաղամասում չե՞ք ապրում,- ձայնը բարձրացրեց տեսուչը:

- Չէ, հյուր եմ,- ասաց Մովսես ասպերը:

- Հյուր եք եկել և արդեն հասցրել եք առավոտ վաղ վիրավորել լ մարդկանց...

- Ասա, է, ասա,- հարձակվեց վարորդը:- Ով գիտի որտեղ է խմել առավոտ շուտ...

Հասոն այլևս անկարող էր չմիջամտել.

- Էս մարդ պոլորովին մեղավոր չի, ինչեր պետ,- ասաց նա,- այ էսքան մեղավոր չի, Անդոն ինձ հետ անպատիվ կխոսեր, էս մարդն էլ պաշտպան կանգնեց ինձ, վալլահ-բիլլահ՝ թե սուտ կասեմ: Լավ մարդ ա էս մարդ:

- Հասո, դու քո հացը կերար,- սպառնալիորեն մոլտաց վարորդը:- Էգուց քեզ համար գործ գտիր...

- Տո, հա, հա,- պոռթկաց Հասոն,- քեզ հետ հաց ուտելն էլ հարամ ա, աշխատելն էլ: Ափսոս Անդրանիկ անուն, որ քու վրան են դրել... դու ի՞նչ Անդրանիկ ես... դու հենց Անդոն ես, որ կաս...

- Լռե՛ք,- սաստեց տեղամասային տեսուչը, ապա դարձավ Մովսես ասպերը:- Եվ, ուրեմն, ո՞ւմ հյուրն եք դուք:

Մովսես ասպերը թոթվեց ուսերը:

- Իմ տղի:

- Իսկ ո՞վ է ձեր տղան,- հարցրեց տեսուչը:

- Տղա է, էլի,- ասաց Մովսես ասպերը:- Մարկոս է անունը, Մարգարյան, էս շենքում է ապրում:

Տեղամասային տեսուչը շփոթվեց...

- Ներեցեք,- մրմնջաց նա,- դուք, ուրեմն, Մարկ Մոխսեյիչի հա՞յրն եք:

- Էդ ինչի՞ հանկարծ Մոխսեյիչ դարձա, ա՞յ ձեզ մատաղ,- թավ բեղի տակ քմծիծաղ տվեց Մովսես ասպերը:- Իմ անունը Մովսես է:

- Դե, իհարկե, իհարկե,- իրար խառնվեց լեյտենանտը, ապա սպառնալիորեն դեպի վարորդը դարձավ:- Դե, չքվիր անմիջապես: Անմիջապես, հասկացա՞ր...

Վարորդն անմիջապես հասկացավ, բայց արժանապատվությունը պահելու համար դանդաղ քայլերով ու ծերունիներին խեթ-խեթ նայելով, դեպի ավտոմեքենան շարժվեց, բացեց խցիկի դուռը, նորից ետ նայեց ու բղավեց.

- Հիմա գալիս ե՞ս, Հասո, թե չէ...

- Չէ, - ասաց Հասոն դեռևս գրգռված:- Որ մի մատ երեխա ես ու պապիդ չափ մարդուն Հասո կասես, չէ՞...

- Դե, լավ, լավ, արի, քեռի Հասո,- ստեղծված ընդհանուր վիճակից, այնուամենայնիվ, տագնապած, հաշտվողաբար ձայն տվեց վարորդը:- Արի...

- Չէ՞, - ասաց Հասոն:

\*

\* \*

Նրանք նստեցին ավտոբուսի կանգառում, մայթի կողքին դրված գույնզգույն նստարանին

- Լավ արիք, որ չգնացիր,- նոր ընկերոջը սրտապնդեց Մովսես ապերը:- Արածդ բանվորություն չի՞ : Որտեղ էլ գնաս, կխնդրեն: Հիմի դեկավարների գործն է դժվար, տեղ չկա, համա բանվորի համար գյուլլա են գցում: Որովհետև գործ անողը պակասել է: Իսկ երկիրը աշխատող մարդն ա պահում: Խոսելով երկի ր կպահվի...

Հասոն տնքաց.

- Է, իմ մեջք իմ տղան զարկավ, ախպե՞ր,- ասաց նա՝ սիգարեթ վառելով:- Ես բանվորության հետ ի՞նչ գործ ունեի: Ես եզիդի եմ, ախպեր...

- Գիտեմ,- ասաց Մովսես ապերը:

- Գիտեմ, որ գիտես,- գլխով արեց Հասոն:- Իմ ամբողջ կյանք ես Ալազյազն եմ ապրել, ոչխարների մեջ, ծաղիկների մեջ: Ու հաստատ գիտեի, որ Ալազյազ էլ կթաղվեմ... Համա իմ տղեն իմ մեջք զարկավ- կոտրավ, ախպեր, ինձ հանեց իմ սարերեն, կտրեց-պոկեց իմ ոչխարներեն ու բերեց գցեց ես անտեր քաղաք: Հո չե՞ս նեղանա, որ էս քաղաքն անտեր կասեմ:

- Չէ՞,- ասաց Մովսես ապերը:

Նրանց տարիքի մի ավտոբուս եկավ, կանգնեց, սակայն ոչ մարդ բարձրացավ, ոչ էլ մարդ իջավ: Ավտոբուսը, հավանաբար, շատ բարկացավ, որովհետև հազաց-հազաց, փռշտաց, ծուխ-մուխ արձակեց, ապականեց շրջապատն ու դողալով, ցնցվելով պոկվեց գնաց:

- Վայ քո ստեղծողի վիզը կոտրի,- խեղդուկ հազի մեջ սրտանց մաղթեց Մովսես ապերը:

- Ասա, է, ասա,- համերաշխորեն հազաց Հասոն:- Մեր բժիշկները հենց որ պապիրոսը տեսնեն բերանիդ, կուզեն թվանքն առնեն, սպանեն քեզ: Համա որ էս ավտոները հազար-հազար պապիրոսի մուխ կփստացնեն, ոչ մեկի էլ վեջը չի: Օղորթ չե՞մ, ախպեր...

- Ճիշտ ես ասում, Հասո եղբայր, - համաձայնեց Մովսես ապերը: Եվ որովհետև դեռ հին մտքերի մեջ էր և իրեն պատասխանատու էր զգում, որ խեղճ, տարեց մարդը փաստորեն իր

պատճառով զրկվեց աշխատանքից, հանկարծ վճռական ասաց: - Դարդ չանես, Հաստ եղբայր, իմ տղան ոնց որ թե էստեղ մեծ մարդ է, կասեմ՝ զանգ կտա քո պետին ու քեզ մի ավելի խելքը գլխին շոֆեր կտան:

Եզիդի Հասուն հուզվեց, դողացին երկար բեղերի ծայրերը:

- Աստծո չափ շնորհակալ եմ, ախպե՛ր,- ասաց նա:- Բայց իմ դարդ հեջ, էս տղուս դարդն էմ: Քո տղեն թե մեծ մարդ է, թող իմ խեղճ տղուն օգնե, ի՞նչ կլինի... Ես՝ հեջ:

- Իսկ տղադ ի՞նչ է արել որ,- հարցրեց Մովսես ասպերը:

- Դատի տակ ա, ախպեր,- ասաց Հասուն:

- Դատի տա՞կ,- ուրախացավ Մովսես ասպերը:- Դատի տա՞կ: Եղա՞վ:

- Ի՞նչը եղավ:

- Լավ է, լա՞վ,-ինքն իր մտքերի մեջ ասաց Մովսես ասպերը: - Հաջողություն է:

Հասուն կողքից զարմացած նայեց իր նոր ընկերոջը:

- Դու հո ինձ ձեռ չե՞ս առնում, դատի մեջ ի՞նչ լավ բան կա, ախպեր: Բա դա ասելու բան էր...

- Ի՞նչ,- հարցրեց Մովսես ասպերը, նայեց Հասունին, գլխի ընկավ ու սկսեց ծիծաղել և շարունակեց ծիծաղի ու հազի միջից:- Մի... նեղանա... Ախր, որ... ուրիշ գործ լիներ, ով գիտի, չկարողանար, բայց որ դատի գործ է, կանի...

- Ինչի՞, ինքն ո՞վ է:

- Իրավաբան է,- անսքող հպարտությամբ հայտարարեց Մովսես ասպերը:

Ծեր Հասուն պատանու եռանդով վեր թռավ տեղից...

- Վայ ես քո արևի՞ն մեռնեմ: Վայ ես քո տղայի արևի՞ն մեռնեմ,- գոռգոռաց նա:- Վայ ես էս օրվա՞ն մեռնեմ: Վայ ես Անդոյի ցա՞վը տանեմ...

- Էդ լակոտի ցա՞վն ինչու ես տանում,- դեռ չարած լավության համար արդեն երջանիկ, գոհ ժպտաց Մովսես ասպերը:

- Ո՞նց թե: Բա որ Անդոն չլիներ, բա որ Անդոյի անտաշ-անտաշ խոսելը չլիներ, էս քեզ ո՞ր տեղից կգտնեի, իմ ախպեր,- շարունակում էր գոռգոռալ Հասուն:

Ու դեռ երկար ծիծաղում էին, խփում էին իրար կողքի, սրբում էին ծերունական արցունքները:

- Դե, հիմի պատմիր, տեսնեմ ինչ է եղել,- ասաց Մովսես ասպերը՝ լրջանալով և ուղղվելով նստարանին այնպես, ասես թե ինքն էր իրավաբանը:



Հասուն ծանր մի թառանջ արձակեց ու պատմեց:

Հիմար ու անհեթեթ պատմություն էր: Հասոյի կրտսեր որդին՝ Ջամիլը, գյուղից գալիս է քաղաք, ավարտում կոոպերատիվ տեխնիկումը և ամուսնանում իրենց գյուղացի բուժքույր Շամամի հետ: Ապրում են Նոր-Արեշում, մասնավոր մի տան մեջ, վարձով: Ապրում են խաղաղ, երջանիկ ու անհոգ մինչև այդ ուրախ և միաժամանակ չարաբաստիկ օրը: Այդ ուրախ ու չարաբաստիկ օրը, իրեն շատ նման մի տղա ունենալու առիթով, հարևան Սամսոնի հետ մի լավ հարբում է Ջամիլը: Հետո գտնում է, որ ինչ-որ բան պակաս է մնացել, ինչ-որ շատ կարևոր կենաց չի խմվել և քանի որ տանը այլևս խմիչք չի լինում, հարևանին համոզում է գնալ կողքի խանութ խմիչք բերելու:

- Խանութն այս ժամին փակ է,- զգուշացնում է Սամսոնը:

- Պահակի մոտ միշտ կա,- ասում է Ջամիլը:– Մի քիչ ավել է վերցնում, բայց, ի՞նչ է, իմ տղա- ժառանգը միայն այդքա՞ն արժե:

Գնում են խանութ և ի՞նչ տեսնեն: Պահակը հարբած քնած է խանութի դռան մոտ դրված մի արկղի վրա, ծնկներին հայ-թուրքական կռիվներից հիշատակ մնացած «այնալու» հրացանը: Փորձում են արթնացնել, չի հաջողվում: Ոտքերի տակի արկղից մի շիշ օղի են հանում, մի հատ տասնոց դնում են ծնկին և ուզում են հեռանալ, երբ խմիչքի հետ Սամսոնի ուղեղն ընկած սատանան հուշում է նրա ներքին ականջին, թե այդ ուրախ օրը կարելի է ավարտել մի շատ սրամիտ և ուրախ կատակով: Ջամիլը սկզբում առարկում է, բայց հետո նրա՞ն էլ այնքան սրամիտ է թվում այդ կատակը, որ Սամսոնի հետ պահակի ծնկների վրայից վերցնում են հրացանը, դռան տակ գցած մեծ ցախավելը բերում, հրացանի փոխարեն դնում են պահակի ծնկներին, օղու արժեք տասանոց թղթադրամը դրոշակի նման խրում ցախավելի ճյուղերից մեկի վրա և իրենց հնարամտությունից չափազանց գոհ, հրացանը գետնին քարշ տալով, քրքջալով ու օրորվելով վերադառնում տուն:

- Պատկերացնո՞ւմ ես, թե առավոտ շուտ հրացանը որ տանենք ու ետ տանք պահակին, աչքերը ինչ տեսակ են լինելու,- կողերը բռնած, ծիծաղից ցնցվում է Սամսոնը:

- Էլ մի ասա, ամա՞ն, մեռնում եմ,- հռհռում է Ջամիլը:

Բայց գործը մինչև առավոտ չի հասնում: Միլիցիայի գիշերային պարեկը խանութի մոտով անցնելիս նկատում է պահակի իրոք որ շատ ծիծաղելի, բայց և ահավոր վիճակը ու անմիջապես գործի է անցնում: Եվ որովհետև դիմացի տան պատուհանից անընդհատ փողոց նայող անքուն մի պառավ տեղն ու տեղը հայտնում է, որ իր աչքերով տեսավ, թե ինչպես հրացանը փախցրին հարևանի տղաներ Ջամիլն ու Սամսոնը, պարեկն ուղիղ մեկ ժամ անց, ինչպես արձանագրութեան մեջ նշվում է, «ձեռնարկված խիստ օպերատիվ բնույթի միջոցառումների շնորհիվ» կալանավորում է հանցագործներին, և նույնիսկ առանց հետախույզ շան օգնությանը դիմելու, հենց նրանց խնջույքի սեղանի տակից հայտնաբերում է պահակի հրացանը:

Եվ պարզվում է, որ տղաների արարքը այնքան էլ սրամիտ ու ծիծաղելի չէ, որքան սկզբում թվացել է նրանց:

Քննությունն է կատարվում, գործը մտնում է դատարան և դատարանը երկուական տարի բանտարկությամբ է գնահատում Մամսոնի և Ջամիլի կատակը, իսկ պահակին էլ դատապարտում մեկ տարվա ուղղիչ աշխատանքների՝ հենց խանութի դռանը: Որովհետև պահակը հավաստի վկաներով ու, փաստաթղթերով կարողանում է ապացուցել, որ ինքը ոչ թե հարբած է եղել, այլ եղել է ծանր ուշագնացության մեջ: Մի հանգամանք, որը խիստ դժվար է տարբերել հարբած վիճակից:

Մովսես ապերը չափազանց լուրջ, հոնքերը կիտած լսեց այդ ամբողջ պատմությունը, երկար լռեց, հետո բարձրացրեց աչքերը, խստությամբ նայեց վախից կծկված Հասոյին ու հարցրեց.

- Իսկապե՞ս էդ օրն է տղա ունեցել Ջամիլը:

- Հա , քաղաքացի դատավոր,- անմիջապես պատասխանեց Հասոն: Հետո ծիծաղեց խեղճ-խեղճ և ուղղեց:- Հա, ախպեր, աշխարհը հո մութ չի :

- Իսկ հրացանի մեջ փամփուշտ կա՞ր,- երկրորդ ու կարծես թե ավելի խճճող և խորամանկ հարցը տվեց Մովսես ապերը:

- Ո՞րտեղից, ախպեր, չկար,- ասաց Հասոն ու տնքաց:- Երանի ըլներ, էդ հրացանն էլ իմ ձեռին ըլներ, պահեի դոշիս ու պրծնեի էս ցավից: Տուն-տեղ, մեծ քյուլլֆաթ, ոչխար ու շուն անտեր թողել եմ սարն ու եկել, որ թագա հարսիս պահեմ, էն անմեղ գառնուկին պահեմ, ու դրա համար է, որ բանվորություն կանեմ: Թե չէ Հասոն ուր, բանվորությունն ու՞ր...

- Ուրեմն, գնդակ չի՞ եղել, կրակոց չի՞ եղել,- մի վերջին անգամ հավաստիացավ ինքնակոչ դատավորը:

- Չէ, ախպեր, չի եղել, վալլահ-բիլլահ,- ձեռքը սրտին դրեց Հասոն:

- Ուրեմն, հանաք է եղել,- ամփոփեց Մովսես ապերը:- Քո տղի արածը փիս բան է, շատ կներես, Հասո եղբայր, լակոտություն է: Բայց հանցանք չի:

- Վայ, ապրի քո ումբը, ապրի՛ քո արևը,- աչքերը լցրեց ծերունի Հասոն:- Ապրեն քո բավեքը ու էն ամեն ինչը, որ քո կողքին են ու քո կողքին չեն, բայց որոնց համար ցավում է քո սիրտը: Դե, Հասոն վազեց:

- Ո՞ւր:

- Վազեմ պատմեմ հարսիս, թող ուրախանա խեղճը, օր ու գիշեր արտասուքն աչքին ա:

- Սպասիր դեռ, ա՞յ մարդ,- զգալով, որ չափն անցել է, իրար անցավ Մովսես ապերը:- Իմ ասածը հո կարևոր չի...

- Քո ասածը ամենա-ամենակարևորն է,- համոզված հայտարարեց Հասոն:

- Հա, բայց տեսնենք տղես ինչ է ասում:

- Ա՜յ մարդ, ա՜յ ախպեր, տղեն ոնց կարա քու նման հոր խոսքի տակից դուրս գա: Աչքովս էլ տեսնեմ, չեմ հավատա:

- Չէ, իհարկե,- չկարողացավ նահանջել Մովսես ապերը,- իմ տղեն շատ է հարգում ինձ: Փառք աստծո: Համա թե կարգ կա, օրենք կա, իրիկունը վեր կկենաս, կգաս ուղիղ մեր տուն: Ա՜յ, տեսնո՞ւմ ես, հրեն մեր տունը, չորրորդ հարկում: Կգաս, իրար հետ կպատմենք, որ տղես միտք անի, թե որ կողմից մոտենա, որ օգնի քո տղին, հասկացա՞ր...

- Վայ, ո՞նց չհասկացա, ախպեր ջան, իրիկուն քո տանն եմ: Ինչի՞, Հասուն կարգն ու օրենքը չգիտի՞ : Տանն իմ ձեռքով հալած մի կճուճ արդար յուր կա ու ոչխարի լավ մածուն, էդ բոլորը Հասուն կառնի ու...

Մովսես ապերը հուզմունքից վեր թռավ տեղից:

- Էդ բանը չանե՞ս,- ասաց նա՝ նորից կիտելով հոնքերը, բայց ավելի շատ խեղճացած ու շփոթված:- Էդ բանը մտքիցդ հանիր, Հասուն: Իմ տղեն հալալ կաթնակեր է, հարամություն չի անում: հասկացա՞ր:

- Հասկացա, համա առանց դրա ո՞նց կլինի,- չհասկացավ ու ընկճվեց Հասուն:

- Կլինի,- ասաց Մովսես ապերը:- Մարդկությունը պրծա՜վ, մարդկությունը դարձավ ապրա՞նք: Դառավ առ ու տո՞ւր: - Մովսես ապերը մտածեց-մտածեց, ցանկացավ շատ ավելի լուրջ ու արժանահավատ բան ասել և ականա մոտավորապես կրկնեց որդու խոսքերը: - Եվ հետո, եթե կուզես իմանալ, հիմա էն ժամանակները չեն, հիմա շատ ուժեղ կռիվ է հարամության դեմ: Ով որ բռնվեց, փրկություն չկա, վե՛րջ: Հասկացա՞ր:

- Թող քո ասածը ըլնի, ախպե՛ր - վիզը ծռեց Հասուն,- թող քո ասածը ըլնի:

Ավտոբուսը եկավ, կանգ առավ, ծուխ բաց թողեց ու բացեց դռները: Հասուն նստեց ետևի դռնից ու անմիջապես էլ շրջվեց, խոր գլուխ տվեց Մովսես ապորը:

- Տունը չմոռանաս,- նրա ետևից բղավեց Մովսես ապերը:

Հասուն լայն ժպտաց, որից կախ ընկած բեղերը մի քիչ վեր ցցվեցին ու թափ տվեց գլուխը, ուզենալով ասել, թե «դա մոռանալն է բան է, ախպեր» :

Ավտոբուսից մարդիկ իջան, եկան ու անցան Մովսես ապոր կողքով: Ու հանկարծ նրանցից մեկը՝ սիրուն, բարձրահասակ մի կին, մոտեցավ նրան, կկոցեց աչքերը, մոտիկից նայեց դեմքին ու հարցրեց կամացուկ:

- Մովսես ապե՞ր:

- Հա՛,- զարմացավ ծերունին:

- Բարև ձեզ, Մովսես ապեր,- ասաց կինը՝ մեկնելով ձեռքը: - Սրտանց-սրտանց ցավում եմ, որ չկարողացա ներկա լինել Վարսենիկ մայրիկի թաղմանը: Շատ եմ ցավում և ամբողջ հոգով ցավակցում եմ ձեզ:

Մովսես ասերն ամաչեց, որ կնոջը չի ճանաչում:

- Ո՞վ ես, աղջիկ ջան,- հարցրեց նա:- Դու մեզ ո՞ր տեղից գիտես:

- Մոռացե՞լ եք, Մովսես ասեր,- ծիծաղեց կինը:- Ես Արփիկն եմ, Արփիկը, ինժեներ Ստեփանի, Մարկ Մոխսեյիչի ներքևի հարևանի կինը... Բժշկուհին: Չե՞ք հիշում, թե ինչպես սրսկեցի ձեզ: Հիմա էլ գիշերային հերթապահությունից եմ գալիս...

- Վա՛յ, Արփիկ ջան,- ուրախացավ Մովսես ասերը:- Շատ, շատ ներողություն, աղջիկ ջան, մեծացել եմ, աչքերս լավ չեն տեսնում: Համ էլ էսօր արդեն մեկին բարևել եմ քո տեղը ու էլ մոքովս չէր անցնում, թե քեզ կտեսնեի:

- Ո՞ւմ եք բարևել,- շարունակելով ծիծաղել, հարցրեց Արփիկը: - Քո քրոջը,- ասաց Մովսես ասերը:- Աստված պահի, շատ սիրուն քույր ունես, Արփիկ ջան:

- Իմ քրո՞ջը,- զարմացավ կինը,- դուք իմ քրոջը ո՞ր տեղ եք տեսել, Մովսես ասեր:

- Էստեղ, ո՞ր տեղ,- իր հերթին ծիծաղեց Մովսես ասերը- Հիմի ասեմ: Առավոտվա ժամը վեցը կլինեի, քունս չէր տանում, տնից դուրս եկա ու մեկ էլ տեսա, որ ձեր դռնից մի սիրուն աղջիկ աս դուրս գալիս: Ասեցի՝ դու կլինես, անունդ տվեցի ու բարի լույս ասացի, մեկ էլ էդ աղջիկը՝ թե դուք շփոթում եք, հայրիկ, ես Արփիկը չեմ, Արփիկի քույրն եմ:

- Իմ քո՞ւյրը:

- Հա, հա՛,- ծիծաղեց Մովսես ասերը:- Ինքն էլ էնքան վախեցած էր: Դե, ո՞վ չի վախենա, որ մութ պաղեզում հանկարծ «բարի լույս» ասես: Մի լավ գրույց արեցինք, համա, դե, վռագում էր, բազար էր գնում, ասեց, թե առավոտ շուտ լավ բազար է լինում... Չէ: Էդ ես ասեցի, ասեցի ապրես, որ...

- Ասում եք մե՞ր դռնից դուրս եկավ,- կամացուկ հարցրեց Արփիկը:

- Հա՛, հա՛,- սրտանց ծիծաղելով, հավաստիացրեց Մովսես ասերը, նայեց ջահել կնոջ խիստ գունատված դեմքին ու նոր միայն զգաց, որ ինչ-որ բան իր տեղում չէ: Որ ինչ-որ վատ բան է կատարվում, շատ տխուր և անուղղելի մի բան: Նոր միայն զգաց, որ կարծես թե ինքն էլ ծիծաղելու իրավունք չունի, կամ որ անհարմար է ծիծաղելը ու իրեն կորցրած, չիմանալով ինչ անել և ինչպես շարունակել, ավելացրեց:

- Դու չգիտեիր, հա՞, որ ինքը ձեր տանն է...

- Գիտեի,- մրմնջաց կինը, մի պահ օրորվեց, ամուր փակեց աչքերը, հետո միանգամից պոկվեց տեղից ու գրեթե վազելով անհետացավ շենքի մուտքի մեջ:

«Պահ, տունդ քանդվի, Մովսես, էս ի՞նչ արիր,- իրեն կորցրեց ծերունին՝ ծնկներում հանկարծ թուլություն զգալով, երերուն քայլերն ուղղելով դեպի տուն, ու մրմնջաց... - Տեր աստված, դու փրկության մի դուռ ցույց տաս, տեր աստված»:

\*

\* \*

Մովսես ապերը նայեց ժամացույցին: Ժամը ինն էր: Լիովին համոզված, որ տնեցիները արդեն վեր կացած կլինեն, նա սեղմեց զանգի կոճակը: «Ծլրնգ, ծլրնգ, ծլրնգ, ճուկ» մեղմիկ դողանջեց զանգը, իր ձայնով հիացած երգչուհու նման: Բայց դռան ետևում ոչ մի շարժում: «Ծլրնգ, ծլրնգ, ծլրնգ, ճուկ» նորից դողանջեց զանգը: Նույն արդյունքը: «Լավ, էս մարդիկ չե՞ն աշխատում, չե՞ն սովորում», - սրտնեղեց Մովսես ապերը ու անմիջապես էլ հիշեց, որ այսօր շաբաթ է: Դա նրան հնարավորություն տվեց անցնել նոր մտորումների և նոր եզրակացությունների: «Շաբաթ օրն էլ են հանգստանում, - նեղացավ Մովսես ապերը՝ փակ դռանը թեթևակի հենված: - Աստված որ աստված էր, էս ամբողջ աշխարհը ստեղծելու համար վեց օր աշխատեց ու միայն կիրակի օրը այսինքն՝ յոթերորդ օրն իրեն թույլ տվեց հանգստանալու: Իսկ սրանք իբր թե էնքա՞ն մեծ են ու էնքա՞ն խելոք, որ տվել-անցել են աստծուց, իրենց բաժին աշխարհը հինգ օրում են սարքում ու որովհետև իբր թե հինգ օրում են սարքում, էնքան են հոգնում, էնքան են հոգնում, որ իրենց արժանի են համարում երկու օր հանգստանալ: Համ շաբաթ օրը, համ կիրակի: Դե, շա՞տ են աշխատում, ի՞նչ անեն, հե՛ շտ է հինգ օրում և էն էլ էժա՞ն և էն էլ որակո՞վ աշխարհ սարքելը, որ նույնիսկ աստծո ուժերից վեր էր», - մտքում մի լավ հեգնեց Մովսես ապերը: Հանկարծ դռան ետևում շրշյուն լսվեց:

- Ո՞վ է, - լսվեց տիկին Սիրարփիի վախեցած ձայնը: Մովսես ապերը հազաց,
- Ես եմ, - ասաց նա ետ-ետ նայելով, անընդհատ սպասելով, որ ներքևից, ինժեներ Ստեփանի տնից ուր որ է սոսկալի ճիչ է լսվելու:
- Ո՞վ է, - կրկին, այս անգամ կարծես թե ավելի վախեցած, հարցրեց տիկին Սիրարփին:
- Ես եմ, էս , - ասաց Մովսես ապերը:
- Կաշմար կակոյ տո, - լսեց նա դռան ետևից ու ոչինչ չհասկացավ:
- Ես եմ, էս, - ամաչելով կրկնեց Մովսես ապերը:

Դռան ետևում տիկին Սիրարփին ականջներին չէր հավատում : Նա հաստատ գիտեր, որ սկեսրայրը քնած է պատշգամբում, Տուզիկի թախտին: Իսկ դռան ետևից այս մարդն էլ ճիշտ Մովսես ապոր ձայնով էր խոսում: Եվ որովհետև քունը գլխին էր և դեռևս սուրճ չէր խմել, որպեսզի ուղեղը պարզվի, տիկին Սիրարփին ամենաանհեթեթ կերպով մտածեց սրտնեղած. «Ըհը, իբր թե մեկը քիչ էր»: Հետո, ի պատիվ իրեն, անմիջապես հասկացավ, որ մե՞կն էլ, մյու՞սն էլ նույն սկեսրայրն է և դրանից ավելի վախեցավ:

- Մովսես ապե՞ր, մրմնջաց նա:
- Ես եմ, ե՞ս, - հուսահատ գոռաց խեղճ մարդը:
- Վա յ, բա դուք պատշգամբում չե՞ք, - հարցրեց հարսը:
- Չէ, - հավատացրեց Մովսես ապերը, - դռան հետևն եմ:

- Ինչո՞ւ,- ապշած հարցրեց տիկին Սիրարփին:

- Ո՞նց թե ինչու,- արդեն զայրացավ Մովսեսն ապերը,- մարդ եմ, քունս չէր տանում, դուրս եկա մի քիչ ման եկա: Դրա մեջ ի՞նչ կա:

- Հա՛,- վերջապես հասկացավ տիկին Սիրարփին ու բացեց սողնակը:

Դռան ճոնչոցի հետ ինչ-որ տեղից դուրս պրծավ գանգրահեր Տուզիկը և իր ոսկորը փախցրած ոխերիմ թշնամուն, ի վերջո, հայտնաբերած գագանի նման ճիչ-աղաղակով, հաչելով ու վնգստալով հարձակվեց Մովսեսն ապոր վրա, բռնեց աջ ոտքը:

- Թեթ, թեթ, այ շուն, ռադ եղիր, - բղավեց Մովսեսն ապերը, թափ տալով ոտքը, բայց այդ շունը զարմանալիորեն սովորական շան լեզուն չէր հասկանում:- Ա՛ հարս, մի բան ասա, ինձ կերավ,- ի վերջո, հուսահատ ձայնեց նա:

Տիկին Սիրարփին սաստեց շանը, կարգի հրավիրեց ինչ-որ ազդեցիկ խոսքերով, և գունդուկծիկ դարձած Տուզիկը ուղղակի գլորվելով սլացավ ու անհետացավ սենյակներից ինչ-որ մեկում:

Մովսեսն ապերը շունչ քաշեց թեթևացած, մի պահ կանգ առավ՝ ականջը նորից դռան կողմը, սպասելով ահասարսուռ որևէ ճիչի, բայց քանի որ ճիչ չկար, նորից շունչ քաշեց թեթևացած ու մտածեց, որ աստված գուցե թե լսել է իր ձայնը ու մի դուռ է բացել: Բայց թե ինչ դուռ և ինչպես է բացել, Մովսեսն ապերը պատկերացնել չէր կարողանում:

- Այ հայրիկ, բա ձեր քունը չի՞ տանում,- հորանջն անկարող գսպել, ափով բերանին թփթփացրեց տիկին Սիրարփին, մյուս ձեռքով ուղղելով ճնթված գիշերանոցը:

- Արևը քաչալի գլուխ ա վառում, էս ժամին քնե՞լ կլինի, հարս ջան,- ամաչելով հարսի կողմը նայել, զգուշորեն դեպի խոհանոց սահեց Մովսեսն ապերը, որ այնտեղից էլ պատշգամբ դուրս գա:

Իսկ հարսին թվաց, թե սկեսրայրը խոհանոց է մտնում՝ հասկացնելու, որ քաղցած է և ասաց շտապով.

- Հիմա, եթե կարողանամ, Մարկին կարթնացնեմ ու ձեզ նախաճաշ կտամ:

- Չէ, չէ՛, ես կուշտ եմ,- հրաժարվեց Մովսեսն ապերն ու ավելացրեց մեղավոր ժպիտով:- Ախր, սովոր եմ շուտ ուտելու: Որ չտեսա՞, թե ինչ ճաշ ես եփել ինձ համար, վռագ, վռագ տաքացրի ու կերա...

Ապրի արևդ, հարս ջան:

- Ի՞նչ ճաշ,- զարմացած հարցրեց հարսը:

- Բոզբաշ էր, ինչ էր, բայց շատ համով էիր եփել, լավ ձեռք ունես,- գովեց Մովսեսն ապերը:

- Պատուհանի գոգին դրա՞ծը,- հարցրեց տիկին Սիրարփին:

- Հա, բա ո՞րը,- սիրտը սողոսկած անորոշ տազնապով հաստատեց սկեսրայրը:

- Եվ բոլորը կերա՞ք,- շրթունքները դողացրեց հարսը:

- Հա,- ընկճվեց Մովսես ապերը:- Բայց, դե, փոքր աման էր ու հետո, ախր, շատ համով էիր եփել, հարս ջան:

Տիկին Միրարփին քիչ էր մնում լաց լիներ:

- Բա հիմա Տուզիկն ի՞նչ պետք է ուտի,- կերկերուն ձայնով հարցրեց նա:

- Պա՛հ,- գղջաց Մովսես ապերը,- շան համար պիտի մի քիչ թողնեի, հա՞...

- Ի՞նչ թողնեիք,- արդեն չարությունս ասաց հարսը,- դա Տուզիկի ճաշն էր:

Մովսես ապերը հանկարծ ուժեղ սրտխառնուք զգաց և միաժամանակ էլ զգաց, որ ծիծաղը բռնում է:

- Ուրեմն, ես լա՞մ եմ կերել,- հազից խեղդվելով, ծիծաղեց նա,- վա՛յ, հարս ջան, վա՛յ, էլ ի՞նչ օյին ունեիր իմ գլխին բերելու: Ուրիշ տեղ չպատմես, ցավդ տանեմ, խայտառակ կլինեմ աշխարհով մեկ: Ուրեմն, ես շան փայր կտրող եմ դառն լ:

Իսկ տիկին Միրարփիի ծիծաղը չէր գալիս:

- Լա՛՛փ,- ասաց նա,- հատուկ դիետիկ ճաշ էր: Բժշկի բաղադրատոմսով էի պատրաստել: Տուզիկը հո ամեն ինչ չի ուտում:

- Հա, դե, հո մարդ չի՞, որ ամեն ինչ ուտի,- ասաց Մովսես ապերը:

Նա, այնուամենայնիվ, իրեն զուգարան նետեց: Սպասեց, սպասեց, բայց ստամոքսն այլևս բոլորովին չէր խառնում: Ընդհակառակը, ճաշից հետո մի շատ անուշ համ էր մնացել բերանում: Եվ Մովսես ապերը դառնորեն մտածեց, որ վատ չէր լինի, եթե բժիշկները մարդկանց համար էլ այդպիսի դիետիկ ճաշեր հորինեին: Բոլորովին վատ չէր լինի:

Տիկին Միրարփին խոհանոցում ինչ-որ շշեր էր չիսկիսկացնում, և Մովսես ապերը, որովհետև մեղավոր էր զգում իրեն հարսի առաջ, աշխատեց մասամբ քավել իր մեղքը:

- Թե խանութի հարց կա, ես կգնամ,- ասաց նա:

Տիկին Միրարփին կասկածեց:

- Իսկ կարո՞ղ եք,- հարցրեց նա դեռ խռոված ձայնով:

- Վայ, հո երեխա չեմ, խանութ չեմ տեսն լ,- նեղացավ Մովսես ապերը:

- Այդ դեպքում ես շշերը դնում եմ,- ասաց հարսը,- կբերեք երեք հատ մածուն, երեք հատ կաթ, երեք հատ թթվաշոռ, երեք հատ թթվասեր...

- Ինչէ՞ր, ինչեր,- հարցրեց Մովսէս ապերը: – Էդ թթվաշոռն ու թթվասէ՞րն ինչ են:
- Տվորոզ ու սմետանա,- բացատրեց հարսը:
- Ի՞նչ,- չհասկացավ ապերը,- չհասկացա:
- Դուք այդպէս ասեք, իրենք կհասկանան,- ասաց հարսն ու երեքանոց մեկնեց սկեսրայրին:

Մովսէս ապերը ետ քաշվեց:

- Վայ, բա ամոթ չի ,- ասաց նա:

Եվ որովհետև ականջը դեռևս ձայնի էր, շտապով վերցրեց զամբյուղն ու դեպի դուռը սահեց:Նոր էր հագել կոշիկներն ու բացել դուռը, երբ պատուհաս Տուզիկը դարձյալ դուրս պրծավ ինչ-որ տեղից և մոլեգին ցատկերով հարձակվեց նրա վրա, բայց Մովսէս ապոր դիրքն այս անգամ գերադասելի էր, նա անմիջապէս դուրս նետվեց, վրա բերեց դուռը և լսելով գազազած շան հուսախաբ կլանչոցը, խորամանկ ժպտաց.

- Դե, գնա, շատ էլ լավ եմ արել, որ ճաշդ կերել եմ, քո հերն էլ անիծած,- բավարարված վրիժառոյթյամբ, թավ բեղի տակ քրթմնջաց նա:

\*

\* \*

Պարենային խանութի դռները հենց փողոցի վրա էին բացվում: Բայց տարբեր տեսակի էին բացված այդ դռները: Մեկը մտնելու համար էր, մյուսը ելնելու: Ելնելու դռնից գրեթե մարդ չէր դուրս գալիս, իսկ մտնելու դռան մոտ մի այնպիսի հերթ էր, որ ձգվում, տարածվում էր մայթով, գնում-պտտվում էր թերթերի կրպակի շուրջը և դարձյալ շարունակվելով դեմ առնում պաղպաղակի շրջիկ վաճառակետին:

Որոշ իմաստով հարմար էր: Շոգից թուլացած մարդիկ պաղպաղակ էին վերցնում և ուտելով մոտենում թերթերի կրպակին, հետո այնտեղից էլ լրագիր էին գնում և կարդալով, կարդալով մոտենում խանութի դռանը: Չէ, հարմար էր:

Չի կարելի ասել, թե Մովսէս ապերը կյանքում հերթ չէր տեսել շատ էր տեսել, բայց հերթի սովոր չէր: Որովհետև հենց որ հայտնվում էր գյուղի խանութի մոտ, գործակատարը ձայն էր տալիս հավաքվածներին.

- Ա՜յ ժողովուրդ, ճանապարհ բացեք, համեցեք, Մովսէս ապեր, ձեզ ինչ է պետք, մի կողմ քաշվեք, այ մարդիկ, հո դարբնոցը չենք փակելու: Կրակը կհանգչի:

Այստեղ կրակի մասին մտածող չկար և դարբին Մովսէսին էլ ոչ ոք չէր ճանաչում: Այդ պատճառով էլ համեստորեն հերթի ծայրը բռնած, Մովսէս ապերը համարյա մի ժամ հետո հասավ խանութի դռանը:



Այդ ժամանակամիջոցում հերթի կանգնածներից և հերթի մեջ լկտիորեն ու մուրալով խցկվողներից և այդ երեք կարգի քաղաքացիների միջև ծագած համառ ու տաք կռիվներից Մովսես ապերը որոշակի ինֆորմացիա ստացավ միջազգային դրության, տիեզերական թռիչքների, քաղաքային առևտրի վարչությունում տեղի ունեցող ապօրինությունների, «Արարատ» ֆուտբոլային թիմի և այն մասին, թե մինիստրներից որն է իր որդուն ամուսնացրել մի այլ մինիստրի դստեր հետ:

Այդ և շատ այլ խառնաշփոթ, հավաստի և ոչ այնքան հավաստի տեղեկություններից մթագնած ուղեղով Մովսես ապերը, ի վերջո, մտավ խանութ: Մտավ ու տեսավ, որ սա իր իմացած հերթերից ոչ մեկին նման չէ: Որովհետև դրսի մի հերթը խանութի մեջ վերածվում էր չորս հերթի: Հերթերից մեկը դեպի դրամարկղն էր տանում, իսկ մյուս երեքը՝ դեպի չերևացող բաժինները:

Եվ Մովսես ապերը համոզվեց, որ այս քաղաքում ամեն ինչ արվում է գնորդների գործը հնարավորին չափ ավելի դժվարացնելու համար: Որովհետև, որպեսզի կարողանաս որևէ բան գնել, նախ պետք է իմանաս քո ուզած բանը կա , արդյոք, խանութում: Բսկ դրա համար երեք հերթով էլ առանձին-առանձին պետք է առաջ գնաս ու բաժինները մեկ-մեկ աչքի անցկացնես: Դրանից հետո չորրորդ հերթով պետք է դրամարկղ հասնես, վճարես գնումների համար և նոր միայն ուզածդ հերթը բռնես, որպեսզի, ի վերջո, գնես քեզ հարկավոր մթերքները:

Մովսես ապերը իր կողմից մի կիլոգրամ հավա գնեց տան համար՝ քաղցրավենիքի բաժնից, մի կիլոգրամ էժանագին երշիկ՝ գաստրոնոմ կոչվող բաժնից, տեսավ, որ ոմանք վաճառողուհուն աչքով են անում և թղթի մեջ ամուր փաթաթված ինչ-որ բան վերցնում, ինքն էլ աչքով արեց ու ժպտաց ու ինքն էլ վաճառողուհու մեկնած փաթեթը արագ-արագ զամբյուղի մեջ դրեց և գնաց կանգնեց կաթնեղենի բաժնի հերթի ծայրում:

Նրա աչքերի առաջ սևացել էր ամեն ինչ ու թուլացել էին ոտքերը, և Մովսես ապերը կարծես թե սկսում էր հասկանալ, թե ինչու են այս մարդիկ շաբաթվա մեջ երկու օր հանգստանում :

Հերթն արդեն նրան էր հասել, ընդամենը մի կին կար առջևում, երբ վաճառողուհու ձեռքի մատանիներից ցլացող ճառագայթները գրավեցին Մովսես ապեր

ուշադրությունը և գիտակցությանը հասցրին նրա հաշվարկները:

- Երկու մածուն՝ վաթսուներկու կոպեկ, երեք կաթ՝ իննսուն կոպեկ, երկու թթվասեր՝ յոթանասունչորս կոպեկ, չորս թթվաշոռ յոթանասունվեց կոպեկ...

Ընդամենը երեք ռուբլի հիսուն կոպեկ:

Գնումներ կատարող կինը ինչ-որ թղթադրամ մեկնեց:

Մովսես ապերը մաթեմատիկոս չէր, նույնիսկ չէր հիշում, թե որ դասարանից թողեց դպրոցն ու դարբնոց մտավ աշխատելու, բայց քանի որ դեռ մանկուց մեծ սեր ու հարգանք ուներ թվաբանական չորս գործողությունների նկատմամբ, առանց դժվարության կռահեց, որ վաճառողուհին սխալվում է:

Նա գլուխն առաջ թեքեց, ներողամտությամբ ու բարյացակամորեն նայեց վաճառողուհուն և կամացուկ ասաց.

- Սխալվեցիր, աղջիկ ջան, հաշիվդ ճիշտ դուրս չեկավ:

- Յա,- զայրացած նրան նայեց վաճառողուհին,- քեզ ո՞վ ասաց:

- Դու ասացիր, աղջիկ ջան,- նույն մեղմությամբ բացատրեց Մովսես ապերը:- Էդ քո ասած թվերի գումարն անում է երեք մանեթ երկու կոպեկ: Իսկ դու ասում ես երեք մանեթ հիսուն կոպեկ:

Ձեռքի մատանիների նման սառը փայլով շողշողացին նաև վաճառողուհու աչքերը:

- Աման, ասա տեսնեմ դու ինչ ես ուզում,- գրեթե հարձակվեց նա Մովսես ապոր վրա:- Քանի՞ հատ մածուն, քանի՞ հատ կաթ:

- Ուզում եմ, որ ճիշտ հաշվես, աղջիկ ջան,- համբերատարությամբ իր խոսքն առաջ տարավ Մովսես ապերը:- Սխալից ետ կանգնելը լավ բան է: Ի՞նչ կա որ, ամեն մարդ էլ կարող է սխալվել, որովհետև մարդս իր բնույթով սխալական է, և անսխալական մարդ չկա, համա կեցցե էն մարդը, որ ճիշտ ժամանակին զգում, այսինքն ուղղում է իր սխալը: Որովհետև գուցե թե...

Իր դրամի մանրը ստացած կինը շրջվել ու տարակուսանքով դիտում էր անկոչ բարերարին: Հերթ կանգնած մարդիկ ևս ձգել էին իրենց գլուխները և ականջ էին դնում խորին բավականությամբ:

- Լսիր, ի՞նչ ես ինձ կպել,- ձեռքի փայտե հաշվիչը շրխկոցով սեղանին խփեց վաճառողուհին:- Ո՞վ ես դու, ՕԲԽՍՍ ե՞ս, թե հսկիչ: Ընկերուհին չի բողոքում, քեզ ինչ...

Մովսես ապերը նայեց ընկերուհուն, տեսավ, որ նա իսկապես չի բողոքում ու շփոթվեց.

- Ընկերուհին կարող է թե անգրագետ է,- դրությունը ճարպկորեն փորձեց փրկել նա,- բայց ես ու դու էլ հո անգրագետ չենք:

Եվ հանկարծ ընկերուհին ճչաց,

- Ով է անգրագետ, ֆու, կակայա նազլուստ, անգրագետը դուք եք, մի ձեզ նայեք, ձեր հագուստին նայեք, զգվում եմ մելոչնի մարդկանցից, սրանցից մեկն էլ մեր տանը կա: Ետ կանգնեք, ձեր այդ փոշոտ շորերով մի կպեք ինձ,- բղավեց նա, թեև տարաբախտ Մովսես ապերը շատ հեռու էր նրանից:- Այս քաղաքը տեր չունի, տեր,- չէր հանգստանում խորապես վիրավորված կինը:- Քաղաք մտնող ավտոբուսներն ստիպում լվանալ, իսկ մարդկանց ազատ բաց են թողնում: Ֆի~:

Մովսես ապոր ձեռքերը դողացին: Կյանքում ոչ ոք, ոչ ոք այդ տոնով նրա հետ չէր խոսել, այդպես չէր վիրավորել նրան: Մեկ ուզեց ապտակել, նույնիսկ փորձեց ետ տանել դատարկ շշերը բռնած զամբյուղը, բայց ինչպես ծանր, մղձավանջային երագում, ձեռքը չենթարկվեց

նրան: Ուզեց խոսել, կարկամել էր լեզուն: Եվ նա իր ամբողջ հիասթափությունը, ցավը, զայրույթը կարողացավ ընդամենը մի բացականչությամբ արտահայտել.

- Պա՛հ,- ասաց նա:

Նա անօգնական հայացքով ետ նայեց դեպի հերթ կանգնածները, սպասելով նրանց միջամտությանը, և այդ միջամտությունը չուշացավ:

- Էդ ո՞վ է, է՜ - ձայն տվեց մեկը:

- Ա՛յ մարդ, դու հո փորձանք չես, առնում ես, առ, չես առնում, դուրս արի հերթից,- բղավեց մյուսը:

- Մի կոպեկի համար իրար է խառնել աշխարհը: Իսկ տանը երևի փողերը նավթալինի մեջ է պահում,- ծիծաղեց երրորդը՝ նվիրված հայացքով նայելով վաճառողուհու դեմքին:

- Ոնց որ մի քիչ պակաս լինի,- մատը դեպի քունքը տարավ չորրորդը:

- Մեր պետությանն ասա, որ անընդհատ արտոնություններ է տալիս դրանց, փոխանակ ծերանոցներում փակելու,- ընդհանրացրեց խոսքուտած ձայնով մի կին:

Հերթը չարացավ, աղմկեց: Եվ Մովսես ապերը հանկարծ խիստ վախեցավ: Ուզեց թողնել, հեռանալ, չկարողացավ ու այդպես էլ մնաց կանգնած դողացող ձեռքերով ու բերանով:

Եվ այդ շրջապատում միակ մարդը, որ հաղթողի մեծահոգությամբ, այնուամենայնիվ, կարեկցեց նրան, վաճառողուհին էր:

- Դե, լավ, լավ,- աստեղ նա աղմկող ամբոխին:- Մեծ մարդ է սխալվեց, ի՞նչ եք վրա տալիս: Հո չեք սպանելու: Ինչ ես ուզում, հայրիկ, դու ինձ լսիր, ի՞նչ ես ուզում, ի՞նչ...

Մովսես ապերն ակամա, ասես երազի մեջ, կերկերուն ձայնով ինչ-որ բան ասաց, վաճառողուհին վերցրեց դատարկ շշերն ու փոխարենը ինչ-որ բաներ դրեց, չիկչիկացրեց փայտե հաշվիչի վրա, ինչ-որ թիվ ասաց, Մովսես ապորից ինչ-որ դրամ վերցրեց ու ինչ-որ կոպեկներով վերադարձրեց:

Եվ Մովսես ապերն իրեն գտավ փողոցում: Նա քայլում էր արագ-արագ, շնչակտուր, ասես փախչում էր, ու քիչ հետո միայն հասկացավ որ իրենց տան հակառակ կողմն է գնում:

Մովսես ապերը կանգ առավ, պղտորված հայացքով նայեց շուրջը, ետ դարձավ ու հիմա էլ շատ դանդաղ, ոտքերը հազիվ քարշ տալով, քայլեց դեպի տուն՝ մտքի մեջ ակամա, մեքենայաբար հաշվելով իր գնումները, որպեսզի ուրիշ բանի մասին չմտածի ու որպեսզի հանկարծ չհայհոյի բարձրաձայն: Եվ երբ արդեն իրենց շենքի մուտքին էր հասել, միանգամից հասկացավ, որ վաճառողուհին, այնուամենայնիվ, կաթ ու մածնի համար իրենից ավելի է վերցրել վաթսունութ կոպեկ:

Մովսես ապերը գլուխը դեպի խանութը դարձրեց ու ծանր թառանչի նման ետ նետեց ամբողջ հոգով.

- Թո՛ւ...

Մարկոս Մարգարյանը բարձրաձայն ծիծաղեց...

- Ճիշտն ասած, ես էլ լինեի, կվախենայի,- ասաց նա:

- Պատկերացնում ես,- ասաց տիկին Սիրարփին:- Ես կարծում եմ, թե նա պատշգամբում քնած է, իսկ ինքը դռան ետևից ասում է «Ես եմ, ես»:

Մարկոս Մարգարյանը նորից ծիծաղեց բարձրաձայն, ըստ սովորության մատները մեքենայաբար սահեցնելով ճակատն ակոսող չորս հատ մազի վրայով, ասես մեղմորեն նվազելով կիթառի լարերի վրա:

- Ի՞նչ կարող ենք անել, Սիրարփի, սիրելիս,- ասաց նա:- Մեծացել է հայրիկը: Ո՞վ գիտե, թե մենք նրա տարիքում ինչ տարօրինակություններ կունենանք: Քիչ առաջ էլ տեղամասային տեսուչը զանգահարեց: Հացի խանութում ինչ-որ հիմար պատմության մեջ է ընկել, սկսել է արկղեր տեղափոխել...

- Տեսնո՞ւմ ես,- ոգևորվեց տիկին Սիրարփին:- Ախր, գոնե հանգիստ նստի իր տեղը: Չէ՛, հիմա էլ ստիպեց, շշերը վերցրեց ու խանութ գնաց: Երկու ժամ է, չկա: Հիմա երևի խանութն իրար է խառնել: Անցյալ անգամ չէ՞ս հիշում: Վաճառողուհուն ստիպել էր «Ջերմուկի» շշերը սրբել, նոր տալ: Քիչ էր մնացել ձեռեխին: Չես թողնում՝ չի լինում, թողնում ես՝ չի լինում: Չգիտեմ, չգիտեմ...

Նա այնպես արտասանեց այդ «չգիտեմները», որ նշանակում էր, թե հիանալի գիտեմ, որ այս ամենի վերջը վատ է լինելու, շատ վատ: Եվ զգուշացնում էմ: Չեմ բարկանում, տես, բայց այսպես մեղմ, սիրալիր, զգուշացնում եմ:

Ինչ-որ տեղից խուլ, համաչափ թխկթխկոցներ լսվեցին: Մարկոս Մարգարյանը թեքեց գլուխն ու ականջ դրեց մի պահ:

- Արշակն արթնացել է,- ասաց նա:

- Հա , - հոնքերը կիտեց տիկին Սիրարփին,- ամբողջ օրն էլի գլուխ է տանելու:

- Բայց սիրուն բաներ է սարքում,- զգուշորեն ասաց Մարկոս Մարգարյանը:- Վերջին մոխրամանը տեսե՞լ ես: Հաստատ շնորհք ունի մեր տղան:

Տիկին Սիրարփին խոր հոգոց հանեց:

- Դե, եթե շնորհք չունենար, ինչո՞ւ պիտի իրավաբանականն ավարտելուց հետո նստեր տանն ու մոխրամաններ սարքեր: Ամոթից չգիտեմ, թե որտեղ թաքցնեմ գլուխս: Իսկ դու ասում ես, թե շնորհք ունի մեր տղան: Էլ ինչո՞ւ սովորեց հինգ տարի, ինչո՞ւ: Վառվեցի, տանջվեցի ես դրա ձեռքից:

Մարկոս Մարգարյանը զգաց, թե ինչպես օրինական գայրույթից հանկարծ վառվել սկսեցին ականջները:

- Դո՞ւ ես տանջվել, թե ես,- հարցրեց նա խստությամբ:- նրան ո՞վ է համալսարան ընդունել տվել, դո՞ւ, թե ես: Հինգ տարի շարունակ ո՞վ է տվել նրա քննությունները, դո՞ւ, թե ես: Ո՞վ է դիպլոմային աշխատանքը գրել, դո՞ւ, թե ես: Ո՞վ է մեկ-մեկ հանձնել պետական քննությունները: Դո՞ւ, թե ես: Ո՞վ է նրա համար քննիչի տեղ գտել դո՞ւ, թե ես: Գիտեմ, շատ դժվար է, բայց կյանքում գոնե մի անգամ անաչառ եղիր, ձեռքդ սրտիդ դիր ու ասա. ես չեի՞ ասում, թե եթե ինքը չի ուզում, ուրեմն, չարժե, որ իրավաբանական ֆակուլտետ ընդունվի: Չեի՞ ասում:

Տիկին Սիրարփին հեծկլտաց և ամուսնուն պատասխանեց նույն անկեղծությամբ, նույն ցավով ու տրտմությամբ, աշխատելով պահպանել նույնիսկ նրա հռետորական շեշտադրումները:

- Իսկ վա՞տ կլիներ, եթե իրավաբան դառնար: Հը՞: Վա՞տ կլիներ, եթե ապահով ու բարեկեցիկ կյանքով ապրեր: Հը՞: Վա՞տ կլիներ, եթե մարդիկ կախում ունենային նրանից, գլուխ խոնարհեին նրա առջև աշխատեին վայրկյան առաջ կռահել ու կատարել նրա ցանկությունները: Հը՞: Վա՞տ կլիներ, եթե նմանվեր իր հորը, նրա նման հարգանք ու պատիվ ունենար շրջապատում: Հը՞ :

- Է՜հ,- փափկացած ու մեղմացած հառաչեց Մարկոս Մարգարյանը:

- Իսկ նա, դիպլոմավոր իրավաբանը, սուներ լցրել է այդ անիծյալ երկաթներով և, մուրճն առած, օր ու գիշեր թխկթխկացնում է իմ նյարդերի վրա: Եվ ո՞ւմ է քաշել, տեր աստված, ու՞մ է քաշել, ոչինչ չես հասկանում:

- Ինչո՞ւ չես հասկանում,- կնոջն ընդհատեց Մարկոս Մարգարյանը:- Հասկանում ես, բայց խնայում ես ինձ: Իսկ ես ինձ չեմ խնայի հենց իր պապին է քաշել, էլ ում:

«Պապ» բառի վրա, ասես վաղօրոք պայմանավորված, միաժամանակ բացվեց իրավաբան-դրվագողի սենյակի դուռը, մեղմիկ երջանկությամբ դողանջեց դռան զանգակը և պապն ու թոռը հայտնվեցին իրար դիմաց:

Նրանք շատ էին իրար նման, այդ պապն ու թոռը: Միայն թե թոռը մի քիչ ավելի տարիքով էր երևում, որովհետև պապի թավ բեղից բացի լայն ու առատ մորուք ուներ նաև:

Մոռացած վիրավորանք ու վիշտ, պապն առաջ մղվեց միանգամից, բայց տիկին Սիրարփիի աներևույթ կարգադրությամբ սկզբում ակամա հանեց կոշիկները, ցած դրեց զամբյուղն ու նոր միայն պարզեց ձեռքերը:

- Արի, արի, պաչեմ քեզ, իմ թոռնիկ, իմ պապ,- ձայնեց նա:

- Ապեր ջան, ո՞նց ես, է , ո՞նց, ապեր,- թոռնիկը գրկեց պապին, բարձրացրեց, պտտեցրեց օդում և նրա հուսահատ դիմադրության վրա ժպտալով, տարավ խնամքով իջեցրեց խոհանոցի աթոռին:

- Այ տղա, շունչս, այ տղա,- հևասպառ գոռգոռում էր պապը:- Արջ ես, է, իսկական քուլի արջ:

Տիկին Սիրարփին նայեց ամուսնուն:

- Իրար գտան,- ասաց:

Նա վերցրեց զամբյուղը, խոհանոց բերեց, բացեց ու սկսեց հերթով սեղանին դասավորել փաթեթներն ու շշերը:

- Է՞ս ինչ է,- հարցրեց զարմացած, սեղանին դնելով նաև օդու մի մեծ շիշ:

- Վա՞յ,- անկեղծորեն զարմացավ նաև պապը,- է՞դ որտեղից:

- Դու ես բերել, մե՞զ ես հարցնում,- գլուխն օրորեց Մարկոս Մարգարյանը:

Եվ Մովսես ապերը հիշեց.

- Հա՞յ,- ասաց նա:- Բոլորն աչքով էին անում, վերցնում էին, մտածեցի, թե երևի պետքական բան է: Ուրեմն արաղ է՞ր: Արաղն էլ են էստեղ տակից տալիս:

- Մինչև ժամը տասնմեկը օդու վաճառքն արգելված է, ապեր,— որպես գիտակ, բացատրություն տվեց թոռը:

- Ինչի՞ - հարցրեց պապը:

- Պապ ջան, մի անեկդոտ պատմեմ, նոր բացատրեմ, հա՞: Ուրեմն, մի քյավառցի ընկերոջն առաջարկում է խմել: «Չեմ կանա,- ասում է ընկերը,- բժիշկն ինձ թույլ չի տալիս»: «Այ տղա,- ծիծաղում է քյավառցին,- գնա խոսի հետը, ինձ էլ թույլ չէր տալիս, համա որ մի հիսուսանոց տվեցի՝ թույլատրեց»: Հիմա հասկացա՞ր: Համընդհանուր պայքար է ակոհոլիզմի, այսինքն՝ հարբեցողության դեմ, ապեր: Դրա համար էլ խանութպանները մի-մի ռուբլի ավել են վերցնում ու նոր են թույլատրում խմել: Գլխի ընկա՞ր:

- Էս ի՞նչ է, - յուղաթուղթը նողկանքով ետ տանելով, հարցրեց տիկին Սիրարփին:

- Հալվա է, հալվա,- ուրախ ասաց Մովսես ապերը:- Մեկ էլ երեխա վախտս եմ կերել: Որ տեսա, չղիմացա:

- Հիմա ո՞վ է հալվա ուտողը, այ ապեր,- դժգոհեց հարսը,- ադրն ես ավելացնո՞ւմ:

- Վայ, ինչի՞, ի՞նչ է պատահել, ա հարս,- նեղացավ Մովսես ապերը:- Թող մնա, ես կուտեմ:

- Ես էլ,- վրայից մի կտոր թոցնելով, բերանը տարավ թոռը:

Մովսես ապերը ծիծաղեց երջանիկ:

- Տեսա՞ք,- ասաց նա հաղթական: - Թափեմ... աստծուն մի բարկացրեք:

- Բա սա՞ ինչ անենք,- էժանագին երշիկը սեղանին դրեց տիկին Սիրարփին:

- Կուտենք, ի՞նչ կանենք,- ասաց պապը, նայելով թոռանը և նրա աջակցությունը ակնկալելով:

Սակայն այդ երշիկին նայելուց հետո նույնիսկ Արշակը մի կողմ քաշվեց:

- Չենք ուտի՝ կտանք շանը,- մեծահոգաբար ասաց Մովսես ասպերը:-Առանց էդ էլ ես մեղավոր եմ խեղճի առաջ, որ կերել եմ իրա փայ ճաշը...- ասաց, հետո հիշեց, որ հարսին խնդրել էր չպատմել ոչ ոքի և կծեց շրթունքը:

Մեղմիկ դողանջեց մուտքի գանգը: Արշակը բացեց դուռը, և դռան առջև հայտնվեց ներքևի հարկի բնակիչ, ինժեներ Ս. Տ. Իշխանյանը: Նա շփոթված ու կործանված տեսք ուներ և ամռան այդ շոգին կոկորդը փաթաթել էր շալով:

- Մայրիկ, քեզ են ուզում,- ձայնեց Արշակը:

Տիկին Սիրարփին միջանցք գնաց, և քիչ անց այնտեղից պարզ լսվեց ինժեներ Ստեփան Իշխանյանի խոսուտած ձայնը.

- Ես այնքան հուզված եմ... խելագարվում եմ ես... Արփիկը հեռանում է տնից:

Բոլորի ուշադրությունը ինժեներ Ստեփանի կողմն էր, ոչ ոք չնկատեց, թե ինչպես է կծկվել-մնացել և ինչպես է ուզում ջնջվել, անհետանալ, վերանալ աշխարհից կամ գոնե աշխարհի այս անկյունից դարբին Մովսես ասպերը:

- Ինչո՞ւ,- անկեղծ զարմացավ տիկին Սիրարփին:- Ինչո՞ւ է

ուզում հեռանալ:

- Չգիտեմ, ոչինչ չի ասում... ոչինչ... եկավ հերթապահությունից... վշտի մարմնացում... մարմարե հայացք... Ասաց, որ գնում է... իրերն է հավաքում... Եվ «Նաիրի» գորգը... Եվ այլ, և այլ բաներ, որ համատեղ աշխատանքով ենք ձեռք բերել, և, ուրեմն, կեսն իմն է... Բայց թքած... նա լքում է ինձ...

- Կաշմար կակոյ տո,- սաստիկ զարմացավ տիկին Սիրարփին: - Իսկ դու որևէ առիթ չե՞ս տվել, Ստեփան... նու... ինչպես ասեմ... որևէ այնպիսի բան չե՞ս արել, որ...

- Ի՞նչ եք ասում, տիկին Սիրարփի... ինքներդ էլ գիտեք... Ես պաշտում եմ նրան... խելագարվում եմ... ես առանց նրա ապրել... չեմ կարող...

«Մուտ ես ասում, շան որդի,- մտքում ասաց Մովսես ասպերը,- մեղք ես, բայց շան պես սուտ ես ասում»:

- Նա ձեզ շատ է հարգում... աղաչում եմ... եկեք խոսեք հետը...Թող գոնե բացատրի... ինչպե՞ս կարելի է... հենց այնպես... շատ եմ խնդրում...

- Գնանք, գնանք,- սիրով համաձայնեց տիկին Սիրարփին, որովհետև նախ, հակառակ Մովսես ասպեր անձայն աղոթքների առ աստված, հետաքրքրությունից պայթում էր հարևանուհու հանկարծակի հեռանալու պատճառը վայրկյան առաջ իմանալու համար: Երկրորդ որովհետև կին էր: Իսկ ո՞ր կինը գոնե հոգու խորքում չի ուրախանում, տեսնելով, թե ինչպես է երերվում իր ընկերուհու ընտանիքը, որը նրան հնարավորություն է տալիս

հաճելիորեն շոյվել և ողողվել սեփական երջանկության գիտակցությամբ և միաժամանակ անկեղծորեն կարեկցել, սփռվել, օգնության հասնել դժբախտության մեջ ընկած ընկերուհուն՝ հանուն ճնշվածների համերաշխության, ընդդեմ համայն աշխարհի տիրակալ տղամարդկանց, որոնք բռնորեն էլ, ի վերջո, մի սանրի կտավ են: Մարկոս Մարգարյանը խոհանոցի հայելու մեջ տազնապով և ուշադիր հաշվեց ճակատի մազեր: Ամեն ինչ կարգին էր:

- Շատ տարօրինակ է,- ասաց նա,- հիանալի, համերաշխ ընտանիք էր: Բայց ահա, խնդրեմ, ևս մի դատական քաղաքացիական գործ:

Մովսես ապերը պատուհանից դուրս էր նայում: Նրա սիրտը խփում էր արագ-արագ՝ շիկացած մետաղին իջնող փոքրիկ մուրճի նման: Միտն էին գալիս Մանուկ հասակում սարում, անձրևի ժամանակ վրանի տակ զանազան հեքիաթներ՝ մարդուն աներևոյթ դարձնող կախարդական քարի մասին, թոչնո՞ղ գորգի և սև ձիու մասին, որի մազը վառում էիր թե չէ՝ հայտնվում էր խրխիհնջով ու մարդկային լեզու առած հարցնում, «Ասա , որտե՞ղ տանեմ քեղ, տեր»:

- Մեր գյուղ,- չզգալով, որ բարձրաձայն է խոսում, հառաչեց, մրմնջաց Մովսես ապերը:- Մեր գյուղ...

- Էդ ի՞նչ ես խոսում, ապեր,- ծիծաղեց Արշակը:- Քե՞զ ինչ է պատահել, նրանք բաժանվում են, դո՞ւ ես մտածում: Արի, արի իմ արհեստանոցը, մի տես թե ինչե՞ր եմ սարքել: Արի...

Նա առաջ ընկավ, ու Մովսես ապերը մոլոր քայլերով հետևեց նրան: Եվ արդեն սահել-անցել էր հայելապատ միջանցքը, երբ ճապոնական մենահայելու վրա դրված հեռախոսը կատաղորեն գնգաց: Մովսես ապերը սպասեց, որ որդին կամ թոռը վերցնեն լսափողը, բայց ոչ մեկը չէր մոտենում, և հեռախոսը շարունակում էր զանգել: Մովսես ապերը մի անգամ ևս անօգնական նայեց շուրջը և վերցրեց լսափողը:

- Հա , - գոռաց նա, - լսում եմ...

Եվ հենց այդ վայրկյանին, անդրավարտիքը փութկոտ կոճկելով, իրեն միջանցք նետեց Մարկոս Մարգարյանը:

- Ես տանը չեմ, ես տանը չեմ,- բղավեց նա:

- Ինչ,- հարցրեց Մովսես ապերը: -Ո՞ւմ... Մարկ Մոխսեյիչի՞ն...

- Ես տանը չեմ, ես տանը չեմ,- բղավեց Մարկոս Մարգարյանը: Մովսես ապերը իրեն կորցրած մի քիչ իջեցրեց լսափողը:

- Այ տղա, ո՞նց ասեմ տանը չես, երբ որ հրես տանն ես,- շշուկով սրտնեղեց նա, զզվանքով, ասես լորտու էր ձեռքին, որդուն պարզելով լսափողը:

Մարկոս Մարգարյանը, ձեռքերն ու շրթունքներն անձայն շարժելով, փորձում էր ինչ-որ բան հասկացնել հորը, բայց Մովսես ապերը նրա մնջախաղը ընկալելու կարողություն ու տրամադրություն չունեիր:



- Առ ու դու ասա, որ տանը չես,- ջղայնացավ նա, կտրուկ շարժումով որդուն նետելով լսափողը:- Օր-ծերության քո երեսից սուտասան եմ դառնալու, աննամուս:

Մարկոս Մարգարյանը որսաց լսափողը, մի պահ հուսահատ կատաղությամբ նայեց հոր զայրացած դեմքին, լսափողը ցած պահեց, գլուխը բարձրացրեց, ճակատը կնճռոտելով ինչ-որ խոսքեր փնթփնթաց, ասես անգիր էր անում ասելիքը և հետո նոր միայն լսափողը ականջին տարավ:

- Այո,- ասաց նա հանգիստ,- Չգիտեմ: Խոսել եմ: Տեսնենք: Հավանաբար: Իհարկե:

Լսափողը ցած նետեց ու ճերմակած դեմքով դարձավ հորը:

- Քեզ ո՞վ էր ասում, որ հեռախոսին մոտենայիր, հը՞, քե՞զ ինչ, թե՞ զնգում էր: Չե՞ս կարող հանգիստ մնալ, այ մարդ: Դու ուրիշ բան ու գործ չունե՞ս: Այ հայրիկ, ա յ, ես քո ցավը տանեմ,- զգալով, որ չափն անցնում է, հետզհետե մեղմացավ Մարկոս Մարգարյանը,- մի բան որ անում ես, հարցրու, նոր արա, էլի: Մի բան որ ասում են, լսիր էլի: Մեզանից ի՞նչ ես ուզում դու...

- Վահ,- շվարեց Մովսես ապերը,- բայց ես ի՞նչ եմ արել, ձեզ մատաղ:

Եվ կարծես իբրև մի նոր պատասխան ծերունու անմեղ ու օրինական հարցին, ամուր շրխկոցով կրնկի վրա բացվեց դուռը և իր շերտավոր զգեստով հովազի նման ներս նետվեց տիկին Սիրարփին:

- Հայրիկ,- ճչաց նա:- Հիմա էլ ընտանիքնե՞ր էք քանդում: Հերթը ե՞րբ է մեզ հասնելու: Է՞լ ինչ օյին ունեիք բերելու մեր գլխին: Ասեք: Արփիկը գնա՞ց...

\*

\*\*

- Չէ քե մատաղ, համոզիլ մի, գնալու եմ,- ասում էր Մովսես ապերը խոժոռված Արշակին, որը նրան հորդորում էր հանգստանալ և չհուզվել անհարկի:

Նրանք նստել էին Արշակի ննջարան-արհեստանոցում, որը ոմբակոծությունից հետո հիմնովին ավերված երկաթեղենի պահեստի էր նման: Ամենուրեք արույրի, պղնձի, մելքիորի և ուղղակի սովորական թիթեղի տաշեղներ ու թերթեր էին թափված, զանազան հղկող ու ծակող, տաշող ու հարթող, կտրող ու մամլող գործիքներ ու սարքեր, տարբեր չափերի սրվակներ ու շշեր: Բսկ այդ բոլորից վեր բարձրանում էր սեղանը՝ ազնվացեղ նժույզի նրբագեղ ոտքերով և ռոկոկո ոճի հարթաքանդակներով զարդարված կողերով մի երբեմնի սքանչելի գրասեղան, որը ֆրանսիական «Ալա Լուի» կահույքից անխղճորեն զատված, այստեղ, իրավաբան-դրվագող Արշակի

արհեստանոցում բարբարոսաբար ապականվել ու հոշոտվել էր ամբողջովին:

Խղճալի էր այդ նախկին գրասեղանին նայելը, որը ստեղծվել էր քնքուշ սոնետներ կամ գոնե անաչառ դատավճիռներ գրելու համար, իսկ հիմա պատված էր լաքի ու ներկի հաստ բծերով, ազնիվ փայտի մեջ խրված ու մնացած մեխերով ու թիթեղյա տաշեղներով, հոսանքից անջատելը մոռացած գողիչի բացած սև, զարհուրելի ակոսներով, քնթուկներով լեփլեցուն զանազան չափերի բազմաթիվ ու բազմակերպ մոխրամաններով: Իսկ գրասեղանի չորս կողմերում, նորակառույց շենքի շուրջը կնճիթները բարձրացրած վերամբարձ կռունկների պես, կանգնած էին ծակող ու մամլող մեքենաներն ու սարքերը:

Արշակը ծալապատիկ նստել էր հենց անկողնուն, մագախով գլուխն ափերի մեջ առած և աշխատում էր սփոփել գունավոր լարերից հյուսված միակ թիկնաթոռի մեջ խրված վշտացած պապին:

- Չէ՛ բալա ջան, չեմ նեղանում,- ասում էր պապը,- ու թե որ նեղանում եմ էլ ինձնից եմ նեղանում: Որովհետև ձախորդ մարդ եմ, է՛, անբախտ մարդ եմ: Ուզում եմ լավ բան անել, փիս բան է դուրս գալիս, ուզում եմ ուրախացնել մարդկանց, լացացնում եմ: Ես էստեղի լեզուն չգիտեմ, բալա ջան, լեզուն չեմ հասկանում: Ոնց որ աճուճ-պաճուճների աշխարհն ընկած լինեմ: Դե, ամբողջ կյանքս գյուղում եմ ապրել, ի՞նչ եմ տեսել, դրանից կլինի, էլի...

- Է՛, պապ ջան, իսկ է՞ս որտեղ եմ ապրել,- չգիտես անկեղծորեն, թե պարզապես Մովսես ապոռն սփոփելու համար, ասում էր Արշակը: - Ես էլ քաղաքում եմ ծնվել, մեծացել, բա իմ լեզուն ինչո՞ւ հասկացող չկա, բա է՞ս ինչի իրենց լեզուն չեմ հասկանում: Ուրեմն, այստեղ ուրիշ գաղտնիք կա: Տե՛ս, պապան ու մաման ինձանից նեղացել են, որ ես իրավաբան չդարձա...

- Է՛, դե նեղանալու բան ա, էլի՛,- տնքաց Մովսես ապերը:

- Չ, ապե՛ր, ճիշտ չի, ես քեզ ոնց բացատրեմ, դա հազար ու մի բանի հետ կապված հարց է, իսկ եթե մի խոսքով ասեմ՝ արյունի, բնավորության հարց է: Ես, օրինակ, գետինը կմտնեմ, բայց չեմ կարողանա որևէ մեկին հարցնել, թե որտե՞ղ էիր երեկ երեկոյան ժամը ուրիշ մինչև ժամը տասնմեկը: Ու թե որ պատասխանեց, սպանեա էլ, չեմ կարողանա ասել, թե սուտ ես ասում: Ես հավատացող մարդ եմ, հասկանո՞ւմ ես, պապ, ինչ որ ասեն պիտի հավատամ, որովհետև ես ուրիշ կերպ ապրել չեմ կարող: Իսկ իրավաբանը պետք է կասկածամիտ լինի, պիտի չհավատա, պիտի ստուգի, պիտի վերանայի իր կարծիքը, նորից ստուգի: Նոր փաստեր հավաքի, հարցաքննի հազար ու մի մարդու...

- Բա նրա գործն էլ դա է, ինչ պիտի անի:

- Արշակը ծիծաղեց:

- Ապրե՛ս, պապ ջան: Իմ ասածն էլ հենց դա է, որ կա: Որ ամեն մարդ իր գործը պետք է անի: Ինչ որ իր սիրտն է ուզում և ինչ որ ինքը, գոնե իր կարծիքով, բոլորից լավ կարող է անել: Տե՛ս, ինձ գոռով էին ուղարկում դասի, խրատում, սպառնում, պատժում էին: Հետո՞ : Ի՞նչ դուրս եկավ: Իսկ ես առանց ստիպելու հազար ու մի դժվարությամբ նյութեր եմ ճարում, գործիքներ հավաքում, փորձեր եմ անում, սովորում եմ, ու թե թողնեն՝ կաշխատեմ առավոտից մինչև երեկո, առանց հաց ուտելու:

- Այ տղա, էսքան ասում ես, ասում, ու ցույց չես տալիս, թե ինչ ես սարքում, դե, բեր տեսնեմ, էլի,- բողոքեց Մովսես ասպերը:

- Բերեմ, պա՛պ ջան...

Արշակը ցածրիկ պահարանից խնամքով փաթաթված ինչ-որ իրեր հանեց ու հերթով մեկնեց պապին, շարունակ նրա դեմքին նայելով ու աշակերտի նման տազնապած սպասելով գնահատականի :

Պապը ձեռքի մեջ շուռումուռ տվեց պղնձե փոքրիկ եղնիկը, որ ամրացված էր կանաչ ու չեչուտ քարից պատրաստված պատվանդանի վրա: Նայեց, դրեց մի կողմ, հետո նորից վերցրեց, շոշափեց կոշտ մատներով, պահեց աչքերից հեռու և ժպտաց.

- Ա՛յ բալա, էս դու ես սարքե՞լ:

Արշակը ծիծաղեց երջանիկ ու նրան մեկնեց մի նոր փաթեթ:

Ոչ մեծ շրջանակի մեջ, պղնձե գորշ թերթի վրա ասեղով ծակծկելով, Արշակը ձի էր նկարել: Ասես ինչ-որ անորոշ տազնապից ձին ծառս էր եղել, խլշկոտել էր ականջները և վեր պարզել սքանչելի, փոքրիկ գլուխը: Գծերը նուրբ էին, հազիվ էին տարբերվում ընդհանուր ֆոնից և հեքիաթ էին հիշեցնում:

Մովսես ասպերը երկար-երկար դիտում էր նկարը մեկ մոտեցնելով աչքերին ու մեկ էլ հեռացնելով, հետո ժպտաց:

- Որ մի բան ասեմ, հո չես նեղանա, տղա ջան:

- Ասա, պա՛պ...

- Կարող է, թե ձեզ համար դա նշանակություն չունի, համա, երբ որ ձին բարձրացնում է գլուխը, առաջին ոտքերը չի ծալի: Ձիզ կպահի, հողին դիմահար տված, որովհետև ամեն վայրկյան պիտի կարողանա փախչել...

Արշակը ոչ այնքան վշտացած, որքան զարմացած ու հիացմունքով նայում էր պապին:

- Ճի՞ շտ, պապ... Իսկ դու որտեղի՞ց գիտես:

- Ե՛ս,- ծիծաղեց Մովսես ասպերը,- մազերիս համբարքով մեկ ձի եմ նալել, բալա ջան... էս մազերիս չափ չէ, է՛, առաջվա մազերիս չափ...

Արդեն ոչ առաջվա ինքնավստահությամբ Արշակը պապի դատին հանձնեց իր մյուս գործերը՝ գինու սափոր և աղաման, պարուհու կոփածո մի քանդակ և տարբեր, շատ ինքնատիպ մոխրամաններ Մովսես ասպորն առանձնապես դուր եկավ ոզնի-մոխրամանների ընտանիքը՝ մայր ոզնին իր ձագերի հետ, որոնք բոլորն էլ իրենց փշաքաղված կողերով վերջում տեղավորվում էին մայր ոզնու մեջ:

- Խելացի գործ է,- ասաց նա: - Համ պետքական բաներ են, համ է՛լ սիրուն:

Իսկ որպես գնահատական թոռան ողջ աշխատանքի՝ Մովսես ապերն ասաց.

- Մաքուր ձեռք ունես:

- Դե, տեսնո՞ւմ ես,- գովասանքից երեխայի նման հուզված՝ տրտնջաց Արշակը,- իսկ ինձ ասում են՝ իրավաբան դարձիր:

Մովսես ապերը զգուշությամբ նայեց դռան կողմը:

- Գործ չունես,- ասաց նա:

Ու երկուսն էլ ծիծաղեցին կամացուկ:

- Համա թե մի բան ցույց չտվեցիր ինձ,- թեև սկզբում վճռել էր չասել, բայց չդիմացավ պապը:- Էն ի՞նչ էր, որ բացեցիր, հետո փակեցիր վռագ-վռագ ու տարար դրիր այ էն կողմը:

- Ո՞ր,- հարցրեց Արշակը:- Ախ, հա՛, կիսատ գործ է ու կարծես թե չի ստացվում: Ցույց տալու բան չկա, պապ:

- Հը՛, հը՛,- պնդեց Մովսես ապերը,- բեր տեսնեմ, բեր...

- Դե, լավ էլի, այ պապ...

- Այ բալա, որ հիմի չբերես էլ, գիշերը թաքուն գալու եմ տեսնեմ,- ծիծաղեց Մովսես ապերը,- բա ես էդքան համբերություն ունե՞մ:

Արշակը տատանվեց, հետո կռացավ, պահարանի անկյունից հանեց մի փոքրիկ շրջանակ, մեկնեց պապին ու ինքն անմիջապես հեռացավ, կանգնեց պատուհանի մոտ:

- Դե, որ շատ ես ուզում, տես,- ասաց նա:

Մովսես ապերը նայեց ու միանգամից զգաց, որ շունչը կտրվում է: Ներսից մի բան բարձրացավ, կանգնեց կոկորդում, խեղդեց: Շրջանակի միջից նրան էր նայում Վարսենիկը: Ոչ այն Վարսենիկը, որին ինքը հողը դրեց իր ձեռքով երկու ամիս առաջ: Ոչ այն Վարսենիկը, որ ամեն օր, ամեն ժամ կանգնած էր նրա աչքերի առջև ու այրում, կսկծացնում էր սիրտը: Այլ նա, որին մեկ-մեկ երագում էր տեսնում՝ ցորնագույն մազերն ուսերն ի վար արձակ, բարակ երկար վզով, աչքերի մեջ կրակ... կրծքին՝ ոսկե խաչը...

Արշակը, իբրև հենք, իր սիրած գորշ-շիկավուն պղինձն էր ընտրել և ոչ թե մանրամասն դրվագել, այլ ուղղակի արույրի դեղինով ընդգծել էր հենց այն, ինչ Մովսես ապերը տեսնում էր երագում՝ ուսերն ի վար արձակ ցորնագույն մազերը, բարակ, երկար վիզը, աչքերի կրակը... կրծքին՝ ոսկե խաչը...

Մովսես ապերը փոճկաց ու առանց թոռից ամաչելու, համբուրեց շրջանակը, ինչպես սրբապատկերը կհամբուրեր:

- Ուրեմն, հիշո՞ւմ ես տատիդ, - խոպոտած ձայնով հարցրեց նա:

- Հա ~, ապեր, - ասաց Արշակը:

- Ուրեմն, նա էլ մնաց, ապրեց, - ասաց Մովսես ապերը, -մնաց, ապրեց գրքի նման, երգի նման, խաչքարի նման:

- Հա ~, - հուզվեց ու հպարտ ասաց Արշակը, - եղպես պիտի լինի, պապ: Ու մի օր, որ ցուցահանդես բացեմ,ամենալավ տեղում կախելու եմ սա ու տակն էլ գրելու եմ՝

«Տատիս դիմանկարը»:

Մովսես ապեր տրորվեց աթոռի մեջ:

- Վարսենիկ անունն էլ կգրես, տղա ջան, քեզնից ի՞նչ է գնում, գրի, թող մնա, էլի:

- Եղավ, պապ, -ծիծաղեց Արշակը: - Անպայման կգրեմ, անպայման... հիմա ի՞նչ ես ասում,գնո՞ւմ ես գյուղ, թե...

- Ինչի՞, ինչ է պատահել որ, - ամեն տեսակ դառնություն մոռացած, բարիացած ու անչար ծիծաղեց Մովսես ապերը:

\*

\*\*

Նրա տրամադրությունն այնքան էր բարձրացել, ասես հարբած լիներ: Հաստատ որոշել էր խռով մնալ, հաց չուտել, մինչև ճանապարհի գցեն իրեն, բայց երբ տիկին Սիրարփին Արշակի սենյակը մտավ, ծիծաղեց և խառնվեց վարագույրի ետևում հայտնաբերեց նրանց և ճաշի հրավիրեց, պապն ու թոռը դեռևս իրենց տրամադրության մեջ, իրենց աշխարհում, անտրտունջ լվացվեցին, նստեցին սեղանի շուրջը:

- Հը, մի-մի բաժակ օղի չխմե՞նք,- չափազանց ոգևորված հարցրեց Մարկոս Մարգարյանը:

Պապը հազաց:

- Այսինքն՝ ախորժակի համար մի բաժակը չի խանգարի:

Ասաց ու թունդ կարմրեց, որովհետև նրան թվաց, թե բոլորն էլ տեսնում են, որ ինքը հիմա գայլի նման քաղցած է:

Բոլորն էլ յուրովի իրենց մեղավոր էին զգամ միմյանց առաջ:Ի վերջո, մարդիկ էին, հո, ինչպես տիկին Սիրարփին էր սիրում ասել, գազան չէին:Այդ պատճառով էլ ընդգծված սիրալիր էին իրար նկատմամբ:

- Մի փոքրիկ էլ դու խմիր, իմ բազմաչարչար գեղեցկուհի,-ասում էր իրավաբանը՝ գորովանքով նայելով կնոջը:

- Հայրիկ, հավի այ այս բուրդը վերցրեք: Ձեռքով, թռչունը կարելի է ձեռքով ուտել, հորդորում էր տիկին Սիրարփին:

- Դե, ասեք՝ մարդավարի, էլի, - խնդանդում էր Մովսես ասերը:

- Արշա՛կ, ասերը հավանն է՞ գործերդ,- բարյացակամորեն հետաքրքրվեց Մարկոս Մարգարյանը:

Մովսես ասերը գլխից վեր բարձրացրեց հավի կրծած բուրդը:

- Դուք դեռ օրհնելու եք էն օրը, որ Արշակ Մարգարյանը աշխարհ եկավ:Մեր ցեղը հիշվելու է նրանով:

Արշակը թավ մորուքի տակ հավանաբար կարմրեց, որովհետև ասաց.

- Դե, լավ էլի, պապ, հանկարծ կհավատամ:

- Եվ հավատա, հա , - շեշտեց Մովսես ասերը:- Եվ գիտե՛ս ինչի, որովհետև, տղա ջան, համ մաքուր ձեռք ունես, համ էլ մաքուր հոգի:

Հատկապես ընդգծված և այն էլ երկու անգամ շեշտված «մաքուր» բառը ուղղակի սղոցեց Մարկոս Մարգարյանի լսողությունը: «Անիմաստ բառ է,- մտածեց նա գրեթե փիլիսոփայելով,- անիմաստ բառ է, որովհետև բնության մեջ զուտ «մաքուր» ոչինչ չկա: Ամեն ինչ հարաբերական է և խառնուրդ: Եվ այդ տեսակ բառերը, ասենք թե նույն այդ «մաքուրը», «ազնիվը», «վճիտը», «բարին», պղպջակներ են, բանաստեղծների սարքած բաներն են, որոնք ոչինչ չեն արտահայտում և պարզապես ստեղծվել են հանգերն իրար հարմարեցնելու համար»:

... Եվ Մարկոս Մարգարյանը տհաճությամբ հիշեց իր մանկության ընկերոջը՝ միլիցիայի գնդապետ Հունան Մարկոսյանին: Գնդապետ է դարձել, բայց էլի նույն անհոգ, անլուրջ տղան է: Գործի բնույթով երբեմն-երբեմն գալիս է այն հիմնարկը, որտեղ Մարկոս Մարգարյանն է աշխատում:Գալիս է թե չէ, հարկ է համարում հերթով բացել բոլոր դռները և սենյակներում նստած ծանրախոհ, պատկառելի, խրթին գործերի մեջ խորասուզված մարդկանց ողջունել՝ գրեթե անպատկառ լրջությամբ ասելով.

- Բարև ձեզ, ազնի՛վ մարդիկ...

Եվ մի՞ թե բնական չէ, որ մարդիկ վիրավորվում են, ուզում են պատասխանել, բայց վախենալով նրա չար, կծու լեզվից, լռում են:

- Բարև ձեզ, ազնի՛վ մարդիկ,- կրկնում է նա, և իբր թե չի զգում, որ արհամարհում են իրեն, հարցնում է՝ զարմանք ձևացնելով:- Ինչո՞ւ չեք պատասխանում, ես ձեզ ի՞նչ ասացի: Ասում եմ՝ «Բարև ձեզ, ազնի՛վ մարդիկ»:

Եվ այսպես ամեն անգամ, ամեն անգամ, սաղիստի պես: Մարդկանց այն վիճակի է հասցնում, որ չեն իմանում ինչ պատասխանեն: Դե, հո բոլորն էլ Մարկոս Մարգարյանի նման խելոք չեն,

որ լռեն ու միայն ժպտան: Խորին արհամարհանքով: Լիպարիտ Սոխակյանն, օրինակ, վերջերս չդիմացավ, այլևս և երբ աներես Հունանը արդեն որերորդ անգամ. «Բարև ձեզ, ազնիվ մարդիկ», Լիպարիտ Սոխակյանն էլ ջղայնացած նետեց, թե.

- Ազնիվը դու ես...

Եվ շատ հիմար բան ստացվեց: Այդպիսի մարդկանցից պետք է շատ զգույշ մնալ: «Ազնիվ» բառը հենց այնպես ոչ մեկը չի ասի, իսկ եթե ասում է, ուրեմն, պետք է մտածես, թե ինչ նպատակով է ասում: Ծուղակը չպետք է ընկնես:

... Իսկ ընտանեկան սեղանի շուրջը կենացներն, ինչպես ասում են, գնալով քաղցրանում էին:

Մովսես ապերը անհանգիստ օրորվեց տեղում, որից նրա տակ աթոռի երեսին փռված թափանցիկ մոմլաթը դարձյալ անհարմար ձևի ճրճրոցաց: Նա բարձրացրեց օղու բյուրեղապակյա երկարապոչ բաժակն ու ասաց.

- Կներեք ինձ, տղա ջան, հարս ջան, մեծ մարդ եմ ու հին խոսք է, թե մեծ մարդն ու երեխան մի բան են: Ճիշտ խոսք է:

- Վերջ տուր, պապ,- բողոքեց Արշակը:

- Չէ՛, բալա ջան, պիտի ասեմ,- ասաց Մովսես ապերը:- Ես էլ եմ հասկանում, որ ձեզ շատ եմ նեղություն տալիս, համա, աստված վկա, դիտմամբ չեմ անում: Էդպես է դուրս գալիս:

- Դե լա՛վ, լա՛վ, հայրիկ,- մեծահոգաբար միջամտեց Մարկոս Մարգարյանը:- Ամեն ինչ հասկանալի է: Մենք այդ թեմայով խոսեցինք Սիրարփիի հետ և եկանք այն ընդհանուր եզրակացության, որ դու փաստորեն մեղք չունես այդ չարաբաստիկ պատմության մեջ: Այսպես ասած՝ հանգամանքներն են այդպես դասավորվել:

- Եվ վերջապես...- մազերը թափահարելով, գլուխը բարձրացրեց տիկին Սիրարփին...- և վերջապես, եթե այդ տղան, կներեք արտահայտությանս, լրբությամբ է զբաղվում, մե՞նք ենք, որ պետք է հովանավորենք նրան: Այստեղ են ասել... այստեղ են ասել...

Տիկին Սիրարփին փորձեց համապատասխան ժողովրդական իմաստություն հիշել այդ կապակցությամբ և, ինչպես միշտ, Արշակը խանգարեց նրան, իր սովորությամբ մի անկապ առած մեջտեղ բերելով.

- Մի լինի ուրագի պես՝ միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ...

- Հա՛, - ասաց տիկին Սիրարփին և անմիջապես էլ սթափվեց,- չէ, ի՞նչ ես ասում, այ տղա: Էն մյուսը, որ ասում է՝ «Սելը ճոռալու փոխարեն սելվորն է ճոռում»:

Բոլորը ծիծաղեցին, սեղանն ավելի ջերմացավ, և Մովսես ապերը շարունակեց սրտաշարժված:

- Ուրեմն, ներող եղեք: Թե որ մի էնպիսի բան անեմ, որ հնարավոր լինի բանի տեղ չդնել, բանի տեղ մի դրեք: Իսկ թե որ էնպիսի մի բան անեմ, որ հնարավոր չի բանի տեղ չդնել, ներս մի

զգեք, երեսիս ասեք, ես չեմ նեղանա, սովորեցրեք: Որովհետև...- ասաց Մովսես ապերը,- որովհետև էս քաղաք կոչվածում էս համարյա քոռ մարդու նման եմ ման գալիս՝ ոտքերիս տակը տնտղելով ու ձեռքերս առաջ մեկնած: Ուրեմն,- հանդիսավոր ավարտեց իր խոսքը Մովսես ապերը,- ուրեմն, մի սպասեք, որ փոսն ընկնեմ, կամ էլ թե դիպչեմ, վնասեմ անմեղ մի մարդու: Բռնեք ձեռքս ու անցկացրեք ինձ համար էս նեղ-նեղ տեղերով, մինչև որ տեսնենք ինչ է լինում:

- Այ պապ, դու իսկական հոռետոր ես, ցավդ տանեմ,- տեղից վեր թռավ Արշակը:

- Ի՞նչ եմ, ի՞նչ եմ,- չհասկացավ Մովսես ապերը:

- Ասում եմ՝ դու պիտի իրավաբան դառնայիր, դու...

- Վայ թե անգրագիտությունս խանգարեք, ա՛յ բալա,- որոշ կասկած հայտնեց Մովսես ապերը:

- Չէր խանգարի, չէր խանգարի, ընդհակառակը,- բղավեց Արշակը և քրքջալով դարձավ հոր կողմը,- ճիշտ չե՞մ ասում, Մարկոս Մոխսեյիչ: Չի խանգարում, չէ՞ ...

Մարկոս Մարգարյանը կիտեց հոնքերը, որի հետևանքով ճակատով մեկ անցնող կիթառի լարերը թուլացան միանգամից ու ցած կախվեցին:

- Էլ չիմեա, այ տղա,- սաստեց նա:

- Արշա՞կ,- որդուն հանդիմանեց նաև տիկին Սիրարփին ու բարձրացրեց իր բաժակը:- Դե, լավ, ես էլ եմ խմում: Դուք հիանալի խոսեցիք, հայրիկ: Ճիշտ չե՞, Մարկ:Նույնը հենց ես էի ուզում խնդրել և շատ լավ է, որ հենց ինքներդ ասացիք: Սրանից հետո, որպեսզի թյուրիմացություններ և տհաճություններ չծագեն, ինչ որ անում եք, տեղյակ պահեք մեզ, լա՞վ: Ճիշտ չե՞, Մարկ: Եվ մեզ էլ շատ մի մեղադրեք: Երբեմն հունից դուրս ենք գալիս, որովհետև նյարդայնանում ենք: Այս հսկայական տունն իմ ուսերի վրա է, ես հոգնել եմ: Այդպես չե՞, Մարկ: Եվ հատկապես հիմա, երբ Մարինեն իր ընկերների հետ ծովափ է գնացել: Խնդրեմ: Մարկը վաղն իր կուլեգաներին տուն է հրավիրել ճաշի: Պատահական մարդիկ չեն: Պատրաստություն է պետք: Իսկ ո՞վ պետք է անի: Ես պետք է անեմ: Միայնակ...

Մովսես ապերը ճռճացրեց աթոռի մոմլաթը:

- Ո՞նց թե մենակ, բա ես ի՞նչ եմ: Բա իմ բան ու գործն ինչ է: Ասա, հարս ջան, ի՞նչ է պետք ու դա մի կողմ քաշվիր: Ինչ որ պետք է ես կանեմ:

- Օ՛, ոչ, պետք չէ, պետք չէ, — սարսափահար եղավ տիկին Սիրարփին, մտքում ավելացնելով, «Եթե դու չխանգարես, դա արդեն լիովի բավական կլինի»:

- Չէ, ինչի՞,- ոգևորվեց Մովսես ապերը,- տարիքիս մի նայեք, աչքս լավ տեսնում է ու մատներս էլ չեն դողում: Ըհը, տեսեք, մի կաթիլ կթափե՞մ,- ասաց նա, զգուշությամբ բարձրացրեց բաժակը, խմեց միանգամից ու հաջողությունից ուրախացած բաժակը դրեց սեղանին: - Ըհը՞...



Այդ «ըհր~»-ի հետ մեղմ մի ճնգոց լսվեց, որ միայն ազնիվ բյուրեղապակին կարող է հանել. բաժակի պոչը պոկվեց ու մնաց սեղանին, իսկ բաժակն իր համար առանձին մնաց Մովսես ապոր չդողացող մատների մեջ:

Մովսես ապերը մեկ պոչին նայեց, մեկ էլ անպոչ բաժակին ու բացականչեց ապշած.

- Պո~ւյ...

Մի պահ ամեհի լռություն տիրեց:

Մակայն Մովսես ապոր այդ «պույի» մեջ այնպիսի մի անսքող, անմխիթար ցավ ու զարմանք կար, որ նույնիսկ տիկին Սիրարփին քրքրջաց: Իսկ երբ նա քրքրջաց, թեթևացած շունչ քաշեցին նաև մյուսները և սկսեցին ծիծաղել ազատ ու անզուսպ, ասես մի չափազանց սրամիտ անեկդոտ էին լսել: Իսկ վերջում տիկին Սիրարփին իր մեծահոգությունից հուզված նույնիսկ ավելացրեց ռուսերեն.

- Էտո կ սչաստյու, ասեց, չարը խափանվեց:

Բայց նա չարաչար սխալվում էր: Մուտքի դռան գանգակը մեղմորեն

զանգեց: Արշակը գնաց տեսնելու, թե ով է, և բաց դռան միջից նայա

հանկարծ գառան մայուն լսվեց, ապա ամբողջ սանդուղքով մեկ տարածվեց սարերի սովոր նախկին կոլտնտեսային հովվի, իսկ այժմ

ժամանակավոր «Հացառի» շրջիկ բանվոր եզիդի Հասոյի ահեղագոչ որոտը.

- Շատ, շատ կներես, մեծ ախպեր, էստեղ չի՞ ապրում ամենակարևոր իրավաբան ինկեր Մարկոս Մարգարյանը... Ես իրա հոր ընկերն եմ... էս մի պուլիկ յուղը ո՞րտեղ դնեմ, քուր ջան... էս էլ անքաշ պանիր է, վալլահ-բիլլահ... իսկ էս մածուն...

- Դա՞ ով է, - խոժոռված ոտքի ելավ իրավաբանը:

Մովսես ապերը կծկվեց տեղում ու ամուր փակեց աչքերը... երազելով

հեքիաթի սև ձին:

\*

\* \*

Գիշերը շատ ուշ քնեցին: Վերջին երկու ժամը Մարկոս Մարգարյանն ու տիկին Սիրարփին մանկավարժական-դաստիարակչական բավականին նուրբ ու կոմպլեքսային աշխատանք տարան Մովսես ապոր հետ: Եվ միջադեպն ավարտվեց խաղաղությամբ, մի բան, որ չի կարելի ասել սկզբի մասին:

Մկիզբն ահավոր աղմկոտ էր: Գառը մայում էր աղեկտուր ու սրտաճմլիկ, ասես թե մորթելու էին, մի հանգամանք, որն այնքան էլ հեռու չէր իրականությունից: Հաչելու նոր հնարավորություն ու թեմա ստացած Տուզիկը, ի վերջո, Մովսես ապորը մոռացած, անձնուրաց թռիչքներ էր գործում գառան վրա, հայելապատ միջանցքը լցնելով ծմբոցով, վնգստոցով ու կաղկանձով: Իրավաբան Մարկոս Մարգարյանը գանազան, ոչ մեկին կոնկրետ չուղղված, սակայն, այնուամենայնիվ, պրոֆեսիոնալ խաչաձև հարցերով ճգնում էր պարզել, թե ով է այդ երկար բեղերով ծերունին և ինչու հանկարծ իր տունը սողում-գոմորի վերածվեց: Մովսես ապերն իր նոր բարեկամի «ուխտադրությունից» ապշած նախ և առաջ աշխատում էր որևէ կերպ դուրս նետել նրա բերած ընծաները, հետն էլ ծանրորեն հևալով.

- Բա եղա՞վ, Հասո, բա եղա՞վ...

Հասոն սուրբ միամտությամբ, վալլահ-բիլլահը վկայակոչելով, հարցնում էր զարմացած,

- Հա, ի՞նչ եղավ, ի՞նչ եղավ, մարդ չե՞նք...

Եվ միակ մարդը, որն այդ ահավոր իրարանցման մեջ պահպանում էր իր գործնական սառնասրտությունը և սթափ մտածելու կարողությունը, դարձյալ տիկին Սիրարփին էր: Աղմուկը նրան չխանգարեց արագորեն կողմնորոշվելու, և նա անմիջապես թանկագին հյուրերի համար բացած սեղանին պատկերացրեց այդ անհարկի աղմկոտ և անհանգիստ գառնուկին, որն այն ժամանակ, իհարկե, ավելի պատշաճ տեսք կունենար՝ լավ կարմրացրած մաշկով և կիսաբաց ատամների արանքում՝ մի փոքրիկ փունջ մաղադանոս: Նա սեղանին պատկերացրեց նաև կաթնահամ թարմ կարագը, անուշահոտ պանիրն ու շրջանակով մեղրը և մածունը, անբիծ, անեղծ, փոքր-ինչ թթու, իսկական սարի մածունը և նույնիսկ գինովցած հյուրերի խնդրանքը լսեց. «Տիկին Սիրարփի, հոգյակս, ևս մի քիչ մածուն կարելի է»:

Եվ տիկին Սիրարփին անհրաժեշտ համարեց միջամտել:

- Լռություն,- բարձր ձայնով ասաց նա:- Լռություն: Մարկ, տեղդ,- կարգադրեց նա: Բայց որովհետև շունը շարունակում էր հաչել, ուղղեց անմիջապես:- Տուզիկ, տեղդ: Մարկ, լսիր մի վայրկյան, խնդրում եմ: Հայրիկ, հանգստացիր, հայրիկ, բաց թող գառնուկի ոտքը: Այդպես: Ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ եք վիրավորում մարդուն: Ի՞նչ եք խառնվել իրար: Չե՞ք տեսնում՝, մարդն անկեղծ սրտով է բերել:

- Վա՛յ, արևդ ապրի, քուր ջան, անկեղծ սրտով, վալլահ-բիլլահ, շատ անկեղծ սրտով, մարդ ենք, չե՞, իսան ենք, չե՞...

-Տեսնո՞ւմ եք,- իր հպատակի արարքը ներող թագուհու մեծահոգությամբ ասաց տիկին Սիրարփին: Եվ, վերջապես, իր տնից է բերել, շուկայից չի գնել, ուրիշից պարտքով չի վերցրել. առողջ տրամաբանությամբ ավելացրեց նա:- Ուրեմն, պետք է ընդունել և շնորհակալություն հայտնել:

Եվ տասը բոպե էլ չանցած, ամեն ինչ իր տեղն ընկավ: Գառն այլևս չէր մայում: Նրա հարցն արդեն լուծվել էր պատշգամբում: Տուզիկն անհետացել էր ինչ-որ տեղ: Հասոն գերագույն հաճույքով թեյ էր խմում և պատմում որդու հետ կատարված դեպքը անընդհատ Մովսես ապորը վկայակոչելով.

- Էդպես չէ՞ր, ախպեր...

Իսկ Մովսեսն ապերը տմբտմբացնում էր գլուխը և երբեմն-երբեմն աղաչական հայացքներ նետում որդուն, այսինքն թե՛ «Եթե կարող ես, մի բան արա, էլի, տղա ջան»:

Հետո այդ նույն աղաչական հայացքները հարսին էր նետում, նաև նրանից օգնություն ակնկալելով: Եվ ճիշտ էր անում: Հարսը դարձել էր պաշտպանության վկա, ավելին՝ դատապաշտպան: Հասոյի յուրաքանչյուր խոսքից հետո նա դառնում էր ամուսնուն և ձեռքերն իրար խփելով բացականչում.

- Կաշմար կակոյ տո: Դրա համար մա՞րդ են կալանավորում:

- Ասա՞, է՞, քուր ջան, ասա՞, - տնքում էր Հասուն:

Իհարկե, այս ոչ պաշտոնական դատավարության մեջ ամենաձանրը Մարկոս Մարգարյանի վիճակն էր: Հարցն այն է, որ նա հիանալի ծանոթ էր վերոհիշյալ քրեական գործին, որովհետև այդ գործը արդեն մի շաբաթ է, ինչ նրա սեղանին էր դրված: Ըստ որում, ոչ միայն ծանոթ էր, այլև համոզվել էր, որ ժողովրդական դատարանը չափազանց խիստ է վարվել Երևանի Նոր-Արեշ թաղամասի բնակիչներ Մամսոն Մատինյանի և Ջամիլ Դավոյանի նկատմամբ: Տղաների բախտն ուղղակի չէր բերել: Նրանք ընկել էին նորընտիր դատավորի առաջին հարվածի տակ, դատավոր, որը մինչ այդ կոմերիտիության շրջկոմի նախկին երկրորդ քարտուղարն էր եղել և դատավոր ընդունվելու համար պարտական էր ոչ

թե իր իրավաբանական խոր գիտելիքներին, ոչ թե վերլուծող ու տարալուծող

ուղեղին, այլ, առաջին հերթին, իր սեռին: Նա կին էր: Եվ որովհետև շրջանի չորս դատավորներից երեքը տղամարդ էին, չորրորդը պետք է կին լիներ: Հանուն ընդունված կարգի և վիճակագրական տվյալների:

Մամսոն Մատինյանի և Ջամիլ Դավոյանի դատավճիռները փաստորեն ոչ թե այդ նորընտիր կինն էր կայացրել, այլ այն ընկերը, որ վերջին անգամ բարեկամական զրույց էր ունեցել դատավորի հետ:

Նա ասել էր.

- Խղճիդ շատ գոռ չտաս, աղջիկ ջան: Իմացիր, որքան մեղմ լինի քո վերաբերմունքը հանցագործների նկատմամբ, նույնքան խիստ կլինի իմ վերաբերմունքը քո նկատմամբ:

Եվ նորընտիր կին դատավորը, որպեսզի մեղմ չլինի, խիստ էր եղել: Ուրեմն, հարցն այն է, որ Մարկոս Մարգարյանը առանց գառնուկի և անքաշ պանրի էլ հակված էր տղաների պատիժը թեթևացնելու կողմը՝ հենց հանուն օրենքի և արդարադատության: Եվ միաժամանակ հանուն այն անձնական բերկրանքի, որ ինքը հնարավորություն է ունենալու մի թեթև կտտացնելու նորընտիր կին դատավորի վեր ցցվող քթին: Իսկ ո՞ր իրավաբանը կհրաժարվի մեկ ուրիշ իրավաբանի քթին թեթևակի հասցնելու հաճույքից, մանավանդ, երբ այդ իրավաբանը իր դասակարգմամբ նրանից բավականին ցածր է:

Այնպես որ՝ ավելորդ, բոլորովին ավելորդ էին Հասոյի քնարական զեղումները, նրա միամիտ ջանքերը իրավաբանի սրտում գույթ առաջացնելու համար: Չուր, միանգամայն զուր էին Մովսես ապոք աղերսական, սրտաշարժ հայացքները և այս դեպքում նույնիսկ փաստաբան դարձած տիկին Սիրարփիի պաշտպանական ելույթները՝ հանուն կարմրացրած գառնուկի, անքաշ պանրի և շրջանակով մեղրի: Հարցը վաղուց լուծված էր հոգուտ նրանց, և Մարկոս Մարգարյանը պարզապես անհրաժեշտ ժամանակ էր շահում Հասոյի առջև երկնային բարերար հանդես գալու համար: Հոր աչքին երևալու համար որպէս անաչառ և գթասիրտ դատավոր: Եվ կնոջ աչքին՝ իբրև ընտանեկան բարեկեցիկ կյանքի պաշտպան ու ջատագով:

Բայց նա շարունակում էր լսել խոժոռված, մեծ պատասխանատվության բեռի տակ ուները կքած, քանի որ իր երկարամյա և, ինչպէս ընդունված էր ասել՝ անբասիր դատական գործունեության ընթացքում վաղուց և մեկընդմիջտ համոզվել էր, որ եթէ ուզում էս հարգեն քեզ, պատկառեն քեզնից, եթէ ուզում էս, որ քո արածը արժէք ունենա մարդկանց աչքում և երախտագիտության ու վարձահատույց լինելու վսեմ զգացումներ արթնացնի նրանց մեջ, պետք է հնարավորին չափ դժվարացնես անելիքդ, հնարավորին չափ ձգձգես պատասխանդ, հնարավորին չափ, ժողովրդական լեզվով ասած՝ տանես-բերես մարդկանց:

Մարկոս Մարգարյանը մի՞ թէ երբևէ կմոռանա իր առաջին գործերից մեկը: Համոզվելով, որ պարտավոր է արդարացնող դատավճիռ կայացնել Քոսյան ազգանունով մեկի նկատմամբ: Մարկոս Մարգարյանն այնպէս ուրախացավ, որ ինքն իր սեփական ձեռքով գիշերը զանգահարեց դատապարտյալի հորը, որպէսզի նա ժամ առաջ ուրախանա և ըստ ամենայնի գնահատի իր արդարամտությունն ու վեհանձնությունը:

Լավ գնահատեց: Չքվեց միանգամից, անհետացավ: Իսկ մի անգամ, երբ պատահաբար հանդիպեցին ռեստորանում, զուխը մի կողմ թեքեց, իբր չի տեսնում:

Չէ, Մարկոս Մարգարյանին շատ բան սովորեցրին տարիներն ու միկրոշրջապատը: Հատկապէս նրա անմիջական պետքը: Որ ժամին էլ փորձես մտնել մտոր, ասում է հոգնած

- Սպասիր, Մարկոս, չե՞ս տեսնում, որ զբաղված եմ:

Այնինչ Մարգարյանը հիանալի տեսնում է, որ նա զբաղված չէ: Եվ ոչ միայն զբաղված չէ, այլև տառապում է անգործությունից: Սակայն, լավ գիտե, որ եթէ անմիջապէս ընդունի Մարգարյանին, սա կկարծի, թէ ինքն անգործ է: Եվ ահա ստիպում է սպասել ընդունարանում, նյարդայնանալ, ըմբոստանալ մտքում և անմիջապէս էլ ընկճվել, կասկածներ ունենալ իր նկատմամբ նրա բարյացակամության սլաքների տատանման մասին և հոգով թեթևացած ու երջանիկ շունչ քաշել, երբ քարտուղարուհին բացի դուռը.

- Խնդրեմ, ընկեր Մարգարյան...

Այդ ժամանակ արդեն ներս է մտնում ոչ թէ պետի հետ նույն կուրս ավարտած, գիտելիքներով հավասարագոր, նախորդ օրը միասին հարբած և գրկախառնված հայրենասիրական երգեր երգող նախկին Մարկոս Մարգարյանը, այլ բոլորովին նոր, հեզ, խոնարհ, ուշիմ Մարկոս Մարգարյան, որը պատրաստ է կատարելու պետի նույնիսկ բանավոր ցանկությունները, հաստատ իմանալով, որ տապալվելու դեպքում նա երբեք տեր չի կանգնելու իրեն: Այդպէս է, այդպէս պետք է լինի: Պետն էլ իր պետից է սովորել:

Մարկոս Մարգարյանը զգաց, որ ժամանակը մոտեցել է, բարձրացրեց գլուխը, շոշափեց չորս մազերը, հավաստիացավ, որ տեղում են, պողպատագույն աչքերը հերթով հառեց խնդրատուներին ու ծանր-ծանր հառաչեց.

- Ի՞նչ ասեմ: Ինչպե՞ս մերժեմ ձեզ: Բոլորդ էլ հարազատ մարդիկ եք: Տեսնենք, կաշխատեմ մի բան անել: Տեսնենք:

- Վայ, ես քու սուրբ լեզվին մեռնեմ, մորից նոր-նոր ծնվավ Ջամիլս -աղաղակեց Հասուն:

- Ապրես, տղա ջան,-- աչքերը լցրեց Մովսես ապերը:

- Մարկ, տի պրյամո պրելեստ,- ինչպես միշտ, երբ հուզված էր լինում, իր զգացմունքները ռուսերեն արտահայտեց տիկին Միրարփին:

Բայց Մարկոս Մարգարյանը նախկին միամիտը չէր:Նա բարձրացրած աջով ընդհատեց զեղումները:

- Ես ասացի՝ տեսնենք,- ասաց նա:- Ես հարյուր տոկոսով չեմ խոստանում: Ասացի՝ տեսնենք: Որոշ դժվարություններ կան, որոնց մասին ես չեմ կարող հայտնել ձեզ:Պետք է զբաղվեմ, պետք է հաղթահարեմ: Տեսնենք:

- Վայ, հաղթի ու հարի, արևիդ մեռնեմ,- ավեկոծվեց Հասուն:-Դու մենակ ինձ ասա՝ ի՞նչ է պետք: Ինչի՞, Հասուն երեխա է, չգիտի, թե քեզնից բարձր ինչքան մարդ կա... Դու ասա՝ ի՞նչ է հարկավոր ու... Հասուն տուն-տեղ կձախի, Հասուն իր ոչխար ու փեթակ կձախի ու պարտքի տակ չի մնա:

Մարկոս Մարգարյանը բարի ու ներողամիտ հայացքով նայեց նրան.

- Ավելորդ բաներ եք ասում:Ոչինչ ծախել պետք չէ: Դուք ինձ նայեք և նայեք մեր տանը: Մենք որևէ բանի կարիք ունենք:

- Տեսա՞ր,- հպարտացավ, հրճվեց Մովսես ապերը,- այ Հաստ եղբայր, ես քեզ չասացի , որ իմ տղան հարամություն չի անում: Հիմի տեսա՞ր:

- Ախպեր, ես հո իրա համար չե՞մ ասում,- առարկեց կյանքի ավելի շատ մեծ փորձ ունեցող եզրիի Հասուն:- Ես քո՞ն եմ, ես չե՞մ տեսնում, որ քու տղեն մեր սարի աղբյուրի պես մաքուր մարդ ա: Վալլահ-բիլլահ: Համա ուրիշ մարդիկ կան, գործ հաստատողներ կան, դատախազ կա, մեքենագրուհի կա, բան կա...

- Վայ,- նորից վրդովվեց Մովսես ապերը:

- Դե, լավ, լավ,- աշխատելով հաշտեցնել ծերունիներին, միջամտեց Մարկոս Մարգարյանը:- Լավ, վերջ տվեք: Հասկացանք, հասկացանք, ընկեր Հաստ: Հիմա պետք չէ: Եթե պետք լինի, ես քեզ կասեմ, - ու հետն էլ ժպտալով, աչքով արեց հորը, թե՛ սուս մնա, էլի, այ մարդ: Չե՞ս տեսնում՝ հետամնաց մարդ է, հիմա թող խաբեմ, հանգստանա: Իսկ հետո ոչինչ էլ չեմ ուզի: Պարզ չի՞:Դու ինձ նո՞ր ես ճանաչում:

Եվ Մովսես ապերն էլ իր հերթին գոհունակությամբ աչքով արեց նրան, հպարտացած որդու խելքով և դիվանագիտությամբ: «Շան տղեն իսկական

իրավաբան է, էլի»:- մտածեց նա:

Բաժանվեցին համերաշխ և բարձր տրամադրությամբ: Բավականին կատակեցին դռան մոտ:

Հասուն ծիծաղելով ասաց.

- Շատ, շատ կներեք, որ էդ անպետք գառը դալմադալ գցեց էստեղ ու էս պլպլան պոլի վրա անհարմար բաներ արավ:

Իսկ Մարկոս Մարգարյանն էլ իր հերթին ասաց.

- Բոլորովին էլ չեմ ներում: Մյուս անգամ՝ կմորթեք, նոր կբերեք: Կարիք չկա շենքով մեկ հայտարարություն տալ:

- Էդավ, ինկեր Մարգարյան,- խոր գլուխ տվեց Հասուն:- Էս աչքիս վրա:

Բայց որովհետև Մովսես ապերը իրեն հանկարծ լրիվ ավելորդ զգալով և ոչինչ չհասկանալով մեկ որդուն էր նայում զարմացած ու մեկ էլ Հասոյին, Մարկոս Մարգարյանն ասաց.

- Կատակ եմ անում, կատակ,- ու ժպտաց հորը:

- Բա ե՞ս ինչ եմ անում,- դարձյալ հորը նայելով, ծիծաղեց Հասուն:

Եվ երկուսն էլ, ասես պայմանավորված, թփթփացրին Մովսես ապոր ուսին:

Ահա այդ ամենից հետո էր, որ Մարկոս Մարգարյանն ու տիկին Սիրարփին մանկավարժական-դաստիարակչական բավականին նուրբ ու կոմպլեքսային աշխատանք տարան Մովսես ապոր հետ թախանձագին խնդրելով այլևս նման պատահական ծանոթություններ չհաստատել և որևէ մեկին խոստումներ չտալ, որովհետև տեսավ, չէ՞, նրա պատճառով, նրան ընդառաջելու համար ինքը ստիպված պետք է լինի զիջումների գնալ, որոշ չափով շրջանցել օրենքները, որպեսզի կարողանա թեթևացնել հիմար կատակի սիրահար այդ տղաների պատիժը: Բայց ինչի՞ համար: Ո՞ւմ է պետք դա...

«Ինչի համար: Գառան համար, մեղր ու պանրի համար,- արդեն գրեթե լուսաբացին, Տուգիկի թախտին պառկած, օրվա տպավորությունները վերլուծելուց հետո, չարացած փնթփնթաց Մովսես ապերը: Ինչի համար...»: Բայց որովհետև քունն արդեն տանում էր և ընդհանուր առմամբ գոհ էր: որ Հասուն էլ կպրծնի Անդոյից, հանգիստ խղճով իր սարերը կգնա, տեր կդառնա իր տանն ու ոչխարներին, Մովսես ապերը բարությամբ լցված, փափկացած սրտով փորձեց հասկանալ ու արդարացնել բոլորին և ամեն ինչ: Իզուր է նեղսրտում: Երևի հենց այդպես էլ պետք է լինի: Որդին ուժ ունի, կարող է օգնել մարդկանց, բայց գառ չունի և տնական կարագ ու մածուն: Հասուն էլ գառ ունի և տնական կարագ ու մածուն, բայց նեղության մեջ է: Հիմա, որ իր որդին օգնի Հասոյին, համ նրա տղան կփրկվի, համ էլ իր հարսը

հյուրերի առաջ դնելու կարգին բան կունենա: Իսկ եթե չօգնի, համ խեղճ Ջամիլը բանտում կմնա,

Հասոն անտեր-անտեր քարշ կգա քաղաքում, համ էլ Մարկոսը անարատ մեղր ու կարագ չի ունենա իր հյուրերի առաջ դնելու համար:

Հա, բայց հնարավոր չէ՞ր, որ, որդին աներ էդ բոլորը՝ առանց գառան ու մածնի: Հնարավոր չէ՞ր: Բա դա հարամություն չի՞: Բա ով որ գառ ու մածուն չունի, գնա կորչի՞: Բիարկե: Հա, բայց ինչի՞ պիտի պաշտոնյա մարդը գառ ու մածուն չունենա, որ թամահ չանի, չծախի իր խիղճն ու հավատը:

Բայց հո հնարավոր չէ, որ մարդ ամեն ինչ ունենա: Ուրեմն, եթե չունի...

Դեռ հայտնի չէ, թե ինչ նոր մտքեր կծագեին Մովսես ապոր հոգնած ու բորբոքված ուղեղում, եթե քունը միանգամից չհաղթեր ու չտաներ նրան:

\*

\*\*

«Մի առավոտ չեղավ, որ մի օյին չգա իմ գլխին», - տխուր-տխուր մտածում էր Մովսես ապերը՝ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի այգու նստարանին գլխահակ նստած: Թեև սրտի խորքում չէր կարող գոնե ինքն իրեն չխոստովանել, որ առանձնապես այս վերջին օյինը ուրիշ որևէ մեկի կազմակերպածը չէ, այլ փաստորեն, ինքն էր, ինչպես ասում են, վաղօրոք ծրագրել ու պլանավորել:

Մի խոսքով, Մովսես ապերը սկզբում Տուգիկի կատաղածայն հաչոցը լսեց, հետո տիկին Միրարփիի հուսահատ ճիչը, ապա ինչ-որ ահավոր չրխկոց: Խելոք մարդկանց հատուկ ներըմբռնումով անմիջապես կռահելով, որ այդ ամենի հեռակա հեղինակն ինքն է, Մովսես ապերը, բարակ վերմակի տակ արագորեն հագնվեց ու հայելապատ միջանցք դուրս եկավ:

Այնտեղ արդեն թե՛ մարտեր էին մղվում՝ տեղանքի յուրաքանչյուր սանտիմետրի համար:

Երեք-չորս ահռելի տղամարդ հսկայական մի սնդուկ հրելով, հևալով ու փնչալով, փորձում էին բնակարան մտցնել: Իսկ տիկին Միրարփին կանգնել էր դռան մեջտեղում և ձեռքերը կոտրատելով, գունատված շուրթերով շշնջում էր:

- Ես այլևս չեմ կարող... Ես այլևս չեմ կարող... Բռժե, չտո գա նակագանիե...

Իսկ այդ երեք-չորս ահռելի տղամարդիկ իրար խանգարելով ու ընդմիջելով, առանց որևէ տրամաբանության, սակայն, բավականին քաղաքավարությամբ, պատասխանում էին, թե...

-Ճամփա տվեք, այ ընկերուհի, Մովսես ապերն ա կարգադրել...

Դրությունը պարզեց Արշակը, որը քունը խանգարված արջի նման գազազած դուրս էր եկել իր որջ-արհեստանոցից և վարդապետական մորուքը սղալելով հետևում էր իրարանցմանը:

-Ասենք թե ճամփա տվեց, այդ սնդուկն ինչպես եք ներս մտցնելու, սիրելի բարեկամներ:

Մարդիկ՝ ասես թե նոր միայն ուշքի եկած, նայեցին հսկայական սնդուկին, նայեցին նեղլիկ դռանը ու ի պատիվ իրենց, անմիջապես հասկացան, որ սնդուկն այդ դռնով ներս չի մտնի: Հասկացան ու խեղճացան:

- Այ մարդ, ճիշտ որ, է, - համաձայնեց նրանց կազմակերպիչն ու ոգեշնչողը՝ լայն կեպի դրած մի երիտասարդ:

Ահա ճիշտ հենց այդ ժամանակ էր, որ ասպարեզ ելավ Մովսես ապերը:

Սնդուկ բերողները իրենց մարզիչին տեսած ֆուտբոլիստների նման նետվեցին դեպի նա:

- Ապեր, բերել ենք, համա հարսդ ներս չի թողնում:

- Դռնիցն էլ ներս չի մտնում, է՛, ներս...

Մովսես ապերը մի քիչ մտածեց.

- Էսպես կանենք,- ասաց նա:- Սնդուկը բաց կանենք ու գործիքները մեկ-մեկ բալկոն կտանենք:

Արշակը ծիծաղեց և ուրախ իրար շփեց ձեռքերը:

- Ինչ գործիքներ,- շրթունքներն ամուր սեղմած՝ հարցրեց տիկին Սիրարփին:

- Հեչ, իմ գործիքներն են, հարս ջան,- իբր թե իմիջիայլոց, բացատրեց Մովսես ապերը:- Չաքուճ-մաքուճ է, մի թեթև գնդան է, կեռիկ-մեռիկներ են, քյալփաթին-մալփաթին է...

- Եվ այդ բոլորը դուք ուզում եք պատշգա՞մբ տանել:

- Չէ, պարտադիր չի,- անմիջապես զիջեց Մովսես ապերը: - Ուզո՞ւմ ես մի ուրիշ սենյակ տանենք:Որտեղ որ մատդ դնես, հարս ջան:

Տիկին Սիրարփին լրիվ կորցրեց իրեն.

- Բայց ես չեմ հասկանում, հայրիկ, ո՞ւմ են պետք այդ գործիքները:

- Ոնց թե ում են պետք,- զարմացավ Մովսես ապերը:- Բա ես էստեղ հո պարապ չե՞մ մնալու:

-Նա այդ տեսակ մարդ է,- հարկ համարեց բացատրել կեպիով երիտասարդը - Մի օր չաշխատեց, կմեռնի... Մովսես ապերն է, է՛...

- Եվ այդ... դրանցով ի՞նչ եք մտադիր անել, չեմ հասկանում -հևաց տիկին Սիրարփին:

- Վայ, չհասկանալու ի՞նչ կա, հարս ջան,- ծիծաղեց Մովսես ապերը:- Դարբին մարդու համար գործ չի գտնվի, ինչ է... բահ-մահ կսարքեմ հայաթավորների համար: Բոստանները փետով են



փորում փոցի-մոցի, ուրագ-մուրագ կսարքեմ: Իսկի որ չլինի՝ դանակ-մկրատ կսարքեմ, կսրեմ: Հետո, դե, հարևաններ են, թեշտ-մեշտ կունենան կարկատելու, այլումինե կամ երկաթե աման-չաման կունենան... լավություն կանեմ, կապրեմ...

- Մարկ,- հանկարծ ճչաց տիկին Սիրարփին՝ ուժասպառ հենվելով հայելուն:- Մարկ...

- Ի՞նչ պատահեց, քեզ մատաղ,- անհանգստացավ Մովսես ապերը:

- Մարկ,- հեկեկաց տիկին Սիրարփին:- Յա բոլշե նե մոգու...

Անդրավարտիքի ռետինե կապերը հապշտապ ուսերին գցելով, չորս հատ մազն աջ ուսն ի վար ծածանելով, հայտնվեց Մարկոս Մարգարյանը:

Միջանցքի անթիվ հայելիների մեջ տվյալ պատկերում գործող անձինք նրան տասնապատիկ շատ թվացին, և Մարկոս Մարգարյանը հարցրեց օրինական զարմանքով.

- Սա՞ ինչ պլենում է:

Այդ ժամանակ տիկին Սիրարփին անմխիթար լացով նրա գիրկը նետվեց, գլուխը կրծքին սեղմեց ու ջղաձիգ ցնցումների արանքից ասաց գրեթե Մովսես ապոր լեզվով.

- Նրան... ասա, որ իր... չաքուճ-մաքուճները... կորցնի աչքիցս... թե չէ ես կմեռնեմ...

Պարզաբանումները չօգնեցին: Սնդուկը դրդալով ցած գլորվեց: Հետո, որպեսզի ամբողջ շենքը չարթնանա, երեք-չորս հուժկու տղամարդիկ դագաղի նման իրենց ուսերին առան անբախտ սնդուկը և խորին լռության մեջ դանդաղ հանդիսավորությամբ ցած իջեցնելով, տարան ներքնահարկ: Նրանցից մի քանի քայլ ետ ընկած, թանկագին ննջեցյալին վերջին ապաստանն ուղեկցող սգավոր հուղարկավորի նման գլխահակ ու մռայլ, քայլում էր Մովսես ապերը: Նա այնպես խոր էր ընկղմված իր ծանր ու տխուր խոհերի մեջ, որ նրան մի պահ իսկապես թվաց, թե հանգուցյալի ետևից է գնում և առաջին հարկի սանդղահարթակում կանգնած՝ անընդհատ սպասում էր, թե հիմա, ինչպես կարգն է, երեք անգամ կպտտացնեն սնդուկը:

Ահա այդ ողբերգական արարողությունից հետո էր, որ հոր ու որդու միջև տեղի ունեցավ այն խոսակցությունը, որ Մովսես ապորն Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի զբոսայգու նստարանին հասցրեց:

Մարկոս Մարգարյանն ասաց.

- Հայրիկ, դու ուղղակի ձանձրանամ ես, և դրանից է, որ, չիմանալով ինչ անել, անընդհատ զանազան պատմությունների մեջ ես ընկնում: Գնա քաղաք, զբոսնիր, մետրո նստիր, վերջապես, Մատենադարան գնա կամ հեղափոխության թանգարան... հիանալի նմուշներ կան...

- Լավ, տղա ջան,- խոնարհ համաձայնեց Մովսես ապերը:- Կգնամ: Իսկ էդ հեղափոխության թանգարանը որտե՞ղ է:

- Թանգարա՞նը,- հարցրեց Մարկոս Մարգարյանը:- Թանգարանը, եթե չեմ սխալվում... սպասիր, իսկապէս, որտե՞ղ է այդ թանգարանը... Մզկիթում չէ՞ր... Չէ... դա կարծեմ բուսաբանության թանգարանն էր... Գիտե՞ս ինչ, հայրիկ, ավելի լավ է՝ Մատենադարան գնաս: Արի ցույց տամ, մեր պատուհանից երևում է... Տես, ինչ հոյակապ շենք է...

- Իսկ մեջն ի՞նչ կա,- հարցրեց Մովսես ապերը:

Մարկոս Մարգարյանը միայն մի պահ շփոթվեց:

- Մե՞ջը,- ասաց նա,- մեջը գրքեր են:- Ու մտածեց տրտմությամբ, որ բոլորովին էլ վատ չէր լինի, եթե կարողանար գոնե մի անգամ լինել այնտեղ: Ասում են շատ հետաքրքիր նմուշներ կան:

- Դե, հենա ասա գրադարան է, էլի,- ասաց Մովսես ապերը:- Գնամ ի՞նչ անեմ: Հա, բա որ գրադարան է, ինչի՞ են ուրիշ անուն տալիս:- ավելացրեց նա:

- Դե լավ, չես ուզում, մի գնա,- պատասխանից ճարպկորեն խուսափեց Մարկոս Մարգարյանը:- Ուրիշ տեղ գնա: Բա դու գնալու տեղ չունե՞ս: Էս մեծ քաղաքում ծանոթ-բարեկամ չունե՞ս:

Մովսես ապերը վիրավորվեց սրտանց:

- Ասում էի տանը մնամ, հարսին օգնեմ,- ասաց նա,- թե չէ ի՞նչ ինչ կա: Իսկի չլինի, կգնամ Երվանդ Տրդատյանի մոտ: Հազար անգամ խնդրել է:

- Դա ո՞վ է,- հարցրեց Մարկոս Մարգարյանը:- Մպասիր, սպասիր: Ժողովրդական արտի՞ստը:

- Բա ո՞վ,- խնդմնդաց Մովսես ապերը:

- Համա թե կասես, հայրիկ, դու նրան որտեղի՞ց ես ճանաչում:

Մովսես ապերը ձեռքը ծոցագրպանը տարավ:

- Դու իրեն տեսած կա՞ս,- հարցրեց:

-Իհարկե,- ասաց Մարկոսը

- Դե, որ տեսած կաս, ասա տեսնեմ՝ սա ո՞վ է և սա՞ ով է:

Նա թերթից սարքած ծրարի միջից խնամքով հանեց ու որդուն մեկնեց մի փայլուն լուսանկար:

Մարկոս Մարգարյանը նայեց նկարին, և նրա կոկորդից հանկարծ երբ մոռացված հին, պապական, սարսափելի զարմանք արտահայտող բացականչությունը դուրս թռավ.

- Պո՞ւյ:

- Բա՞ , - հաղթական ծիծաղեց Մովսես ապերը:

Նկարից Մարկոսին էին նայում իրար գրկախառնված հանրապետության ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, Գերագույն սովետի դեպուտատ Երվանդ Տրդատյանն ու գյուղական դարբին Մովսես ապերը: Ըստ որում, նշանավոր արտիստն ինքն էր գրկել, ուսին սեղմել Մովսես ապերը:

- Սիրարփի՜, - ձայնեց Մարկոսը և երկյուղած լռությամբ կնոջը մեկնեց լուսանկարը:

Տիկին Սիրարփին ապշահար մեկ լուսանկարին էր նայում, մեկ էլ սկեսրայրին և հազիվ կարողացավ մրմնջալ.

- Աստվա՛ծ իմ...

- Կյանքս կերավ,- գլուխն օրորելով պարծենամ էր Մովսես ապերը:- Կպել էր, թե նկարվենք իրար հետ, հա նկարվենք:

- Աստված իմ, որտե՞ղ,- հետաքրքրությունից բռնկվելով, այնպես շտապ հարցրեց տիկին Սիրարփին, ասես տեղեկանում էր, թե կհասցնի ինքն էլ նույն տեղում նկարվել նրա հետ:

- Մեր տանը, որտեղ,- բացատրեց Մովսես ապերը:- Գյուղ էին եկել համերգի, մի շաբաթ մնաց մեր տանը:

Մարկոս Մարգարյանը թերահավատությամբ թափահարեց գլուխը:

- Ինչի՞, գյուղը նախագահ՞ չուներ, քարտուղա՞ր չուներ, հաշվապա՞հ չուներ և, վերջապես, ֆերմայի վարի՞չ չուներ...

- Այ, հենց քո ասած նախագահն էլ մեր տուն բերեց,- ժպտաց Մովսես ապերը:- Ասաց՝ Երվանդ Տրդատյանը էնպիսի տուն է ուզում, որտեղ երեխա չլինի, խանգարող-մանգարող չլինի: Որովհետև ականջները նուրբ են, ցավում են, ասաց: Իսկ ամբողջ գյուղի մեջ մենակ մեր տունն է, որտեղ ոչ երեխա կա, ոչ մեծ, բալա ջան:

- Եվ մի շաբաթ շաբունակ մեր փոքրիկ գյուղում նա համե՞րգ էր տալիս,- կասկածի ձիուց չէր իջնում Մարկոս Մարգարյանը:

- Նախ մեր գյուղն էնքան էլ փոքր չի,- վիրավորվեց Մովսես ապերը:— Եվ հետո, նա մի օր երգեց ու հիվանդացավ: Մրսել էր: Անկողին ընկավ:Իսկ որ լավացավ, էլ չէր ուզում մեր տնից հեռանալ: « Կյանքիս մեջ ես էսքան երջանիկ չեմ եղել, դարբին Մովսես,- ասում էր- երանի ոչ մի գործ չունենայի, այ էսպես նստեի քեզ հետ գրույց անեի »:

Հիմա էլ տիկին Սիրարփին կասկածեց:

- Եվ այդպես էլ խոստ՞ւմ էր ձեզ հետ: Այդպիսի խոսքե՞ր էր ասում:

- Վայ, բա մենակ էդ էր ասո՞ւմ: Ասում էր դու ինձ քո տղան համարի, դարբին Մովսես, և իմացիր, որ Երեանում դու երկու տուն ունես: Այսուհետև,- ասում էր,- Երվանդ Տրդատյանի

տունը քո տունն է: Եթե իմանամ,- ասում էր,- որ քաղաք ես եկել ու ինձ չես հանդիպել, շատ փիս կնեղանամ:

- Հենց այդպես էլ ասո՞ւմ էր «փիս կնեղանամ»,- դավեր էր նյութում իրավաբանը:

- Չէ,- բարկացավ Մովսես ապերը:- Ասում էր խիստ կնեղանամ, բայց էնպես էր ասում, ոնց որ ասեր՝ «փիս կնեղանամ»: Իսկ մնացածը գրաբար էր խոսում, էնքան սիրուն, որ ճիշտն ասած, շատ բան չէի հասկանում:

Որդին ու հարսը շարունակում էին թերահավատությամբ նրան նայել, և Մովսես ապերն այլևս չդիմացավ.

- Վայ, ուրեմն, սուտ եմ ասո՞ւմ: Ուզո՞ւմ եք մեր տուն բերեմ:

- Բոժե մոյ, մի՞ թե կգա,- հուզվեց տիկին Սիրարփին:

- Գա մերոնց հետ ինչ անի, ա յ կնիկ,- սթափեցրեց նրան ամուսինը հիշելով իր լրջախոհ պաշտոնակիցներին:

- Թող մենակ սա գա, թող ոչ ոք էլ չգա,- գլուխը թափահարեց կինը:

- Եղա՞վ,- կամացուկ հարցրեց Մարկոս Մարգարյանը:

Կինը նայեց նրա պողպատագույն աչքերին և համոզվեց, որ այս անգամ «չեղավ»: Սակայն գայթակղությունն այնքան մեծ էր, որ չկարողացավ լիովին հրաժարվել իր այդ հրապուրիչ գաղափարից և սկսեց մանևրել, մեկ ետ գնաց, մեկ առաջ, հիշեց, որ մի անգամ էլ Լիպարիտ Սոխակյանենց տանը մի դուղուկահար կար և ոչ մի սարսափելի բան տեղի չունեցավ: Հետո հիշեց, որ մի անգամ էլ հարևան Ստեփանենց տանը նույնիսկ մի գազաններ վարժեցնող կար և դարձյալ որևէ սարսափելի բան տեղի չունեցավ: Եվ իր ելույթն ամփոփեց ապառաժ հալեցնող սիրատոչոր մի հայացքով:

- Մարկ, թանկագինս, բայց չէ՞ որ Երվանդ Տրդատյանը սեղանի զարդը կլինի: Քո ընկերները... Նրանց տներում չէ՞ մ եղել, ինչ է: Նույնիսկ մի վաստակավոր արտիստ ծանոթ չունեն: Իսկ մեր սեղանին կլինի իսկական ժողովրդական արտիստ...

Ապառաժը հավեց: Պայմանավորվեցին, որ Մովսես ապերը մի թեթև կակնարկի, կգա՝ կգա, չի գա՝ չի գա:

Եվ Մովսես ապերը հայտնվեց զբոսայգու նստարանին:

Օպերայի շենքի ծառայողական մուտքի աջ կողմում, ապակե շրջանակով պատուհանի ետևում, ճիշտ և ճիշտ Տուզիկի նման զգզված, ճերմակ մազերով, փոքրիկ ու չար մի պառավ էր նստած: Մովսես ապերը որ կողմից որ փորձեց նրան մոտենալ, չհաջողվեց: Սկզբում շատ սովորականի նման բարև տվեց ու ասաց.

- Աղջիկ ջան, ես Երվանդ Տրդատյանին եմ ուզում:

- Չեմ հիշում, թե քեզ նման հեր ունեցած լինեմ,- փնթփնթաց պառավը:

Մովսես ապերը ծիծաղեց բարեհոգաբար:

- Խոսքի համար եմ ասում, քույրիկ, ուզում եմ Երվանդ Տրդատյանին տեսնել:

- Ուզում ես տեսնել, տոմս վերցրու ու իրիկունը գնա դահլիճում նստիր,- ասաց պառավը:

Մովսես ապերը դիմացավ:

- Դու ինձ սխալ հասկացար, ընկերուհի ջան,- համբերությամբ բացատրեց նա:- Երվանդ Տրդատյանը ինքն է կանչել ինձ:

- Ինձ բան չի ասել,- կտրեց պառավը:

Մովսես ապերը հազաց ու ձայնը մի քիչ խզվեց:

- Ես նրա բարեկամն եմ, գյուղից եմ եկել, քույ... ընկերուհի ջան...

- Նա գյուղում բարեկամներ չունի...

Մովսես ապերը բարկացավ.

- Իսկ դու իրեն զանգ տուր, հարցրու,- ասաց նա, զգալով, որ շրթունքը դողում է- Չանգ տուր ու հարցրու, ասա դարբին Մովսեսն է եկել ու տես ինքն ինչ է ասում: Մենք շատ մոտիկ ենք իրար հետ, ընկերուհի ջան... Նա ինձ շատ է սիրում, հարգում:

- Որ էդքան հարգում է, տուն գնա:

- Վայ, ինքն էստեղ, ես տո՞ւն գնամ: Մենք շատ մոտիկ ենք, է՜: Հիվանդ էր, ուղիղ մի շաբաթ երեխուս նման պահել եմ...

Մովսես ապերը ճշմարտությունն էր ասում: Նա ճշմարտությունն էր ասում նաև որդուն ու հարսին: Իրոք որ ամեն ինչ եղել էր այնպես, ինչպես պատմում էր նա: Եվ համերգը, և մի շաբաթ ապոր տանը մնալը, և նշանավոր արտիստի ջերմ, զգացմունքային խոսքերը՝ ուղղված ծեր դարբնին, և նրան սրտանց իրենց տուն հրավիրելը: Ամեն, ամեն ինչ: Միայն մի բան, միայն մի փոքրիկ բան ճիշտ չէր ասում Մովսես ապերը: Որ Երվանդ Տրդատյանը ոչ թե հիվանդ էր, այլ ուղղակի խմում էր:

Հենց առաջին օրը, երբ Մովսես ապերը թանկագին հյուրի համար սեղանին դրեց խորոված խոճկորն ու գառան անուշահամ խաշլաման, նաև շուշանի թթուն և հոնի կապտաթույր օղին, Երվանդ Տրդատյանը բարձրացրեց օղու սափորը, հոտ քաշեց, զարմանալի քնքուշ մի ձայն հանեց ու հարցրեց.

- Այս օղուց որքա՞ն ունեք, հարգելի վարպետ...

- Ինչքան որ սիրտդ ուզի,- ծիծաղեց Մովսես ապերը:

Երվանդ Տրդատյանը խմեց մի փոքրիկ բաժակ, նորից զարմանալի քնքուշ մի ձայն հանեց ու աչքերը երանությանբ հառեց դեպի երկինք:

- Համոզված եմ, որ ձեր խոսքը խոսք է, սիրելի մարդ,- ասաց նա:- Ուրեմն, խմելու եմ որքան սիրտս կամենա:

- Խմիր, խմիր,- հյուրասեր տանտիրոջ ուրախությամբ համաձայնեց Մովսես ապերը:

Եվ հանրապետության ժողովրդական արտիստը սկսեց խմել:

Մովսես ապերը երկար էր ապրել աշխարհում, խմիչքի շատ սիրահարներ էր տեսել և ինքն էլ, ինչպես ասում են, անմասն չէր մնացել դրանից, բայց այն, ինչ տեսավ, ամեն ձևի պատկերացումից ու երևակայությունից վեր էր: Նա հասկացավ, թե ինչ է նշանակում համաշխարհային ծարավ: Այդ մարդու մեջ հաստատ ինչ-որ բան այրվում էր, և նա ենթադրում էր, թե հոնի օղիով կարող է հանգցնել իր ներսում փոթորկվող կրակը:

Նա խմում էր, աղեղնաձև հոնքերի տակից երկնագույն աչքերը հառում պատուհանից դուրս մշուշի մեջ կորած սարերին ու երգում: Երգում էր ոչ այն կրակոտ, ուրախ երգերը, որ բեմից էր երգում կամ ռադիոյով: Երգում էր ոչ ուրիշ լեզվով, ոչ շտապ-շտապ, այլ հայերեն: Ու թեև Մովսես ապերը, միևնույն է, քիչ բան էր հասկանում նրա խոսքերից, բայց արյունով, սրտով զգում էր, որ դրանք հայերեն երգեր են: Հին, արևից խանձված, հազար փոշոտ ճամփա անցած, աղոթքից ու հառաչանքից ծնված երգեր: Եվ Մովսես ապեր սիրտը լցվում էր անհուն խղճահարությամբ աշխարհի նկատմամբ, և աչքերն արցունքով էին լցվում: Երգերից մեկը հատկապես շատ էր հուզում Մովսես ապերը, և կարծես զգալով այդ, Երվանդ Տրդատյանն այդ երգը երգում էր նորից ու նորից, ամեն անգամ մի ուրիշ տեսակ: Երգի մեջ մի խոսք կար, որ կրկնվում էր և միակ խոսքը, որ կարծես թե հասկանում էր Մովսես ապերը: Երվանդ Տրդատյանը հառաչելու պես ասում էր, «Նազելիդ իմ, զարթնիր» ու այնպես էր ասում, որ Մովսես ապերն ամեն անգամ Վարսենիկին էր հիշում ու տեսնում նրան ինչպես երագում՝ ուսերն ի վար արձակ ցորնագույն մազերը, բարակ, երկար վիզը, աչքերի մեջ՝ կրակ, կրծքին ոսկե փոքրիկ խաչը... Ու լաց էր լինում, ու թեթևանում էր Մովսես ապերը հիացած, պաշտամունքով նայելով զարմանալի երգչին:

Երվանդ Տրդատյանը խմեց ու երգեց ամբողջ գիշեր և խմեց ու երգեց նաև հաջորդ օրը: Նա գրեթե չէր քնում: Ննջում էր հենց սեղանի մոտ, գեղեցիկ գլուխը ձեռքերին իջեցրած, հետո արթնանում էր միանգամից, զարմանալի պարզ աչքերով նայում էր Մովսես ապերը, ժպտում էր մեղավոր ու ասում.

- Մի նեղանա, ազնիվ մարդ: Քո տանը ես մաքրվում եմ, բուժվում եմ... Հոգիս երանությամբ է պարուրված, դարբին Մովսես:

Հետո ձեռքն էր առնում օղու բաժակը, հոտ էր քաշում իր ասած երանությամբ, զարմանալի քնքուշ ինչ-որ ձայն էր հանում, խմում էր ու մրմնջում.

- Խենթանա՞լ կարելի է...

Մովսես ասպերն էլ հենց դրանից էր վախենում: Ահա թե ինչու երկրորդ օրը, երբ տեսավ, որ երգիչն այլևս ոչինչ չի ուտում ու միայն խմում է, հաղթահարելով հյուրընկալ տանտիրոջ ամոթխածությունը, զգուշորեն ասաց.

- Ընկեր Տրդատյան, մատաղ քեզ, ես հո արադը չեմ ավստսամ: Քեզ եմ ավստսում: Ախր, մի բան կեր, որ չհարբես...

Եվ Երվանդ Տրդատյանը ծիծաղեց բարձրաձայն,

- Խենթ է այս մարդը...- նորից ծիծաղեց:- Դու խենթ ես, խենթ, դարբին Մովսես: Ես ուզում եմ հարբել, իսկ դու ասում ես կեր, որ չհարբես:

Ահա հենց այստեղ Մովսես ասպերը հասկացավ, որ վատ բան է կատարվում:

Նա չափազանց վախեցավ հատկապես չորրորդ գիշերը, երբ Երվանդ Տրդատյանը այգի դուրս եկավ ու շատ ուշացավ: Սպասեց, սպասեց մտածեց, թե մարդ է, էլի... Հետո անհանգստացավ միանգամից, ինքն էլ նրա ետեից այգի գնաց ու հանկարծ ձայներ լսեց: Երվանդ Տրդատյանը խոսում էր ինչ-որ մեկի հետ, սակայն, դիմացինի ձայնը չէր լսվում: Բայց ո՞վ կարող էր գիշերվա կեսին հայտնվել մութ այգում: Մովսես ասպերը մի քանի քայլ էլ առաջացավ երկյուղով ու հանկարծ ամպի տակից փախչող լուսնյակի գունատ լույսի ներքո տեսավ, որ Երվանդ Տրդատյանը կանգնել է տանձի ծառի դիմաց ու ծառի հետ է խոսում: Խոսքերից շատերը չէին լսվում կամ ավելի շուտ՝ չէին հասկացվում, բայց ընդհանուր տպավորությունն այն էր, որ նշանավոր երգիչն իր սիրտն էր բացել, հոգու ցավն էր պատմում ծառին: «Պատասխանիր ինձ, ծառ, հոգյակս,- ասում էր Երվանդ Տրդատյանը ձեռքերը դեպի սև սաղարթները մեկնած:- Մինչև ե՞րբ տանեմ նախանձն ու չարությունը, որ որոմի նման շրջապատել են ինձ: Ասա ինձ, ծառ: Լավ չե՞ խաչվել այն պատանու նման, որ խաղաղություն ու երջանկություն էր բերում մարդկանց և որին դավաճանեցին իր իսկ ընկերները: Ինչպես Շավարշը: Իմ ընկերը: Արհմիութենական ժողովում: Ինչու : Որովհետև դա միակ տեղն է, որտեղ Շավարշը ինձ հավասար ձայն ունի: Իսկ բեմի վրա չունի, դու ինձ հասկանո՞ւմ ես, ծառ»:

Երվանդ Տրդատյանը լռեց՝ սպասելով արձագանքի, նույնիսկ թեքեց գլուխը, բայց քանի որ ծառը կարծես թե մտքերի մեջ էր ընկել և խուսափում էր պատասխանել նրան տանջող հարցերին, ավելացրեց շտապով, «Խոսիր, խոսիր, սիրելիս... Դու պետք է պատասխանես ինձ, ծառ, ասա ինձ, սիրելիս, թե այդ Շավարշն ինչպե՞ս է կարողանում ինձ նայել վերևից, երբ ես նրանից երկու գլուխ բարձր եմ: Ըստ որում, բարձր եմ բառիս և փոխաբերական, և բուն իմաստով»:

Մովսես ասպերն զգաց, որ մրսում է, և անմիջապես մտածեց, որ Երվանդ Տրդատյանն էլ է մրսում: Խմած է, չի հասկանում, բայց մրսում է: Սակայն, չգիտեր ի՞նչ անել, ինչպե՞ս ընդհատել նրան:

Իսկ այդ ժամանակ Երվանդ Տրդատյանն արդեն շատ նեղ մասնագիտական խնդիրներ էր քննարկում տանձի ծառի հետ, և Մովսես ասպերը, եթե գոնե երաժշտական տարրական կրթություն ունենար, այդ «վերին լյաերից», «սոլ բեմոլից» և «օկտավաներից» գլխի կընկներ, որ դիրիժորն էլ հաճախ իր հերթին է ստորության դիմում և երբ Երվանդ Տրդատյանը

խանդավառված երգում է որևէ արիա, դիտավորյալ ձևով կես տոն բարձր է վերցնում, որպեսզի շփոթեցնի, տապալի նրան:

«Դե, հիմա պատկերացրու, թե ինչ պայմաններում եմ ապրում: Հաճախ ինքս էլ ապշում եմ, որ դեռ կարողանում եմ երգել և այն էլ լավ երգել: Այսինքն՝ ուրիշ ելք չունեմ, ես ոչ թե իմ կամքով, այլ ստիպված եմ լավ երգում: Դու ինձ հասկացա՞ր, ծառ, դու հասկացա՞ր ինձ...»:

Մովսես ապերը մրտում էր և ամբողջ հոգով կարեկցում Երվանդ Տրդատյանին:

- Հասկացա, - ասաց նա:

- Ի՞նչ - ականջներին չհավատաց ժողովրդական արտիստը:

- Հասկացա, - ամաչելով կրկնեց Մովսես ապերն ու արագորեն ետ քաշվելով մտավ թփերի տակ:

Եվ հանկարծ խավար այգու մեջ հնչեց Երվանդ Տրդատյանի երջանիկ ճիչը:

- Ծառը խոսեց, - գոչեց նա: - Օ, երկինք, շնորհակալ եմ, շնորհակալ եմ քեզ, ծառը խոսեց: Նա հասկացավ ինձ...

Մաստիկ անհանգստացած Մովսես ապերը նախագահին պատմեց ամեն ինչ: Իր հերթին անհանգստացած նախագահը հեռագիր ուղարկեց օպերա ու, թեև հիվանդի ախտորոշումը քաջ հայտնի էր նրան, այնուամենայնիվ, բժիշկ ուղարկեց Մովսես ապոր տուն:

Երվանդ Տրդատյանը բժշկին ընդունեց ճիշտ այնպես, ինչպես մահապարտը իրեն գնդակահարության վայրը ուղեկցող զինվորական ջոկատին կընդուներ՝ համակերպված և տխուր:

Նա նայեց բժշկին և իրեն թույլ տվեց միայն մի դիտողություն անել.

- Ես հասկանում եմ ձեզ, դուք եկել եք կատարելու ձեր պարտքը - ասաց նա դառը ժպիտով: - Բայց ինչո՞ւ եք խախտում սահմանված կարգը: Դուք պարտավոր եք գույգ-գույգ ներս մանել: Այլապես ես ինչպե՞ս անցնեմ ձեր միջով:

Իսկ երբ բժիշկը մեղմությամբ, համոզելով բռնեց նրա ձեռքը զարկերակը ստուգելու համար, երգիչը բողոքեց.

- Դուք ուզում եք բռնի ուժով ինձ ժողովի տանել: Բայց ես պատրաստ չեմ, ընկերներ: Ելույթի համար ինձ ժամանակ տվեք:

Բժիշկը Մովսես ապորը խնդրեց խիստ հետևել հիվանդին, իսկ ինքը գնաց, որպեսզի զանգահարի շրջկենտրոն և համապատասխան ցուցումներ ստանա:

Ճիշտ այդ ժամանակ Երվանդ Տրդատյանը գրկել էր Մովսես ապորն ու շնջում էր նրա ականջին.



- Լավ խաբեցի, չէ՞: Դրանք հենց որ ներս մտան, ես հասկացա, որ եկել են խորի կոստյումն ուզելու:

Ու տաք շնչելով Մովսես ապոր ականջին, բացատրեց, որ կոնսերվատորիայում սովորելու ժամանակ ինքը կոստյում չուներ և դրսում նույնպես երգչախմբի զգեստն էր հագնում: Եվ տեղկումի նախագահը որտեղ հանդիպեր, պահանջում էր կոստյումը: Ու մինչև հիմա էլ հալածում է: Տեսնում եք, չէ՞, դեմքը պլաստիկ օպերացիա է արել ու եկել հասել այստեղ, բայց ինքը ո՞նց անմիջապես գլխի ընկավ:

Երվանդ Տրդատյանին երեք օր պահեցին շրջանային հիվանդանոցում: Եվ այդ երեք օրն էլ Մովսես ապերը մի քայլ չհեռացավ իր արտասովոր հյուրի կողքից: Խնամում էր հարազատ երեխայի նման: Իր ձեռքով հատուկ ճաշ էր պատրաստում ու բերում նրան...

Եվ Երվանդ Տրդատյանը գրկում էր նրան ու ասում.

- Սրանից հետո իմացիր, որ ես քո որդին եմ, որ Երևանում դու երկու տուն ունես, դարբին Մովսես:

Իսկ օպերային այդ Տուգիկը չի հավատում: Կասկածում է: Մովսես ապերը ծանր տնքաց, տրորվեց զբոսայգու նստարանի վրա և նորից նայեց ծառայողական մուտքի դռանը:

Ու միանգամից տեսավ նրան:

Հանրապետության ժողովրդական արտիստը գրեթե երկնագույն և գրեթե թափանցիկ կոստյումով էր: Վառ նարնջագույն վերնաշապիկի օձիքը լայն բացված էր բաճկոնի ուսերին: Դեմքը հոգնած էր, բայց ինչպես միշտ չափազանց գեղեցիկ:

Երվանդ Տրդատյանը մի պահ կանգ առավ մուտքի առաջ, ինչ-որ բան ասաց պատուհանի ետևից գլուխը դուրս հանած պառավին, աղեղնաձև հոնքերի տակ կկոցեց աչքերը, շուրջը նայեց, ասես մի պահ էլ նայեց Մովսես ապորը, բայց ոչինչ չտեսավ և դուրս եկավ շենքից:

Մովսես ապերը հմայված նայում էր սիրելի երգչին: Հետո միանգամից մտածեց, որ ձեռքից բաց կթողնի նրան, հազաց, մաքրեց կոկորդն ու ձայն տվեց.

- Ընկեր Տրդատյան, ընկեր Տրդատյան...

Երվանդ Տրդատյանը կանգ առավ ասես դժկամորեն և առանց շրջվելու, ուսի վրայից նայեց իրեն մոտեցող տարեց մարդուն:

- Բարև ձեզ, ընկեր Տրդատյան, - ձեռքը պարզելով, երջանկացած ողջունեց Մովսես ապերը:

Ծառայողական մուտքից դուրս եկավ պառավը, մի սիգարետ վառեց ու իբր թե սկսեց ծխել:

- Բարև, բարև, - ասաց երգիչը՝ հանրապետության իր բոլոր երկրպագուների համար հատուկ մշակած մի ժպիտով, որը միանգամից մի քանի բան էր արտահայտում՝ բարյացակամություն, վեհանձնություն, ներողամտություն ու նաև խորին ավստասանք, որ ինքը խոսելու ժամանակ չունի, շտապում է:

- Ես եմ, ընկեր Տրդատյան, չճանաչեցի՞ր,- զարմացած ծիծաղեց Մովսես ասպերը:
  - Այո, այո, ինչպե՞ս չէ,- գլխով արեց երգիչը,- Ես արդեն խոսել եմ տեղակալի հետ: Գնացեք նրա մոտ, նա կօգնի...
  - Ում մո՞տ,- ասչեց Մովսես ասպերը:
  - Տեղակալի:
  - Ինչի՞ համար,- պառավից ամաչելով, ձայնը ցածրացրեց Մովսես ասպերը:
  - Ինչի՞ – գեղեցիկ հոնքերը կիտեց երգիչը:- Պահակ չէիք ուզում աշխատել կամ նման մի բան:
- Մովսես ասպերը ծիծաղեց:
- Չէ քեզ մատաղ,- ասաց նա– Ուրեմն, հաստատ մոռացել ես:Ես Մովսեսն եմ, Մովսեսը, Չորաթան գյուղից:
  - Չորաթա՞ն,- վերահարցրեց Երվանդ Տրդատյանը:- Ներեցեք, իսկ դա ո՞ր շրջանն է:
  - Շամշադին,- արդեն կոտրված մրմնջաց Մովսես ասպերը:
  - Շամշադի՞ն,- մտածեց Երվանդ Տրդատյանն ու քիչ անց բացականչեց ուրախ: Այո, այո, հիշեցի, ես երգել եմ այնտեղ: Հիշեցի: Ինչպե՞ս եք, լա՞վ եք:
  - Կանք էլի, — մի վերջին հույսով աշխուժացավ Մովսես ասպերը, և այնուամենայնիվ, փորձեց նրբությամբ հիշեցնել: — Որ մեր տանն էիր, մի քիչ հիվանդացար, հիմի ո՞նց ես, ընկեր Տրդատյան:
  - Լավ, եմ, լավ,- շտապ ասաց Երվանդ Տրդատյանը:- Նոր երգեր եմ պատրաստում... իսկ ես ձեզ ինչով կարող եմ ծառայել,- հարցրեց նա,- եթե տոմսեր են պետք, կարող եմ գրություն տալ...
  - Չէ, ուրեմն, չճանաչեցի՞ր,- ընկճված ասաց Մովսես ասպերը: Երվանդ Տրդատյանը տխրեց կամ ցույց տվեց, որ շփոթված է:
  - Չեմ կեղծի,- ասաց նա,- չեմ հիշում:Գիտեք, այնքան մարդկանց ենք հանդիպում, այնքան նոր դեմքեր են միանգամից անցնում աչքիդ առջևով, որ երևի մեզ էլ մեղադրել չի կարելի: Կներեք, խնդրում եմ:
  - Հա, բա ի՞նչ, — չներեց Մովսես ասպերը:
- Դե, ցտեսություն, հաջողություն ձեզ,- սիրալիք ժպտաց Երվանդ Տրդատյանը և քայլեց ծառուղիով:Հետո կանգ առավ միանգամից, շրջվեց ու հարցրեց կամացուկ:- Ներեցեք, ինչպես ասացի՞ք, ինչպես էր ձեր անո՞ւնը:

- Մովսես,- ասաց Մովսես ապերը:- Մովսես... դու ինձ դարբին Մովսես էիր ասում,,

Նա հանկարծ անասելի ցանկությունն զգաց մինչև վերջ ասելու, հիշեցնելու իր ով լինելը: Ասելու թե, ախր, մարդ ես դու, չէ՞, ընդամենը մի ամիս առաջ գրկում էիր ինձ, երգում էիր ինձ համար, ասում էիր որ իմ որդին ես... Հիմա ի՞նչ, պատահեց: Էս ի՞նչ եք անում: Էսպես ոնց եք ապրում, տնաշեններ: Նա նույնիսկ ձեռքը գրպանը տարավ ու շոշափեց լուսանկարը: Բա հիմա ցույց չտա՞... Բա հիմա չհանի ու պահի էդ սիրուն ու սուտ աչքերի առաջ ու ասի, բա սա ի՞նչ է, բա էս ում ես գրկել, շան որդի...

Բայց նշանավոր երգչի գեղեցիկ դեմքին այնքան անկեղծ էր շփոթահար ժպիտը, որ Մովսես ապերը լռեց:

Լռեց ու մեկ էլ զգաց, որ ներսում, սրտի մոտերքում մի բան ցավում է:

Ասես միանգամից թափով դատարկվում է ինչ-որ տեղ:

Երվանդ Տրդատյանը, աչքերը կկոցած, կարծես շարունակում էր փնտրել նրան:

- Այո, այո, կա՞րծես թե հիշեցի-պառավի կողմը նայելով, ասաց նա գրեթե շշուկով:- Երևի խմում էի, հա՞...

- Հա, մի քիչ կար, - ամեն ինչ մոռացած, երջանիկ ծիծաղեց Մովսես ապերը:

- Իսկ հիմա չեմ խմում. - մեղավոր ժպիտով ասաց արտիստը:- Բժիշկները չեն թողնում... դե, կներեք, ցտեսություն, հաջողություն ձեզ...

Մովսես ապերը այլևս ոչինչ չասաց ու երկար նայում էր, թե ինչպես է Երվանդ Տրդատյանը հեռանում ծառուղու կարմիր ավազի վրայով:

- Չճանաչե՞ց, եղբայր,- ցնցվեց նա լսելով պառավի ձայնը: Մովսես ապերը սկզբում ուզեց բարկանալ, բայց պառավի ձայնի մեջ այնպիսի անկեղծ կարեկցանք կար, որ ամաչեց:

- Չհասկացա,- ասաց նա խռոված:

Պառավը բռնեց Մովսես ապր ձեռքը.

- Ներս արի, ներս արի, իրար հետ չայ խմենք, եղբայր ջան... Ու սրտիդ շատ մոտիկ մի ընդունիր...

- Երանի հանդիպած չլինեի... ինչ կլինեի, ոտքս կոտրվեի, չգայի էստեղ...

- Մի տխրի, Մովսես եղբայր,- ասաց պառավը,- ու թե այնպիսի մի բան է, որ իմ ձեռքից կգա, ինձ ասա, ծանոթներ շատ ունեմ, ասա ի՞նչ է քեզ պետք... Արի, արի, չայ խմենք ու ասա...

Մովսես ապերը հուզվեց.

- Չէ, չէ, շնորհակալ եմ, քույրիկ ջան... Ախր, ինձ ոչ մի բան էլ պետք չի, ոչ մի բան...

Ետ դարձավ, նստեց նույն նստարանին և նորից մտածեց, թե ինչքան լավ կլիներ, եթե այդպես էլ չհանդիպեր Երվանդ Տրդատյանին: Ի՞նչ կլիներ՝ չհանդիպեր ու այնպես, առաջվա պես հիշեր միայն:

Ախր, հիմա այլևս երբեք չի ուզենա հիշել: Երբեք: Ու էլ երբեք-երբեք սիրտը չի լցվի, երբ որևէ տեղ հանկարծ լսի նրա երգը:

Հազար ավիսու...

\*

\*\*

Մովսես ապերը երկար մնաց զբոսայգու նստարանին: Մնաց այնքան, մինչև որ շոգն անցավ: Բայց շոգի պատճառով չէր, որ սպասում էր: Պարզապես չէր ուզում տուն գնալ, որովհետև դեռ չէր վճռել, թե ինչ է ասելու տանը Երվանդ Տրդատյանի հետ իր հանդիպման մասին, և որովհետև չէր ուզում ճաշկերույթին մասնակից լինել: Չէր ուզում:

Նա դանդաղ քայլեց Կարապի լճի շուրջը, մանրամասն նայեց կարապներին, ուրախացավ թիթեռնիկների նման հագնված երեխաներով, հոնքերի տակից ցուցադրական չարությամբ դիտեց շներին զբոսանքի դուրս բերած կանանց, հետո գնաց կանգնեց իրար կողքի շարված նարդու կարմիր տախտակների առջև նստած ծերունիների մոտ:

Ծերունիները ծաղրում էին իրար, հեզնում ու վիճում էին իրար հետ անատամ բերաններով և իրենց վերջին ուժերով քարերն ամուր շրխկացնում էին նարդու տախտակների վրա:

Մովսես ապերը նայում էր այդ նախկին գյուղացիներին և զարմացած մտածում, թե մարդիկ ինչքան շուտ են կարողանում մոռանալ իրենց անցյալը և ինչքան շուտ հարմարվում նոր պայմաններին: Գյուղում այս ժամին նրանք պարապ կլինեի՞ն: Չէ՞ մի: Դեռ դաշտից էլ եկած չէին լինի: Իսկ հետո, մի կտոր հաց ուտելուց հետո, պիտի մաքրեին գոմը, ցախ պետք է կոտրեին եկող օրվա համար, պիտի կարկատեին ցանկապատը... հազար ու մի գործ: Իսկ սրանք նստել, նարդի են խաղում:

Բայց, դե, ի՞նչ անեն, որ նարդի չխաղան: Ի՞նչ անեն: Ամբողջ օրը ցցվեն-մնան հարսների աչքի առաջ: Ով գիտե, երևի հենց հարսներն են տնից դուրս արել սրանց, որ ոտքի տակ չընկնեն: Որ մի քիչ շունչները բացվեն: Ու մ է պետք անգործ, ծեր մարդը:

Եվ Մովսես ապերը մտածեց, որ շուտով, շատ շուտով գյուղում էլ նույնն է լինելու: Դե, գազը տուն են բերել, գոմերում ավտոմեքենաներ են կանգնած, անասուն չկա, հացը խանութից են առնում, նմանապես պոմիդորն ու կարտոֆիլը և մնացած բաները:

Տղամարդն էլ ինչն՞ վ պետք է զբաղվի: Պիտի նստի ու նարդի խաղա, էլի:

Իբր թե կանա՞յք ինչ գործ պիտի ունենան: Երևի սրանց նման ամեն մեկը մի Տուզիկ գրկած ման գա:

Մովսես ապերը նոր էր Տուզիկի թեմային անցել, երբ ջահել մի կին իր հորթաչափ, ահռելի շան հետ մոտեցավ ու նստեց նրա կողքին: Մովսես ապերն այդպիսի շներ միայն կինոներում էր տեսել, գերմանացի ֆաշիստների հետ: Շան բերանի անկյուններից լորձունք էր թափվում, իսկ կարմիր աչքերը չարությամբ հառված էին Մովսես ապորը:

«Մա հո հաստատ մարդ կուտի», - սարսափեց Մովսեսը, փորձեց բարձրանալ տեղից, բայց ոտքերը չենթարկվեցին:

Ասես հասկանալով նրա վիճակը, կինը մեղմ ժպտաց.

- Մի վախեցեք, հայրիկ, չի կծում, - ասաց նա:

Մովսես ապերը շունչ քաշեց թեթևացած և երախտագիտությամբ նայեց ջահել, սիրունատես կնոջը:

- Ներողություն, աղջիկ ջան, - հարցրեց նա սրտապնդված և քաղաքավարության բոլոր կանոններով: - Դրան որտե՞ղ էք պահում:

- Տանը, որտե՞ղ, - ասաց աղջիկը:

- Բա ձեր տուն մարդ-մուրդ չի գալի՞ս:

- Ինչո՞ւ չեն գալիս, - ծիծաղեց աղջիկը: - Բայց իմ Ջոնին խելոք է, ոչ ոքի չի կծում, այդպես չէ՞, Ջոնի:

Շունը նույնիսկ հարկ չհամարեց պատասխանել այդ հարցին:

Մովսես ապերն ավելի սրտապնդվեց:

- Դե, որ էդպես է, շատ-շատ ներողություն, աղջիկ ջան, մեծ մարդ եմ, համ էլ՝ գյուղացի, կներես, որ հարցնում եմ: Երեխա չունե՞ս:

- Ոչ, - ասաց աղջիկը:

- Բա ավելի լավ չէ՞ր լինի, եթե շան տեղը մի երեխա պահեիր:

Կինն ուզեց բարկանալ, բայց նայեց Մովսես ապորն ու չբարկացավ:

- Մեկը մյուսի հետ ի՞նչ կապ ունի, հայրիկ:

- Այսինքն ո՞նց թե կապ չունի, - ասաց Մովսես ապերը, - բա էդքան որ դրան ես հետևում, դուրս բերում, ման ածում, լողացնում և ուտեցնում, էդքանը որ մի երեխայի համար անեիր, ի՞նչ կաներ... կմեծանար, կհասկանար, շնորհակալ կլիներ, քեզ էլ օր ծերության հենարան կդառնար, հարգանքով, պատվով, գլխին կպահեր...

Կինը նորից ժպտաց.

- Համոզված եք,- հարցրեց նա:- Այդպիսի օրինակներ շատ ունեք:

Եվ Մովսես ապերը հանկարծ վատ զգաց իրեն: «Այ՛նքն ճեր ցավը տանեմ,- մտածեց նա,- չլինի՞ էս կինը ճանաչում ա իմ տղին ու հարսին»: Նա հիշեց իր լարված վիճակը որդու տանը, Տուզիկի թախտը հիշեց ու որոշեց խորամանկորեն նահանջել:

- Չէ՛, այսինքն գիտե՞ս, թե ինչի եմ ասում,- ծիծաղեց նա: - Ասում եմ՝ ջահել, սիրուն աղջիկ ես, մեկ էլ տեսար քո բախտը եկավ, կանգնեց քո դեմ-դիմաց: Բայց հենց որ էս մարդակեր գազանին տեսնի, էլ սիրտ կանի՞ քեզ մի բան ասել: Լեղաճաք կլինի: Հիմի ո՞վ գիտի քանիսն են եկել ու անցել:

Կինը քրքջաց.

- Եթե շնից վախեցող են, ինձ հետ գործ չունեն,- ասաց նա:

- Հա , բայց կարող է մտածեն, թե կծան է, է,- դերասանություն անելով, մտահոգ ասաց Մովսես ապերը:- Բա էդ ժամանակ ո՞նց կլինի:

- Ով որ ինձ դուր գա, ես նրան թաքուն կասեմ, որ Ջոնին կծան չէ,- շարունակելով քրքջալ, խոստացավ սիրունատես կինը,- միայն թե մինչև հիմա այնպիսի մարդ չի հանդիպել, որ ինձ դուր գա... Ձեզանից բացի,- ավելացրեց նա խաղացկուն ձայնով: - Դուք կարծում եք ես ձեզ հենց այնպե՞ս հայտնեցի, որ Ջոնին կծան չէ...

Մովսես ապերը այդպիսի հարվածի չէր սպասում և շփոթվեց: Անմիջապես նկատելով նրա շփոթությունը, կինն ավելի բարձր ծիծաղեց, վեր կացավ տեղից, ձգեց շան փոկը և ծիծաղելով, ուրախ քայլեց զբոսայգու կարմիր անցուղու վրայով:

Մովսես ապերը ժպտաց ինքն իրեն ու ինքն իրեն ասաց. «Լավ աղջիկ էր»: Հետո վեր կացավ տեղից, թեթև քայլերով դուրս եկավ Թումանյանի փողոց ու այնտեղից էլ թեքվեց դեպի Աբովյան, և որովհետև այդ ողջ ճանապարհին մտքում դեռ խոսում էր սիրունատես, ջահել կնոջ հետ, խաչմերուկի մոտ կանգ առավ, ժպտաց, թափահարեց գլուխն ու ասաց ինքն իրեն.

- Շուն էր պահում, բայց լավ աղջիկ էր: Աստված բարի բախտի արժանացնի նրան:

Հետո նորից քայլեց, այս անգամ Աբովյան փողոցն ի վար ու կարծես պատասխանելով ինչ-որ մեկին, խստորեն ասաց.

- Ուրեմն, հարցը շունը չի:

Ու շատ զարմացավ, որ անցորդ մարդիկ, չգիտես ինչու, զարմացած իրեն էին նայում:

\*

\* \*

Հրապարակը շրջապատող շենքերից մեկի կողքով անցնելու ժամանակ Մովսես ապերը մի զարմանալի կլոր հերթ տեսավ: «Էս ժամին ի՞նչ են ծախում, տեսնես», - հետաքրքրվեց նա ու

մոտեցավ: Բավականին շքեղ հագնված տղամարդիկ ու կանայք խիտ օղակով շրջապատել էին դուռը, որի մեջտեղում կանգնած էր գեներալի համազգեստ հագած մի մարդ: Գեներալը հոգնած ու բարկացած էր երևում:

- Ես ձեզ հայերեն եմ ասում, ոչ մի ազատ աթոռ չկա,- արդեն երևի որերորդ անգամ ասում էր նա:- Հվատում չե՞ք:

Եվ Մովսես ապերն զգաց, որ այդ գեներալը ոչ միայն հայերեն, այլև նույնիսկ «քոլեցու» բարբառով է խոսում:

- Ընկեր ջան, դուք թույլ տվեք, մենք տեղ կգտնենք:

- Ես խոհարար Միշայի փեսան եմ:

- Այ քեռի, ձեռքդ տուր, ձեռքդ տուր, բան եմ ասում...

- Ինձ նայեք, ընկեր, ինձ նայեք: Դուք ինձ չե՞ք ճանաչում...

Գեներալը շարունակում էր անվրդով ու անհողողող պաշտպանել դուռը:

- Ես բոլորիդ էլ ճանաչում եմ: Ձեռքդ հեռու տար, այ մարդ: Ես ձեզ հայերեն եմ ասում՝ ազատ տեղ չկա: Հվատում չե՞ք...

Ձայնը շատ ծանոթ էր, և Մովսես ապերը նայեց գեներալին:

- Համա թե գալիս ես, Մովսես~ս, համա թե գալիս ես: Դե, մոտ արի, մոտ, իբրև թե քիչ ես ուշացել:

- Ե՞ս,- ապշեց Մովսես ապերը շփոթված շուրջը նայելով:

- Չէ, ես,- ծաղրեց գեներալը:- Ճանապարհ տվեք, այ մարդիկ, չե՞ք տեսնում, մեր գիշերային պահակն է:

Մարդիկ դժկամությամբ, սակայն, պատկառանքով մի կողմ քաշվեցին, և Մովսես ապերն ակամա հայտնվեց ինչ-որ մեծ նախասրահում: Կանգ առավ, ուժեղ լույսից կկոցեց աչքերը ու մի անգամ էլ նայեց գեներալին:

- Պահ,- դուրս թռավ նրա բերանից,- Ներսես, դու ե՞ս, այ քո տունը չքանդվի:

- Ես եմ, ես,- դուռը հիմնավորապես փակելով ու զցելով փոքրիկ, փայլուն շղթան, դեպի Մովսես ապերը շրջվեց Մովսեսը:

- Բա էս ի՞նչ ես անում էստեղ, ա՜յ մարդ,-- ուրախացավ Մովսես ապերը՝ գեներալի համազգեստի մեջ հայտնաբերելով իր համազգյուղացի Ներսեսին:

Նա ուզեց ավելացնել, թե այդ ի՞նչ շոր ես հագել, բայց անմիջապես էլ նկատեց, որ նախասրահը գեներալներով լի է:

- Դռան պահակն եմ,- հպարտ ասաց Ներսեսը, գլխարկը հանելով գլխից ու հովհարելով դեմքը:

Հետո նկատելով սանդուղքով իջնող երկու տղամարդու, գլխարկը շտապով գլխին դրեց, խոր խոնարհիվեց նրանց առաջ և պատանու թեթևությամբ բացեց դուռը.

- Անուշ արիք,- ասաց նա:- Նորից համեցեք:

Տղամարդկանցից մեկը մեկնեց ձեռքը, ինչ-որ բան դրեց Ներսեսի գրպանը, և նրանք դուրս եկան:

Ներսեսը շրջվեց նորից, ձեռքը գրպանը տարավ ու մի ճմռթված ռուբլիանոց հանեց.

- Ժլատ շան որդի,- փնթփնթաց նա, օրորելով գլուխը:

Մովսես ասպերը ծիծաղեց.

-Այ տղա, ուրեմն, գործդ նույնն է, էլի: Գյուղում ներս մտնողից էիր փող առնում, էստեղ՝ դուրս եկողից:

- Ուրեմն, գյուղի կինոն համեմատեցիր ռեստորանի հե՞տ,— հեզնեց Ներսեսը:— Էստեղ ներս մտնողից ես եմ առնում, իսկ դուրս եկողն ինքն է տալիս: Էստեղ, ախպորս որ ասեմ, ես ավելի շատ փող եմ ստանում քան թե նույնիսկ քո տղան՝ Մարկոս Մոխսեյիչը: Մեկ-մեկ բերում են էստեղ, պատիվ են տալիս, համա չնեղանաս, Մովսես ջան, գոնե մի անգամ ձեռքը ջերը տարած չկա: Դե, երևի ամեն մարդ մի խասիաթ պիտի ունենա... չէ՞ ...

Մովսես ասպերը վատ զգաց որդու համար և միանգամից գոջաց, որ ներս է մտել: Բայց նա այն մարդը չէր, որ խոսքի տակ մնար...

- Իսկ մե՞ջքդ ոնց է, մեջքդ,- հարցրեց նա,- շատ կռանալուց չի՞ ցավում:

Այդ վայրկյանին մի խումբ էլ իջավ մարմարյա աստիճաններով և իջնողներից մեկը բացահայտորեն և կարծես դիտավորյալ՝ հեռվից մի երեքանոց մեկնեց Ներսեսին: Ներսեսը մանրիկ քայլերով մոտ գնաց, ձգվեց, վերցրեց թղթադրամը, խոր գլուխ տվեց ու բացեց դուռը.

- Անուշ արիք,- ասաց նա,- նորից եկեք:

Հետո դարձավ Մովսես ասպերն ու ծիծաղելով ասաց.

- Իմ մեջքն ինչի՞ պիտի ցավի, ֆիզկուլտուրա է: Իսկ որ հանկարծ ցավի, փառք աստծո, գրպանս դատարկ չի, Մացեստա կա, Էսենտուկի կա, Ջերմուկ կա...

Նորից շրջվեց, բացեց դուռն ու արքայական շարժումով բարձրացրեց ձեռքը.

- Չորս հոգի, հանգիստ, հանգիստ: Միշայի փեսան որն էր: Դու էլ ներս արի: Ճիշտ է, Միշան փեսա չունի, բայց ներս արի... արի.. Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, շնորհակալ եմ...



Հետո նորից հիմնավորապես փակեց դուռը, հանդերձարանի մոտ կանգնած մի ուրիշ գեներալի աչքով արեց, որ հետևի դռանը և դարձավ Մովսես ապորը.

- Գնացինք:

- Ո՞ւր:

- Գնացինք, գնացինք,- ասաց Ներսեսը:

Նա բացեց ռեստորանի դահլիճի դուռը, ներս մտավ ու ձեռքով պահեց դուռը, մինչև որ Մովսես ապերն էլ ներս մտնի: Ռեստորանում ծուխ էր, խավար էր ու ժխոր: Նվագախումբն այնպիսի թափով էր նվագում, որ պատուհանների բաց փեղկերը դողում էին: Երևի հենց այդ աղմուկից շլացած ու խրտնած՝ փոքրիկ պարահրապարակում և սեղանների արանքում կատաղորեն ու վայրիվերո ցատկոտում էին տղամարդիկ ու կանայք: Մովսես ապորը մի պահ թվաց, թե դժոխքում սասանաների խրախճանքն է տեսնում ինքը կամ որ այդ մարդիկ ուղղակի սովորական խելագարներ են: Սառը, ձգված դեմքերով, լայն բացած, անկենդան աչքերով տղաներն ու աղջիկները կիսաբաց բերաններով հնալով, դողում ու գալարվում էին ծալած ծնկների վրա, վեր էին թռչում, ձեռքերը պարզում երկինք ու ոտքերով ամուր դոփում հատակին, հետո թափով առաջ էին նետում մեկ ձախ, մեկ աջ ոտքը՝ զարմանալիորեն խուսափելով դիմացինի հարվածներից, ու հետո նորից կանգ էին առնում տեղում ու դողում էին այնպես սաստիկ, որ պարզ երևում էր, թե ինչպես են ցնցվում նրանց ուսերն ու կողերը, կոնքերն ու որովայնները, մազերն ու կախ ընկած ծնոտները:

- Էս ի՞նչ են անում, ձեզ մատաղ,- գոռաց Մովսես ապերը:

- Պարում են, պարում,- ի պատասխան գոռաց Ներսեսը և Մովսես ապորը տարավ սյան տակ դրված փոքրիկ սեղանի մոտ:- Նստիր...ուտելու ի՞նչ կուզես:

- Ինչ որ տաս,- ասաց Մովսես ապերը՝ վախեցած աչքերը պարողներից չկտրելով:- Սոված եմ, Ներսես...

Ներսեսը մատով մոտ կանչեց ժողովրդական արտիստ Երվանդ Տրդատյանի նման հագնված մի շատ գեղեցիկ ու ջահել մատուցողի և ասաց.

- Եղբայրս է, Թովմաս, ինչ որ լավ բան կա:- Հետո դարձավ Մովսես ապորը:- Մի քիչ կիսմե՞ս...

- Հա,- ասաց Մովսես ապերը,- մի բաժակ արաղ կիսմեմ:

- Մի շիշ - կարգադրեց Ներսեսը:

- Վայ, մի շիշն ի՞նչ ես անում, ես հո ուշա՞փ չեմ,- բողոքեց Մովսես ապերը:

- Չես խմի, թող մնա,- ձեռքը թափահարեց Ներսեսը:

Մովսես ապերն ուզեց մի բան ասել, հետո հրաժարվեց:Նորից ուզեց ասել, նորից հրաժարվեց ու ասաց ծիծաղելով, որպեսզի դրանով իբր թե մեղմացնի խոսքի դառնությունը.

- Ա Ներսես, մի բան ասեմ, նեղանաս ոչ, գյուղում ոնց որ թե էնքան էլ ձեռնբաց մարդ չէիր, քեզ ի՞նչ է պատահել:

Ներսեսը չնեղացավ:

- Ա Մուս , - ասաց ինքն էլ ծիծաղելով: - Էդ անտերը որ ջեբիդ մեջ չի լենում, իրեն-իրեն ժլատ ես դառնում, էլի... - Իսկ հետո արդեն ավելացրեց ռեստորանում ձեռք բերած իմաստությամբ: - Ժլատը ունեվորների մեջ կլինի, ախպեր, չունևորի ժլատը ո՞րն է...

Երկուսն էլ լավ, հին օրերի նման ծիծաղեցին:

- Դե, դու հանգիստ կեր, խմիր, ես գնամ իմ գործին: Վախենաս ոչ, մեկ-մեկ կերևամ:

Երվանդ Տրդատյանի պես գեղադեմ պատանին առանց հարցնելու, մի տասը տեսակ ուտելիք դրեց Մովսես ապոր առաջ, ինքն էլ իր ձեռքով լցրեց նրա բաժակն ու ժպտալով ասաց.

- Սա կերեք, հայրիկ, մինչև որ տաք ճաշը կբերեմ...

- Վայ, էսքանից հետո էլ ուտե՞լ կլինի,- անկեղծորեն զարմացավ Մովսես ապերը,- էստեղ մի գորքի ճաշ կա:

Նա տարակուսանքով նայեց ափսեի աջ ու ձախ կողմերում շարված երեքական պատառաքաղներին ու դանակներին, մտածեց-մտածեց ու որովհետև գլխի չընկավ, թե դրանք ինչի համար են, որոշեց առայժմ ոչ մեկին ձեռք չտալ, նա ձեռքն առավ օղու փոքրիկ բաժակը, գլուխը բարձրացրեց դեպի երկինք ու մրմնջաց.

- Փառքդ շատ, աստված:

Խմեց, մի կտոր հաց վերցրեց, մի կտոր երշիկ դրեց հացի վրա ու կերավ: Նայեց չորս կողմը, տեսավ, որ ոչ մեկը իրեն չի նայում, մի բաժակ էլ լցրեց, խմեց, մի կտոր հաց ու երշիկ էլ կերավ: Հետո ուրախացավ, տեսնելով, որ սեղանին թել-պանիր էլ կա, մի կտոր էլ պանիր կերավ:

Արյունը խաղաց երակներում: Պարզվեց միտքը: Մովսես ապերը ետ ընկավ աթոռին ու արդեն ոչ առաջվա երկյուղով նայեց շուրջը:

Նվագախումբը հիմա հայկական պար էր նվագում ու թեն պարողներից մի քանիսը շարունակում էին առաջվա նման գալարվել ու ոստոստել տեղում, բայց մեծ մասը հենց հայերեն էլ պարում էր, և դա շատ դուր եկավ Մովսես ապորը: Նրան շատ դուր եկավ հասկապես այն, որ պարողներից մեկը թեն կարծես թե ռուս աղջիկ էր՝ առատ, շեկ մազերով ու կապույտ աչքերով, բայց նա էլ էր պարում հայերեն՝ նազանքով օրորվելով ու իբր թե ամոթից խոնարհելով աչքերը:

Մովսես ապոր կողքի սեղանին չորս ջահել տղաներ էին նստած: Երևում էր, որ մի քիչ շատ էին խմել: Այսինքն՝ սեղանից էր երևում, սեղանը շշերով լիքն էր: Չորսն էլ քանդած օձիքներով

վերնաշապիկներ էին հագել, ծխում էին ու լարված, առաջ թեքված, հետևում էին այդ աղջկա պարին:

Տղաներից մեկը, որ աղջկա նման երկար, փայլուն մազեր ուներ, վեր կացավ, մի քիչ օրորվելով մոտեցավ աղջկան, կանգ առավ, նայեց, նայեց ու ինչ-որ թղթադրամ, թե ի՞նչ թղթադրամ, չտեսավ Մովսես ապերը, գրպանից հանելով, ուղղակի խցկեց աղջկա ափի մեջ: Աղջիկը մի պահ նրան նայեց, ժպտաց, հետո նորից, ասես ամաչելով խոնարհեց աչքերն ու շարունակեց պարել:

Այդ ժամանակ տեղից վեր կացավ տղաներից երկրորդը, որ բարակ, սև բեղեր ուներ, եկավ, կանգնեց աղջկա ճանապարհին, բարձրացրեց ձեռքերը, Մովսես ապորը թվաց, թե տղան ուզում է պարել: Մակայն տղան չպարեց:

Ուղղակի երկու ձեռքն էլ պարզեց աղջկան ու նրա յուրաքանչյուր ափի մեջ մի- մի թղթադրամ դրեց:

Դա էլ դուր եկավ Մովսես ապորը: «Լավ է, որ իրենց պապական սովորությունները պահում են», - մտածեց նա, հիշելով իրենց գյուղական հարսանիքները:

Նվազը կտրվեց: Աղջիկը քայլեց դեպի նվագախումբը, ձեռքի դրամները անփութորեն նետեց մորուքավոր թմբկահարի ոտքերի տակ և գնաց նստեց մի սեղանի մոտ, որտեղ ճաղատ գլխով մի մարդ կար նստած: Գնաց նստեց ու արդեն առանց խոնարհելու գլուխը՝ այնտեղից սկսեց իր սիրուն, կապույտ աչքերով նայել տղաներին ու ժպտալ: Եվ դա բոլորովին դուր չեկավ Մովսես ապորը: «Քո մարդու հետ նստած ես, էլ ի՞նչ ես սրան-նրան ծիկրակում», - մտքում դատապարտեց նա աղջկան և մի բաժակ էլ օղի խմեց:

Նա միանգամից զգաց, որ նվագախումբն էլ չի նվագում, որովհետև սկսեց լսել մարդկանց ձայները: Լսեց, նայեց չորս կողմն ու սարսափեց: Մի հսկա դահլիճ, լեփ-լեցուն սեղաններ և բոլորը միաժամանակ ուտում են ու խմում, խոսում են ու խմում, ծիծաղում են ու խմում: Մի հսկա դահլիճ ծամոդներ:

«Սրանց կեր հասցնե՞լ կլինի, - անհանգստացած մտածեց Մովսես ապերը: - Սրանց երկի՞ր կդիմանա: Խեղճ գյուղացին ինչքան պիտի աշխատի, որ սրանք էսպես ամեն օր, ամբողջ տարին ուտեն»:

Իսկ կողքի սեղանի չորս տղաներից համեմատաբար մեծը, որի վերնաշապիկի վրա օտար լեզվով ինչ-որ բաներ էին գրված, ծույլ-ծույլ ծամելով, նախատում էր իր ընկերներին՝ խեթ հայացքներ նետելով շեկ մազերով աղջկա կողմը:

- Սրա, ի՞նչ էք թիթիզություն անում, արա, ո՞վ ա էդ... է- նա մի շատ վատ խոսք ասաց աղջկա հասցեին, - որ քսանհինգանոցներ էք շարտում:

Բարակ բեղերով տղան աքլորացավ:

- Տո, քեզ ինչ, - ասաց նա, - արա, ես քեզնից եմ ուզո՞ւմ... դուրս գալիս ա, տալիս եմ...

Մովսես ապերը չհավատաց ականջներին: Ինչպե՞ս թե քսանհինգանոցներ: Ո՞նց են շարտում, որտեղի՞ց... կամ հետո ո՞նց են նորից ետ վերցնելու: Այդ նվագողը հո կխառնի: Ո՞նց է հիշելու, թե ումից ինչքան է վերցրել:

Նա նորից իրենց գյուղական հարսանիքները հիշեց, իրենց գունաչուն, որի հետ նախօրոք պայմանավորված, քեֆը տաքացնելու համար, մի երեք ռուբլիանոց, մի հինգ ռուբլիանոց էին տալիս պարող հարս ու աղջիկների ձեռքը, իսկ հետո ետ վերցնում գունաչուց: Նորից էին տալիս ու նորից ետ վերցնում: Հիմա սրանք ինչպե՞ս են ետ վերցնելու իրենց փողերը:

- Հը, գործերդ ո՞նց են,- լսեց նա Ներսեսի ձայնը և շատ ուրախացավ, որ Ներսեսը նստեց իր կողքին:- Այ տղա, էս ինչի՞ չես ուտում:

- Կուշտ եմ, Ներսես ջան,- ասաց Մովսես ապերը:- Համա թե վախում եմ:

- Ինչի՞ց ես վախենում,- ծիծաղեց Ներսեսը:

- Էն աղջկան տեսնո՞ւմ ես,- մատով ցույց տվեց Մովսես ապերը:- Էս տղերքը կռիվ են անելու նրա համար: Վախում եմ:

Ներսեսը նորից ծիծաղեց:

- Հիմի աղջկա համար ո՞վ ա կռիվ անում, այ տնաշեն,- ասաց նա:- Էդ ժամանակներն անցել են: Արի մի-մի բաժակ իրար հետ խմենք, արի...

Նա թիկունքը դեպի դահլիճը դարձրեց, բաժակը չիկացրեց ընկերոջ բաժակին ու ասաց.

- Մեր հողի կենացը, ա Մուս, խաշամի տակից ջուր խմած տղերքի կենացը:

Մովսես ապոր սիրտը լցվեց:

- Երկու օր ա եկել եմ, համա սիրտս արդեն ճաքում ա, ոնց որ թե մի տարի օտարության մեջ ըլեմ: Դու ո՞նց ես դիմանում, այ տնաքանդ...

- Մարաթա ծառերը կա՞ն,-հարցրեց Ներսեսը՝ աչքերի մեջ տխրություն ու կարոտ:

- Մինն ա մնացել,- ասաց Մովսես ապերը:- Էն էլ էսօր-էգուց վեր կընկնի:

- Վախ, վախ, - հառաչեց Ներսեսը,- Միտդ ա՞ ինչ հարսանիքներ ենք արել էդ ծառերի տակ...

«Հարսանիք» բառը Մովսես ապորը նրան տանջող հարցը հիշեցրեց, և նա հետաքրքրվեց, թե նվագողները ո՞նց են ամեն մեկին իր տված փողը վերադարձնելու: Բա չե՞ն խառնի:

Ներսեսը փոթկացրեց.

- Ո՞վ պիտի ետ տա, այ մարդ, առան՝ առան...

- Ո՞նց թե,- ապշեց Մովսես ապերը,- քսանհինգանոցներ էին այ տղա...

- Հացդ կեր, հացդ կեր,- ընկերոջ ուսին թփթփացրեց Ներսեսը:-Կեր, խմի, մի լավ քեֆ արա էսօր: Ես մի քիչ հետո էլի կգամ:

Ու գնաց՝ հպարտ-հպարտ անցնելով սեղանների արանքով: Ինչպես տեր:

Բայց Մովսես ապերն արդեն թունավորվել էր: Ոչ ուտել էր ուզում ու ոչ էլ խմել:

« Էդպես ո՞նց կլինի,- մտածում էր նա:- Բա էս օր-ծերության ամբողջ օրը փութսի առաջ կռացած կրակի ու երկաթի հետ կռիվ տալով, ծուխ-մուխ կուլ տալով, թոքերս սևացնելով, թներս կտորելով աշխատեմ շան նման ու ամիսը ստանամ հարյուր մանեթ... հարյուր մանեթ... Իսկ էս մոռուքավոր դիոլչի լակոտը մի քանի բոլբոլում հազարներ հավաքի՞ ... Բա էս բոլբոլը տեսնող չկա՞ : Բոլբոլը քոռացել է՞ն: Էս ի՞նչ է կատարվում, այ ձեզ մատաղ, էս փողերը ո՞ր տեղից են գալիս ու ո՞ր տեղ են գնում: Էսպես հո հաստատ պատերազմ կլինի»:

Նա այնպես էր հուզվել, խճճվել դառը մտքերի մեջ, որ միանգամից չհասկացավ, թե ինչ է ասում սիրունադեմ մատուցողը:

- Սա ձեզ են հյուրասիրում,- ասում էր նա՝ ինչ-որ փայլուն դույլի մեջ սրբիչով փաթաթած մի արծաթապատ մեծ շիշ ցույց տալով.

- Ի՞նչ,- հարցրեց Մովսես ապերը:

- Շամպայն գինի է,- ասաց մատուցողը:- Բացե՛մ...

- Չեմ ուզում, չէ,- հրաժարվեց Մովսես ապերը:

Մատուցողը ժպտաց.

- Չի կարելի, հայրիկ,- ասաց նա,- կվիրավորվեն: Կնեղանան:

- Ո՞վ,- զարմացավ Մովսես ապերը:

- Այս շիշն ուղարկողը: Այ, այն տղան,- նա գլխով ցույց տվեց կողքի սեղանին նստած տղաներից մեկին, որն առատ, գանգուր մազեր ունէր:

Տղան, հեռվից ժպտալով, նայում էր Մովսես ապերը:

- Իսկ էդ տղեն ո՞վ ա, բալա ջան, ու ինչի՞ ա ուղարկում:

Մատուցողը թոթվեց ուսերը և անօգնական հայացքով նայեց շամպայն հյուրասիրող տղայի կողմը:

Տղան երևի ըմբռնեց իրադրությունը, որովհետև բարձրացավ տեղից, մոտեցավ Մովսես ապերն ու նստեց նրա դիմաց:

- Բարև, Մովսես ապեր, - ասաց նա:

- Բարև, տղա ջան, դու ինձ ո՞րտեղից գիտես,- զարմացավ և ուրախացավ Մովսես ապերը:

Տղան խորամանկորեն աչքով արեց.

- Իսկ դու ինձ չե՞ս ճանաչում:

Մովսես ապերը երկար նայեց նրան:

- Երեսդ ոնց որ տեսած լինեմ, բայց թե ով ես, կարում չեմ գլխի ընկնեմ:

- Սեփունց Մուշեղի թոռն եմ:

- Սեփունց Մուշեղի՞, - հարցրեց Մովսես ապերը:- Ո՞րի տղեն ես:

- Քնարիկի:

- Քնարիկի՞: Իսկ հե՞րդ ով ա, հերդ:

- Չես ճանաչի: Երևանցի է: Բա դու ինձ ո՞նց չես հիշում, ամառները որ գյուղ էի գալիս, ամբողջ օրը քո դարբնոցում էի, փուքս էի փչում: Մի հատ էլ մանգաղ սարքեցի տատիս համար: Դու էլ հավանեցիր: Պապս, տատս ո՞նց են:

- Կան, էլի,- ասաց Մովսես ապերը, հետո անմիջապես ավելացրեց,- գետատար տատիդ աչքերը փառակալել են, համարյա չի տեսնում խեղճը:

- Հա, լսել եմ,- ասաց տղան:

- Իսկ քո անունն ի՞նչ է, տղա ջան,- հարցրեց Մովսես ապերը:

- Գարուշ,- ասաց տղան:

- Բա ի՞նչ ես անում, ի՞նչ գործի ես:

- Համարյա թե քեզ նման դարբին եմ, Մովսես ապեր: Երկաթից կոճակ-մոճակ եմ սարքում,- ծիծաղեց տղան:

- Լավ ես անում,- հավանություն տվեց Մովսես ապերը:- Արհեստը ոսկե բիլագուկ ա: Հին խոսք ա, ասում են՝ արհեստավորը մինչև կեսօր սոված կմնա:

- Էդ կողմից փառք աստծո,- ժպտաց Գարուշը:

- Իսկ էդ կողքիդ տղե՞րքը ովքեր են,- հետաքրքրվեց Մովսես ապերը:

- Իրար հետ ենք աշխատում,- ասաց Գարուշը:

- Հա՞,- գլխով արեց Մովսես ապերն ու լռեց:

- Բա ինչի՞ չես խմում,- հարցրեց Գարուշը:- Ես քեզ պատիվ եմ տալիս, իսկ դու չես խմում: Դու փաստորեն իմ առաջին ուստան ես եղել, բա ես իրավունք չունե՞մ քեզ համար մի շիշ շամպայն բացեմ...

Նա ձեռքը վերցրեց շամպայնի շիշը, մատը մտցրեց մետաղալարի օղակի մեջ:

- Բացիլ մի, խմում չեմ,- հաստատ ասաց Մովսես ապերը:

- Ինչի՞:

- Ես իմ իմացած բաներն եմ խմում:

- Գինի է, էլի, սրա մեջ ի՞նչ կա:

- Խմում չեմ,- ասաց Մովսես ապերը:

- Ես բացեմ, դու մի խմի,- համառեց տղան:

- Այ տղա, ինչի՞ ես փչացնում,- վրդովվեց Մովսես ապերը:

- Պահ,- արհամարհանքով ասաց Գարուշը,- ափսոսո՞ւմ ես, ուզո՞ւմ ես հարյուր հատ տրաքացնեմ կողքիդ... Դրա եղած-չեղածն ի՞նչ է...

- Չեմ ուզում,- ասաց Մովսես ապերը:

Երևի լավ էր, որ ընդմիջում գնացած նվագախումբը նորից սկսեց նվագել: Այնպիսի մի աղմուկ բարձրացավ, որ Մովսես ապերը, եթե ցանկանար անգամ, Գարուշի խոսքերը լսել չէր կարող: Նա ձեռքը ականջին տարավ, հասկացրեց, որ ոչինչ չի լսում և նույն ձեռքով Գարուշին նրա սեղանը ցույց տվեց, որտեղից տղաներն անհամբեր շարժումներ էին անում:

Տղան դարձյալ ինչ-որ բան ասաց, նայեց իր ընկերներին և շամպայնի շիշը Մովսես ապեր առջև թողած քայլեց դեպի իր սեղանը, բայց կես ճանապարհից ետ դարձավ, դարձյալ ինչ-որ բան ասաց բաց ու խուփ անելով բերանը, ժպտաց, սեղանից վերցրեց շամպայնի շիշն ու հեռացավ:

Մովսես ապերը թեթևացած շունչ քաշեց:

Եվ որովհետև այդ հանդիպումից հետո բերանում մի տեսակ դառնություն էր մնացել, մի բաժակ օղի ևս խմեց, որպեսզի անցնի այդ դառնությունը: Խմեց ու ինքն իրեն ասաց. «Էս մեկը չպետք է խմեի»:

Նա ավելի շուտ զգաց, քան տեսավ, որ կողքի սեղանին ինչ-որ բան է կատարվում: Երկար մազերը աղջկա նման թիկունքին թափած տղան ուզում էր ինչ-որ բան հանել գրպանից, իսկ նրա համեմատաբար տարեց ընկերը և Գարուշը չէին թողնում, ամեն անգամ քաշում էին թևից և նստեցնում տեղը: Նրանց առջև, զլուխը խոնարհած, ծավված ձախ արմունկին սպիտակ անձեռոցիկը, համբերատար կանգնած էր պլեհեր մի մատուցող:

«Երևի ուզում է սեղանի հաշիվը փակել», - ուրախացած մտածեց Մովսես ապերը, որը, չգիտես ինչու, շատ էր ուզում, որ այդ խումբը հեռանա ռեստորանից:

Ի վերջո, երկար մազերով տղան ցույց տվեց, թե իբր ենթարկվում է և ձեռքով հրելով տարեց մատուցողին՝ նրան հեռացրեց սեղանի մոտից:

Բայց հաջորդ վայրկյանին շատ արագ բարձրացավ տեղից, համարյա վազելով նվագախմբի մոտ գնաց ու ինչ-որ թղթադրամներ նետեց ձեռքի փայտիկներով այստեղ ու այնտեղ հարվածող և իր աթոռի վրա վեր-վեր ցատկող մորուքավոր թմբկահարի մեծ թմբուկի վրա: Մի ձեռքով շարունակելով հարվածել ու վեր-վեր թռչել, թմբկահարը զարմանալի ճարպկությամբ մյուս ձեռքով թմբուկի վրայից հավաքեց դրամները և թեքվեց առաջ՝ պատվերը լսելու համար:

Հետո տղան ուղղվեց դեպի այն սեղանը, որտեղ կապույտ աչքերով աղջիկն ու ճաղատ մարդն էին նստած, թեքվեց, աղջկա ականջին ինչ-որ բան ասաց:

Հենց այդ վայրկյանին նվագախումբը սկսեց կատարել հայկական պար:

Ճաղատ մարդը առաջ թեքվեց, ասես թե միջամտել էր ուզում, բայց ոչ տղան նայեց նրան, ոչ էլ աղջիկը: Աղջիկը ելավ տեղից, ժպտաց կուրացնող գեղեցկությամբ, ձեռքի սեթևեթ շարժումով դեն նետեց ոսկեգույն-շեկ վարսերը, վեր պարզեց ձեռքերն ու պարելով դեպի տղան, դեպի կենտրոն շարժվեց: Իսկ տղան չէր պարում, նայում էր աղջկան ու ետ-ետ քաշվում միայն: Իսկ երբ աղջիկը ճկուն իրանը օրորելով և ձեռքերը նազանքով շարժելով հասավ պարահրապարակի կենտրոն, տղան գրպանից ինչ-որ թղթադրամներ հանեց: Մեկ-մեկ բացեց աղջկա մատները և յուրաքանչյուր մատի արանքում մի-մի թղթադրամ դրեց:

Պարողներից ոմանք կանգ առան ու նրանց էին նայում: Կողքի սեղանների շուրջը նստած մարդիկ, որոնց մեջ ֆինանսների մինիստրության աշխատողի համազգեստով երկու հոգի ևս կային, գլուխները շրջելով նայում էին այդ տարօրինակ գույզին:

Աղջիկը պարում էր զարմանալի գեղեցիկ, զարմանալի քնքշությամբ ու նազանքով: Նա սև ներկված թարթիչների տակից շողացող կապույտ աչքերով նայում էր երկար մազերով տղային և ճախրում, խաղում, կաքավում նրա շուրջը: Իսկ տղան կանգնել էր անշարժ, շրջապատի նկատմամբ բացարձակ անտարբեր, ձեռքերը տաբատի գրպանների մեջ խոր խրած և ժպտալով աղջկան էր նայում: Ասես աղավնի խաղացնող լինեք, որ բաց էր թողել իր սքանչելի թռչունին ու հիմա հիանում էր նրա ձևերի կատարելությամբ, սլացիկ թռիչքով, շեշտակի, շաչող, գլխապտույտ շրջադարձով:

Մովսես ապերը չնկատեց նույնիսկ թե ինչպես հրապարակում հայտնվեց Գարուշը: Նա հայտնվեց հանկարծակի, կանգնեց իր երկարամազ ընկերոջ ու պարող գեղեցկուհու արանքում: Արագորեն մոտեցավ աղջկան, գրպանից մի կապ թղթադրամ հանեց, քանդեց, ոտքերի տակ նետեց կապը պահող թղթե կապույտ ժապավենը:

Մի անասելի իրարանցում սկսվեց: Մատուցողները թողեցին իրենց գործը և վրա պրծան թղթադրամներին, նվագողները ճարպկորեն ցած թափվեցին իրենց հարթակի վրայից, հարևան սեղանների շուրջը նստածները և նրանց թվում՝ ֆինանսների մինիստրության համազգեստով մարդիկ կռացել ու սեղանի, աթոռների տակից ջանասիրությամբ հավաքում



էին թղթադրամները, հավաքում էին և հայարտ ժպտալով, թե տեսեք մենք ինչքան ազնիվ ենք, տեսեք, չենք թաքցնում, չենք յուրացնում, գրպաններս չենք դնում, թղթադրամները ցուցադրաբար պարզած մեկնում էին նվագողներին:

Այնպիսի մի աղմուկ էր պարահրապարակում և այնպիսի մի շփոթ, որ ոչ ոք, բնականաբար, ուշադրություն չդարձրեց մոխրագույն վերնաշապիկով, կիսամաշ, սև բաճկոնով և սև, ծնկների մոտ փայլփլող շավարով տարեց մարդուն, որը եկել, կանգ էր առել շրջապատի իրարանցմանը այդպես էլ անհաղորդ մնացած, կապույտ աչքերով գեղեցկուհուն արդեն հայարտ և նույնիսկ մի տեսակ հեզնանքով նայող Գարուշի դեմ-դիմաց:

- Այ տղա, բա դու տափը չես մտնո՞ւմ,- դողացող շրթունքներով շշնջում էր Մովսես ապերը:-  
Այ տղա, բա դու նամուս չունե՞ս: Էս ի՞նչ էս անում, խայտառակ մարդ...

- Գնա էստեղից, Մովսես ապեր, գնա , գնա , - միայն մի պահ զարմանալիորեն շփոթվեց Գարուշը:

- Քո Մուշեղ պապը յոթանասուն տարեկան մարդ ա, համա դեռ հունձ ա անում, որ տունը պահի, քո Մագթաղ տատը քոռացել ա, համա մի կարգին շոր չունի, որ հագցնեն, Երևան բերեն աչքի բժշկի մոտ: Իսկ դու էստեղ փողեր ես շաղ տալիս, հա՞, շան լակոտ:

Ոսկեգույն մազերով գեղեցկուհին արդեն վախեցած աչքերով մեկ Մովսես ապորն էր նայում, մեկ Գարուշին: Եվ Գարուշը բարկացավ.

- Այ մարդ, դու հո գիշերվա երազ չես... գնա , ասում եմ...

Նա բռնեց Մովսես ապոր ձեռքն ու թեթևակի հրեց: Մովսես ապերը ետ-ետ գնաց, թիկունքով կպավ ինչ-որ մեկի, կորցրեց իրեն, նորից առաջ եկավ, իր ծանր կոշտուկապատ ձեռքով, այն ձեռքով, որով մի օր էլ իր որդի Մարկոսին էր խփել գողության համար, որքան ուժ ուներ, ամուր շրխկացրեց գանգրահեր պատանու դեմքին:

Ապտակն այնքան շառաչուն էր, որ շրջապատում անմիջապես լռեց աղմուկը և բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի գազազած ծերունին:

- Յա՜ - զարմանքից ու ցավից ճչաց Գարուշը, - տո, դու ո՞վ ես, որ ինձ խփում ես:

Մովսես ապոր աչքերի առաջ լողում, իրար էր խառնվում ամեն ինչ, նա չէր էլ կարողանում տեսնել Գարուշի դեմքը և դրա համար էլ գոռաց այն կողմ, որտեղից նրա ձայնն էր գալիս, գոռաց ընդհանրապես.

- Էդ ես չխփեցի քեզ, էդ քո պապ Մուշեղը խփեց, նեռի զավակ... Փողեր եք շաղ տալիս, հա՞...  
Էլ աշխարհի մեջ ոչ մի սոված մարդ չկա, հա՞... Բոլորին հաց եք տվել, կշտացրել եք, հա՞...  
Պապիդ տան կտուրը քանդվել ա, իրեք հատ իտերնիդ չի կարում առնի, որ փակի անձրևի դեմը, դուք էստեղ պարում եք, հա՞... Վեր-վեր եք թռչում, հա՞: Կամ ձեր էդ ինչո՞վ եք վեր-վեր թռչում,- իր հաջորդ ասելիքի կամուրջը գտավ Մովսես ապերը:- Էդ ի՞նչ եք արել, որ վեր-վեր եք թռչում, ասեք՝ մենք էլ ուրախանանք, վեր-վեր թռչենք: Էդ ի՞նչ եք արել, որ քե՛ք եք անում ամեն օր, ամեն ամիս, ամեն տարի... շան ծնունդներ:

Ռեստորանն իր գոյության ընթացքում այդպես լուռ չէր եղել:

- Դուք էլ ապրեք, դուք էլ լավ եք անում,- դարձավ նա ֆինանսիստի հագուստով մարդկանց, որոնց, հավանաբար, իշխանության ներկայացուցիչների հետ շփոթեց:- Փոխանակ էս լակոտների ձեռք բռնեք, չորեքթաթ եք տալիս, փողերն եք հավաքում, ապրեք, շա՛տ ապրեք: Վայ մեզ, որ մեր տերը դուք եք: Վա՛յ մեզ: Վա՛յ մեզ: Վայ մեզ, որ մեր հույսը դուք եք, վա՛յ մեզ...

Մինչ Մովսես ապերը անձամբ Գարուշին էր դիմում, գրեթե բոլորը նրան լսում էին եթե ոչ բացահայտ գոհունակությամբ, ապա գոնե լուռ համակրանքով: Իսկ երբ նա սկսեց ծավալվել և արդեն ռեստորանային ողջ հասարակությանն ուղղեց իր խոսքերը, նորից աղմուկ բարձրացավ:

- Սա՞ որտեղից ծլեց: Էս էլ մի նոր Կարաբալա...

- Բայց սա հո խուլիզանություն է, ինչո՞ւ միլիցիա չեն կանչում: Երբ որ պետք են, նրանց չես գտնի:

- Ո՞նց են ներս թողել, այ մարդ:

- Տեսնես ո՞վ է հարբեցրել, գժվեցրել բիձուկին, ոտքի վրա չի կանգնում:

- Լավ է, որ արտասահմանից մարդիկ չկան, ի՞նչ կարծիք պիտի կազմեին հայ ժողովրդի մասին: Ահա մեր դարավոր մշակույթը... Ահա մեր փառավոր երկրի ներկայացուցիչը...

Զայրացած մարդկանց շղթան ճեղքելով առաջ եկավ հաղթանդամ մետրոդոտելը՝ անթերի կարված ապիտակ կոստյումով և սև թիթեռնիկ-փողկապով:

- Հանգիստ, հանգիստ, դուք ո՞վ եք, ընկեր, ինչո՞ւ եք խուլիզանություն անում: Դուրս անմիջապես, դուրս այստեղից: Դուք գիտե՞ք, թե որտեղ եք գտնվում:

Մովսես ապերն իրոք որ չէր կարողանում ոտքի վրա մնալ, պտտվում էր գլուխն ու խառնում էր սիրտը: Նա ինքն էլ՝ ուզում էր հեռանալ, բայց չգիտեր ինչպես և որտեղից դուրս գալ: Դրա համար էլ մնում էր տեղում կանգնած և օրորվում էր: Ու մեկ էլ գիտակցության շատ-շատ խորքում Մովսես ապերն զգում էր, որ լացը գալիս է, զարմանում ու սարսափում էր դրանից, բայց, միևնույն է, գիտեր, որ լացը գալիս է: Վարսենիկը մեռավ, պահեց իրեն, լաց չեղավ մարդկանց առաջ, իսկ հիմա զգում էր, որ չի կարողանալու զսպել արցունքները:

Ու երբ ինչ-որ մեկը վրդովված, որ իր խնջույքը խանգարվել է, բղավեց, «Դե դուրս արեք, պրծեք, դա ով է, է», - Մովսես ապերն այլևս չդիմացավ, քանդվեց:

- Ես դարբին եմ,- ասաց նա դողացող ծնոտով,- հիսունհինգ տարվա դարբին եմ գյուղում: Ես որ հիշում եմ ինչ օրեր եմ քաշել, լացս գալիս ա, հա, հա՛... ու լավ եմ անում, որ լաց եմ լինում: Իսկ դուք ո՞վ եք, է :- Նա ձեռքի կոշտ մատներով սրբեց աչքերից թափվող արցունքը:- Ուտողներ չե՞ք: Հը՞ : Ուտողներ չե՞ք: Ձեզ մի չանգյալն էլ քիչ է, չեք կշտանում, մեր արցունք-

քրտինքով դատած հացը արդեն իրեք-իրեք դանակ-չանգալով եք կտրում, ուտում: Էդ չե՞ք...  
Ու փոխանակ ես ձեզ հարցնեմ, թե ո՞վ եք դուք, դուք եք ինձ հարցնում, թե ես ով եմ, հա՞...

Եվ հանկարծ կատարվեց մի անսպասելի բան, ինչ-որ մեկը սրահի պրկված լուսության մեջ հեռուստատեսության հանրածանոթ հաղորդավարի ձայնով ասաց.

- Դուք լսեցիք զրույց բարոյախրատական թեմաներով: Այժմ լսեցեք լուրեր:

Մովսես ապերն ամեն ինչի սպասում էր, բայց ոչ նման արձագանքի: Եվ կարծեց, թե խելագարվում է, երբ ծիծաղ լսեց: Նա արցունքոտ, պղտորված աչքերով նայեց շուրջը և տեսավ, որ բոլորն էլ ծիծաղում են և ոչ թե սոսկ ծիծաղում, ուշաթափվում, գալարվում են ծիծաղից, շնչասպառ են լինում, հենվում են իրար, թփթփացնում իրար թիկունքի ու ծիծաղում են: Ծիծաղում էին բոլորը՝ թե սեղանների շուրջը նստած կանայք ու տղամարդիկ, թե նվագախմբի տղաները, թե ֆինանսիստի համազգեստով պաշտոնյաները, թե մատուցողները, թե Գարուշն ու կապույտ աչքերով գեղեցկուհին և թե նույնիսկ մատուցողների շեֆը, որ անթերի կարված սպիտակ կոստյում ուներ հագին և սև թիթեռնիկ ժապավեն:

Եվ Մովսես ապերը վերջնականապես խորտակված նրանց պարզեց դողողացող, կոշտուկապատ ձեռքերը...

- Ինչի՞ եք ծիծաղում,- հևաց նա,- ինչի՞ եք ծիծաղում, այ ձեր ցավը տանեմ... Լացի վրա եք ծիծաղո՞ւմ...

\*

\*\*

Երագում տեսավ, թե իբր տուն է եկել դարբնոցից, հոգնած ու մրի մեջ կորած, իսկ Վարսենիկը կանգնած է լայն բակի մեջտեղում ու սպասում է...

- Արի, արի, ջուր լցնեմ գլխիդ, սևամորթ,- կանչում է նա:

Կնոջ ոտքերի մոտ արևից տաքացած ջրի մի մեծ տաշտ կար: Մովսես ապերը հանեց բլուզն ու կոնացրեց գլուխը, Վարսենիկը պղնձե թասով ջուր լցրեց Մովսես ապոր գլխին, խառնեց մազերն ու ծիծաղեց.

- Մուր է թափում, մուր տնաշեն...

Ու հանկարծ Մովսես ապերը զգաց, որ մրսում է:

- Ջուրը սառն ա, այ աղջի,- փնչալով տրտնջաց նա- Էդ ինչ ես անում, սառն ա...

Եվ անմիջապես էլ արթնացավ: Ձեռքը ակամա գլխին տարավ ու տեսավ, որ գլուխն իսկապես թաց է: «Էս անձրևը ե՞րբ եկավ»- զարմացած մտածեց նա, ականջ դնելով ջրի խշռոցին և վերջնականապես արթնանալով՝ իրեն գտավ հրապարակի ջրավազանի քարե սառը բազրիքին նստած: Գիշերային քամին երբեմն-երբեմն շատրվանից ջրափոռի էր պոկում ու բերում ցանում սալերի վրա:

«Հա՛, - հիշեց Մովսես ապերը, մի կողմ քաշվելով,- էդ անտեր ռեստորանից որ դուրս եկա, մի քիչ նստեցի ու...»:

- Օ՛, ահա մի սքանչելի պատկեր, մարդը՝ ձուլված արհեստական բնությանը: Մեկ սիգարեթ իր կրակով չի՞ գտնվի ձեզ մոտ, անձանոթ քարեկամ:

Մովսես ապերը քարձրացրեց գլուխն ու տեսավ, որ օրորվելով իրեն է մոտենում քարձրահասակ, նիհար մի մարդ:

- Ի՞նչ, - հարցրեց նա սրտնեղած:

- Ասում եմ՝ պատահաբար իր կրակով մեկ սիգարեթ չէ՞ր գտնվի ձեզ մոտ:

- Ես քաշում չեմ,- ասաց Մովսես ապերը:

Անձանոթը ձեռքը պահեց ջրափոշու տակ, քսեց ճակատին ու նստեց Մովսես ապոր կողքին, քարի վրա:

- Ահա՛ թե ինչ,- ասաց նա:- ուրեմն, չեք ծխում... Ուրեմն, թույլ տվեք հարցնել՝ ինչու...

- Ի՞նչը ինչու:

- Ուզում եք երկա՞ր ապրել,- հարցրեց անձանոթը:

Մովսես ապերը շատ էր ընկճված ու հոգնած, որպեսզի կարողանար բարկանալ:

- Այ մարդ, ի՞նչ ես ուզում ինձանից, - հարցրեց նա գրեթե տխուր:

Անձանոթը ծիծաղեց:

- Յուրաքանչյուր հարց իր պատասխանն է պահանջում,- ասաց նա:- Ուզում եք երկա՞ր ապրել: Թե՞ դուք էլ համոզված եք, որ երկրորդ անգամ եք ծնվելու : Օ՛, ոչ, անձանոթ քարեկամ, սխալվում եք: Երկրի վրա անմահություն չկա: Հանգիստ ծխեք ու հավատացեք ինձ՝ բոլորն էլ, ի վերջո, մեռնելու են: Բոլորը...

Մովսես ապերը զգաց, որ ծիծաղը գալիս է:

- Էդ ե՞րբ իմացար, տղա ջան,- հազաց ու հարցրեց նա:

- Է՛, դա ես վաղուց գիտեմ, մի ծաղրեք ինձ, անձանոթ քարեկամ:- Հարբածի լրջությամբ ասաց տարօրինակ մարդը:- Ես դա վաղուց գիտեմ: Բայց ահա շատերը չգիտեն: Շատ-շատերը: Նրանք կարծում են, թե այս մեկը հենց այնպես են ապրում, փորձի համար, և մի ավել կտոր հացի կամ պաշտոնական սանդուղքով մի աստիճան քարձրանալու համար դիմում են ամեն տեսակի ստորության, շողոքորթում են, կեղծավորում են, խաբում են, խարդախում են, դավեր են նյութում, կողոպտում են մերձավորին, լքում երեխաներին ու ծնողներին, քծնում են դեկավարներին, դավաճանում ու մատնում ընկերներին, շնանում են... Որովհետև մտածում են, թե նորից են աշխարհ գալու: Ոչինչ, ասում են, այս մի կյանքը մի կերպ անցկացնենք, իսկ

մյուս անգամ որ ծնվենք... արդեն ուրիշ տեսակ կապրենք, ինչպես մադուն է վայել... հաշվի կառնենք անցյալի սխալներն ու ազնիվ կապրենք:

Հավատացեք ինձ, անծանոթ բարեկամ, այդպես շատերն են մտածում:

Իսկ ես այ այսպես, մեկ-մեկ մոտենում եմ մարդկանց ու նրանց հիշեցնում, որ բոլորն էլ մեռնելու են: Բոլորը: Հավատացնում եմ, որ ոչ ոք չի մնալու և ոչ ոք չի ծնվելու նորից:

Մովսես ապերը ժպտաց.

- Բա էդ բոլորը ինչի՞ ես խմած ժամանակ ասում, տղա ջան...

- Որովհետև լուրջ ժամանակ ամաչում եմ, բարեկամս,- ասաց մարդը:- Խմում եմ, հարբում եմ, որպեսզի համարձակություն ձեռք բերեմ: Որովհետև ստելու համար համարձակություն պետք չէ, ճշմարտությունն ասելու համար է պետք համարձակությունը: Դուք հասկացա՞ք ինձ, անծանոթ բարեկամ:

Մովսես ապերը բարձրացավ տեղից.

- Ոնց որ թե հասկացա,- ասաց նա,- մենակ թե շատ ափսոս, որ ծխող չեմ: Սրտանց քեզ սիգարետք կտայի... ոնց որ դու ես ասում՝ իրա կրակով:

Մարդը թույլ-թույլ ծիծաղեց.

- Օ՛, ոչ, ոչ, մի ափսոսացեք... Ես ևս ծխող չեմ... սիգարետքը առիթ էր՝ ձեզ մոտենաու համար... Իսկ հիմա թույլ տվեք հեռանալ ու շարունակել իմ աշխատանքը... Ես կարծես թե գտա ևս մեկին:

Նրա հայացքի ուղղությամբ նայելով, Մովսես ապերը տեսավ մի ջահել տղայի, որը կարճիկ ցայտաղբյուրից ջուր էր խմում:

- Ընկեր, ընկեր,- դեպի նա շտապելով՝ բացականչեց տարօրինակ քարոզիչը:- Ընկեր... մի սիգարետք չի՞ գտնվի ձեզ մոտ՝ իր կրակով...

Մովսես ապերը դանդաղորեն բարձրացավ Նալբանդյան փողոցով:

«Էս քաղաք ասածիդ մեջ ինչ տեսակ մարդ ասես կճարվի», - մտածեց նա:

\*

\*\*

- Կարծես թե դեռ շուտ է, պապ,- ասաց Արշակը:- Շամշադինի ավտոբուսը դեռ չկա:

Նա իր «Ժիգուլիով» Մովսես ապորը ավտոկայան էր բերել:

- Այ տղա, վայ թե ուշացել ենք,- անհանգստացավ Մովսես ապերը:

Արշակը ցած իջավ ավտոմեքենայից, կայանի շենքը մտավ ու քիչ անց դուրս գալով՝ ավտոմեքենային մոտեցավ այն կողմից, որտեղ Մովսես ապերն էր նստած:

- Իմաստուն մարդ ես, էլի, պապ,- ասաց նա մեղավոր ժպիտով, լայն մորուքը պատուհանից ներս մտցնելով,- մեկը գնացել է արդեն, իսկ մյուսն էլ կեսօրին է գնալու:

- Բա որ ասո՞ւմ էի,- վշտացավ ծերունին,- բա որ ասո՞ւմ էի... Հազար անգամ ասացի՝ վեր կաց, այ տղա: Բայց, դե, քեզ վեր կացնե՞լ կլինի: Արջի քուն ես մտնում:

Արշակը մորուքի տակ քորեց ծնոտը:

- Հա, բայց ո՞վ էր տեսել, որ Շամշադինի ավտոբուսը ժամանակին գնա,- վրդովվեց նա:- Դու այդպիսի բան կյանքումդ տեսե՞լ էիր: Մա փաստորեն կազմակերպված գործ է:

- Է՛,- խռոված տնքաց Մովսես ապերը:

- Այսինքն, ո՞վ գիտե, գուցե ասածու մատն է խառը,- ասաց Արշակը:- Գուցե ասված ասում է՝ Մովսես... գիտես, չե՞, որ նա Մովսես անունով մի աշխատակից է ունեցել... Ասում է՝ Մովսես, մի շտապիր, բարեկամ, մի անգամ ևս կշռադատիր՝ ինչո՞ւ ես գյուղ գնում, հիմա ո՞վ ունես գյուղում: Մնա Երևանում, հանգիստ ապրի, էլի...

Նա հենց այդպես, մեքենայի լուսամուտից պապի կողմը թեքված, գրկեց ծերունու խորշոմապատ վիզն ու մորուքը նրա գլխին սեղմեց:

- Ո՞ւր ես գնում, պապ ջան, մնա, էլի...

Մովսես ապերը չպատասխանեց: Նա նայում էր Արշակին ու իր հորն էր հիշում: Նա էլ արդեն տարիքն առած մարդ էր, երբ Մարկոսը ծնվեց: Տասը թոռ ուներ, բայց այդ խոսքը ոչ մեկի առիթով չէր ասել: Հա, իսկ երբ ծնվեց Մարկոսն ու Ալեքսան ապերը փայտե օրորոցի ծածկոցը բարձրացնելով, նայեց սպիտակ, փափլիկ թոռանը, հանկարծ միանգամից լցրեց աչքերը՝ «Ես գնացի, ա խալիս,- ասաց,- իմ փոխարինողը եկավ»:

Հավաքվածները բոլորը միանգամից հարձակվեցին Ալեքսան ապոր վրա, նախատեցին, ծիծաղեցին, համոզեցին, որ նա դեռ մի տասը թոռ էլ է տեսնելու և պարելու է բոլորի հարսանիքներին...

Բայց Ալեքսան ապերը թափահարեց գլուխը, նորից նայեց փայտե մահճակալի մեջ խաղաղ, անվրդով քնած մանկանը, երկար նայեց ու ասաց.

- Չէ, ժողովուրդ ջան, սա իմ տեղն ա եկել, ես գնացի...

Եվ երկու ամիս էլ չանցած՝ մեռավ:

Հիմա Մովսես ապերն իր թոռանն էր նայում և սրտի խորքում զգում էր, որ ուրիշ փոխարինողի չի տեսնելու: Որ, այ, հենց սա, Արշակն է, որ աշխարհ է եկել իր փոխարեն: Ոչ թե Տիգրանը, ոչ թե Մամիկոնը, ոչ թե Մարգիսը, լավն են բոլորը, երկար ապրեն... Բայց նրանք

ուրիշների տեղն են եկել, իսկ սա, էս մորուքավոր հսկա տղան ծնվել է միայն և միայն իրեն՝ դարբին Մովսեսին աշխարհի վրա փոխարինելու համար:

Եվ այդ միտքը չէր վշտացնում Մովսես ապորը: Ընդհակառակը, նա ուրախ էր, որ իր տեղը գրավողը բարի, ազնիվ, մաքուր սիրտ ունեցող մարդ է: Եվ երկաթի հետ գործ ունեցող մարդ է:

Մովսես ապերը չէր պատասխանում, և Արշակը բոլորովին այլ կերպ բացատրեց նրա լռությունը: Նա գլուխը դուրս հանեց պատուհանից, պտտվեց մեքենայի շուրջը, նստեց իր տեղը, միացրեց շարժիչն ու ասաց:

- Գնացինք, պապ:

- Ո՞ւր - Հարցրեց Մովսես ապերը:

- Շամշադին,- ասաց Արշակը՝ մայրուղի դուրս բերելով ավտոմեքենան:

- Այ տղա, դու հո շաշ չե՞ս,- գոռոռաց Մովսես ապերը: - Հինգ ժամվա ճամփա է:

- Էդ՝ քո ավտոբուսի համար,- ծիծաղեց Արշակը:- Իսկ ես քեզ սարով եմ տանելու, սարով, Մրդուզի նոր ճամփով: Այնպես որ՝ երեք ժամ հետո գառը մորթում ես:

- Մորթեմ, քե մատաղ,- խոստացավ հուզված Մովսես ապերը: Ոտքիդ տակ մորթեմ:

Շոգ առավոտ էր: Աստծո կրակ էր թափվում երկնքից: Քրտինքը հոսում էր Մովսես ապոր ճակատից, մազերի տակից և նա թաց, ճոճված թաշկինակով սրբում հա սրբում էր գլուխն ու վիզը: Արշակը գլուխը թափահարելով ծնկներին էր թափում քրտինքն ու միսթարում պապին:

- Դժվարը քաղաքից դուրս գալն է:

Ավտոմեքենաները ոչ թե ընթանում, այլ սողում էին իրար գրեթե դիպչելով, երկար կանգ էին առնում խաչմերուկներում, փնչում, ծուխ շնչում մեկը մյուսից: Տապից խեղդվող վարորդները ավտոմեքենաների թաց պատուհաններից գրգռված բղավում էին իրար վրա, մեկը մյուսից թեկուզ մեկ մետր առաջ անցնելու համար կատաղորեն պոկվում էին տեղից՝ անընդհատ վտանգելով մեքենաներն էլ, իրենց էլ: Թվում էր, թե ուզում են որևէ կերպ որևէ բանի խփել, ջարդել, փշրել մեքենաները, որպեսզի պրծնեն դրանցից էլ, շոգից էլ, ծխից էլ, քաղաքից էլ:

Մովսես ապերը հարյուր անգամ վախից այն աշխարհը գնաց ու նորից ետ եկավ, մինչև որ արդեն վերևում, շամպայն գինիների գործարանի մոտ, Արշակը պոկվեց բեռնատարներից ու թեթևորեն սլացավ առաջ:

- Ո՞ւ՛Ֆ, - հառաչեց Մովսես ապերը՝ թաց թաշկինակը պատուհանից դուրս դրոշակի նման ծածանելով:

- Հը, վերջին անգամ եմ հարցնում, թե միտքդ փոխել ես, դեռ ուշ չէ, շրջեմ ավտոն, մեր տուն տանեմ քեզ:

- Չէ,- ամենայն լրջությամբ ասաց Մովսես ապերը:

Նրա հոգում ոչ մի դառնություն չկար կոնկրետ որևէ մեկի դեմ, ոչ մեկի դեմ: Նույնիսկ՝ որդու և հարսի: Մովսես ապերը նույնիսկ ժպտաց բեղի տակ՝ հիշելով իրենց բաժանումը: Նրանք երջանիկ էին որ Մովսես ապերը, չգիտես որտեղ անցկացնելով օրը, այնքան ուշ տուն վերադարձավ, որ հյուրերն արդեն ցրվել էին: Եվ, ուրեմն, չհասցրեց ու չկարողացավ իրար խառնել բոլորին, իր սևամաշ փայլփլող սև կոստյումով չնստեց սեղանի մոտ, չկոտրեց որևէ բան և մշուշապատ խոսքերով զանազան հնարույր ճշմարտություններ չասաց բարության և ազնվության թեմաներով: Այո, այո, Մարկոս Մարգարյանն ու տիկին Սիրարփին այնքան էին ուրախացել դրանից, որ նույնիսկ մի տեսակ երախտագիտության զգացումով էին լցվել Մովսես ապոր նկատմամբ: Այնքան, որ երբ Մովսես ապերը հայտարարեց, թե առավոտ շուտ գյուղ է վերադառնալու, որդին ու հարսը նախ շատ զարմացան և ապա համարյա անկեղծորեն խնդրեցին չանել այդ բանը:

- Ախր, ինչո՞ւ, ա՛հ եր, ինչու, ինչու, ինչո՞ւ,- անընդհատ հարցնում էր մի քիչ հարբած Մարկոս Մարգարյանը, նույնիսկ իր չորս մազը մոռացած՝ ձակատը տրորելով:

- Լավ բան չէք անում, հայրիկ, գյուղում ի՞նչ կմտածեն մեր մասին: Չե՞ն ասի, թե գոնե մի քանի օր չկարողացան պահել մարդուն,- հուզված ասում էր տիկին Սիրարփին:

Մովսես ապերը բարկացավ:

- Իսկ էդ ո՞վ պետք է ասի, է՜... Բա ես կթողնե՞մ, որ մեկն ու մեկը ծպտուն հանի ձեր մասին:

- Բա ուրեմն էլ ինչո՞ւ ես գնում, ապեր,- հարցրեց Մարկոսը: -Ումի՞ց ես նեղացած՝ ինձնի՞ց, Սիրարփո՞ւց...

- Ես ոչ մեկից էլ նեղացած չեմ,- կտրեց Մովսես ապերը:

Մարկոսը հանգստացավ:

- Ուրեմն, բանից դուրս է գալիս, որ մի հարբած լակոտի պատճառով ես խոռվում քաղաքից: Բա եղա՞վ, ապեր: Մի տեղ, որ էդքան մարդ իրար գլխի հավաքվեն, հո բոլորն էլ մի տեսակ չեն կարող լինել: Հարբեցող էլ կլինի, գող ու ավազակ էլ... Հիմա ի՞նչ ես ասում, այդ մի քանիսի պատճառով քաղաքը փակե՞ն:

Մովսես ապերը նեղացավ:

- Ա՛յ տղա, էդ ինչե՞ր ես խոսում: Ես հո երեխա՞ չեմ: Էդ քո ասածներից գյուղում չկա՞ն: Նախիրն առանց քոստ մոզու կլինի՞...

- Ուրեմն, ինչո՞ւ եք սրտնեղում, ջղայնանում, Մովսես ապեր,-հարցրեց Սիրարփին:

- Աղջիկ ջան, դու կարծում ես, թե գյուղում ես չե՞մ ջղայնանում ու սրտնեղում, իմ բնավորությունն է էդպես: Որ փիս բան եմ տեսնում, պիտի մեջ ընկնեմ, պիտի ասեմ... պիտի կռիվ անեմ... ի՞նչ անեմ, ես էլ էդ տեսակ եմ սարքած: Ողորմածիկ Վարսենիկն ասում էր. դու որ մարդ չտեսնես, քեզ հետ ու քո շողքի հետ կռիվ կանես...



- Հա, բայց այդպես դժվար է ապրելը, չէ՞, ապեր,- ժպտաց Մարկոսը:

- Ինձ համար ուրիշ տեսակ ապրելն ա դժվար, տղա ջան... Թե չէ քաղափ... Քաղաքն ի՞նչ, քաղաքն էլ մի մեծ գյուղ ա, էլի, ա՞յ բալա: Էլի նույն գյուղացիք չէ՞ն ապրում: Փորձ էր, արեցի... ու տեսա, որ մեկ ա, ես առանց մեր տան ապրել չեմ կարող: Հենց որ գյուղը հիշում եմ՝ քթիս ծուխը դուրս ա գալիս... Ոնց որ անտեր թողած լինեմ.

- Ուրեմն՝ չես ուզում մնալ...- անկեղծորեն տխրած, ասաց Մարկոսը:

Մովսես ապերը վճիտ աչքերով նայեց որդուն.

- Վարսենիկը մենակ ա, տղա ջան,- ասաց նա:- Հետո՞ արդեն իմ կյանքն ապրած մարդ եմ: Իմ տարիքի մարդը էլ աշխարհը չպիտի պտտի, իր տան չորս կողմը պիտի պտտի մենակ... Գնամ բաց անեմ մեր տան դուռը... մեղք է...

Տիկին Սիրարփու շրթունքը դողաց...

- Ես հասկանում եմ հայրիկին,- ասաց նա:- Մի գրքում կարդացել եմ, որ երբ փղերը զգում են իրենց մոտալուտ մահը, որտեղ էլ լինեն, գնում, հասնում են իրենց ծննդավայրը ու... Հետաքրքիր է, չէ՞, Մարկ...

Մարկոսը գունատվեց.

- Այդ գիրքը տասնհինգ տարի առաջ մորդ պիտի տայիր, որ կարդար,- պոռթկաց նա:

Տիկին Սիրարփին շփոթվեց:

- Ինչպե՞ս... Մի՞ թե ես որևէ սխալ բան ասացի... Գրքում իսկապես այդպես էր գրված, Մարկ... Հայրի՞կ...

- Դու իմաստուն բան ասացիր, հարս ջան,- հանգիստ ասաց Մովսես ապերը:- Շատ իմաստուն բան ասացիր:

- Տեսա՞ր,- ուրախացավ Սիրարփին...

Արշակը թեթևությամբ վարում էր ավտոմեքենան ու կողքից նայում Մովսես ապոր մռայլ, կենտրոնացած դեմքին: Է՛հ, շատ է ձերացել պապը:

- Ասում եմ, ես էլ չգա՞մ գյուղ:

- Ի՞նչ,- հարցրեց Մովսես ապերը:

- Ասում եմ՝ իբր թե ե՞ս ինչ գործ ունեմ քաղաքում: Գործիք-մործիքներս վերցնեմ, գամ: Աղմուկ չկա: Հեռախոս չկա: Աշխատեմ օր ու գիշեր: Մի սենյակ ինձ կտաս, չէ՞, պապ...

- Ամբողջ տունը,- ժպտաց Մովսես ապերը:- Ճի՞շտ ես ասում: Կգա՞ս Արշակ:

- Ինչո՞ւ չպետք է գամ,- ամենայն լրջությամբ պատասխանեց Արշակը:- Մի քանի գործ ունեմ, կվերջացնեմ ու կգամ: Ձեռքերս քոր են գալիս: Ախր մաման, պապան կյանքս ուտում են՝ թե թխկթխկացնում ես, չխկչխկացնում ես, օր ու գիշեր տանում ես գլուխներս: Իսկ քեզ մոտ՝ հեքիա՞թ: Մի լավ կաշխատեմ: Համ էլ դու կողքիս կլինես, խորհուրդներ կտաս, կսովորեցնես... Ես քեզանից շատ բան ունեմ սովորելու, պապ:

- Է՛~, - բողոքեց Մովսես ապերը, թեև նրան շատ հաճելի էին թոռան խոսքերը:- Ես քեզ ինչ պետք ա սովորեցնեմ, դու տեղով մեկ պրոֆեսոր ես:

- Մի ասա, մի ասա, պապ, բա ձի՞ն,- աչքով արեց Արշակը:

- Հա՛~, դե... - ծիծաղեց Մովսես ապերը,- ուրեմն, դեռ միտդ ա՞ ...

- Բա դա մոռանալո՞ւ դաս էր,- գլուխն օրորեց Արշակը:

Որոշ ժամանակ լուռ էին:

- Բալա ջան,- դեպի թողը շրջվեց Մովսես ապերը:- Մի բան պիտի խնդրեմ... Որ գաս, էն... էն նկարն էլ կբերես հետդ... հա՞ ...

- Տատի՞, - ձևացնելով, թե միանգամից չհասկացավ, հարցրեց Արշակը:- Անպայման, պապ: Անպայման կբերեմ... Կգամ իրար հետ կապրենք, պապ:

- Հա, ցավդ տանեմ,- ժպտաց Մովսես ապերը:- Հետո որ Սաքոն գա, սնդուկս հետը կուղարկես:

Ու նորից լռեցին՝ ամեն մեկն իր մտքերի մեջ:

Մովսես ապերը գիտեր, որ թողը երբեք գյուղ չի գա: Կտնքա, կփնթփնթա, կբողոքի քաղաքից, բայց երբեք գյուղ չի գա, որովհետև չի կարող ապրել առանց այդ ծխի ու աղմուկի, առանց հեռախոսի, առանց սալապատ զուգարանի, առանց ասֆալտի ու Տուզիկ շան, առանց սրճարանի ու գունավոր տեսամագնիտոֆոնի:

Արշակն էլ գիտեր, որ պապը հիանալի գիտե, թե իրականում ինչ է մտածում ինքը, բայց չգիտեր, թե ուրիշ ինչ կարելի է անել, որ պապը չտխրի, որ մենակ չզգա իրեն, որ ապրի:

Եվ Շամշադին տանող երկար ու ձիգ ճանապարհին, նեղլիկ ավտոմեքենայի մեջ ուսերով իրար հենված, սուտ-սուտ խոսում ու ծիծաղում, խորամանկում ու մխիթարում էին իրար ծեր դարբին Մովսես ապերն ու աշխարհում նրան փոխարկելու եկած Արշակ թողը:

Որպեսզի կարողանան ապրել: